

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

30

CONSTITUTIONAL COURT OF THE REPUBLIC OF ARMENIA



ԱՐՄԱՆ ԷԴՈՒԱՐԴԻ ԴԻԼԱՆՅԱՆ
ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ

ARMAN DILANYAN
President of the RA Constitutional Court

Հարգելի՛ ընթերցող,

Պետությունների պատմության մեջ կան տարեթվեր, որոնք բնորոշում են ժամանակագրական հանգրվաններ և յուրաքանչյուր ժողովրդի՝ խտացված իմաստնությամբ ու փորձառությամբ դեպի ապագան քայլելու հաստատակամության խորհուրդն են կրում: Նման տարեթիվ է Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի հիմնադրման 30-րդ տարեդարձը, որը նշվում է 2026 թվականին: Այս հոբելյանն առիթ է արժևորելու Սահմանադրական դատարանի դերը երրորդ Հանրապետության իրավական կայացման, սահմանադրական մշակույթի արմատավորման և ժողովրդավարական ինստիտուտների ամրապնդման բարդ, բայց պատվաբեր գործում:

Սահմանադրական դատարանը ներառող դատաիրավական նոր համակարգի հիմքը դրվել է 1995 թվականի հուլիսի 5-ին՝ համապետական հանրաքվեի արդյունքում ընդունված Սահմանադրությամբ, սակայն Բարձր դատարանը պաշտոնապես սկսել է գործել 1996 թվականի փետրվարի 6-ից, երբ նշանակվեցին Սահմանադրական դատարանի անդրանիկ կազմի անդամները, և Ազգային ժողովում տեղի ունեցավ նրանց երդման հանդիսավոր արարողությունը:

Dear Reader,

In the history of states, there are dates that mark chronological milestones and embody the determination of each people to move towards the future with profound wisdom and experience. The 30th anniversary of the establishment of the Constitutional Court of the Republic of Armenia, marked in 2026, is such a date. This jubilee is an opportunity to appreciate the role of the Constitutional Court in the complex yet honourable endeavour of establishing the legal foundations of the Third Republic, fostering the constitutional culture, and strengthening democratic institutions.

The foundation for the new judicial and legal system, of which the Constitutional Court forms apart, was laid by the Constitution adopted on 5 July 1995 through a nationwide referendum; however, the High Court officially commenced its functions on 6 February 1996, when the members of the first composition of the Constitutional Court were appointed, and their solemn oath-taking ceremony was held at the National Assembly.

Այս ժամանակահատվածում Սահմանադրական դատարանի լիազորությունները բավական սահմանափակ էին, սահմանափակ էր նաև դիմող սուբյեկտների շրջանակը. ներդրված չէր, օրինակ, ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից անհատական դիմումներ ներկայացնելու ինստիտուտը, առանց որի այսօր հնարավոր չէ պատկերացնել Սահմանադրական դատարանն ու արդյունավետ սահմանադրական վերահսկողությունը:

Սակայն հենց այդ սահմանափակ լիազորությունների պայմաններում բացահայտվեցին Սահմանադրական դատարանի հսկայական նշանակությունն ու ներուժը սահմանադրական անվտանգության ու ժողովրդավարական արժեքների պաշտպանության գործում, ինչն էլ օգնեց մեր երիտասարդ պետությանը՝ հաղթահարելու անծանոթ, բայց պետականության ու ժողովրդավարության համար խիստ վտանգավոր բազմաթիվ փորձություններ ու մարտահրավերներ: Արդյունքում՝ Բարձր դատարանը զբաղեցրեց իր պատվավոր տեղը պետական իշխանության մարմինների համակարգում՝ ապացուցելով, որ Սահմանադրական դատարանի գոյությունը ժողովրդավարական պետության պայմաններում բացարձակ արժեբանական հրամայական է: Այս տարիների ընթացքում Դատարանը կերտեց սեփական ավանդույթները, ձևավորեց իր ներքին էթիկան և արհեստավարժության բարձր շեմը՝ դառնալով պետության ամենակայացած ինստիտուտներից մեկը, որի հեղինակությունը հիմնված է ոչ թե ուժի, այլ բանականության և իրավունքի վրա:

During that period, the powers of the Constitutional Court were considerably limited, as was the range of entities entitled to apply to the Court; for instance, the institution of individual applications by natural and legal persons had not yet been introduced: an institution without which it is impossible today to envisage either the Constitutional Court or effective constitutional review.

Yet it was precisely under those limited powers that the immense significance and potential of the Constitutional Court in safeguarding constitutional security and democratic values became apparent, and this helped our young state overcome numerous trials and challenges unfamiliar to it, yet extremely dangerous to statehood and democracy. As a result, the High Court took its honourable place within the system of state authorities, demonstrating that the existence of the Constitutional Court in a democratic state is an absolute axiological imperative. Over these years, the Court forged its own traditions, shaped its internal ethics and a high threshold of professional excellence, evolving into one of the State's most firmly established institutions, whose authority is predicated not upon coercion, but upon reason and law.

Այս հոբելյանի խորհուրդն ու այս գիրքը հրաշալի առիթ են հիշելու և մեր երախտիքի ու շնորհակալության խոսքն ուղղելու Սահմանադրական դատարանի անդրանիկ կազմի անդամներին և Սահմանադրական դատարանի առաջին նախագահ Գագիկ Հարությունյանին՝ սահմանադրական արդարադատության ձևավորման, կայացման ու զարգացման գործում ունեցած հսկայական ավանդի համար:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի պատմությունը արձագանքն է մեր պետականության բոլոր փորձությունների և հաղթանակների: Դատարանն անցել է սահմանադրական բարեփոխումների մի քանի փուլով՝ յուրաքանչյուր անգամ վերահիմաստավորելով իր դերակատարությունը: Անհատական դիմումների ինստիտուտի ներդրումը դարձավ այն շրջադարձային կետը, որով Դատարանի դռները լայնորեն բացվեցին յուրաքանչյուր քաղաքացու առջև՝ Դատարանը դարձնելով մարդու հիմնական իրավունքների պաշտպանության բարձրագույն երաշխավորը:

Մենք ականատեսն ու մասնակիցն ենք եղել բարդագույն իրավաքաղաքական գործընթացների, երբ միակ ապավենը և ուղեցույցը եղել է Սահմանադրությունը, երբ Դատարանն ապացուցել է, որ նույնիսկ ամենասուր քաղաքական ճգնաժամերը հնարավոր է լուծել իրավունքի միջոցով: Բարձր դատարանը կարողացել է լինել կայունության կղզյակ՝ ապահովելով պետականության անընդհատությունը նույնիսկ ամենամեծ փորձությունների ժամանակ:

The significance of this jubilee and this book provides a wonderful opportunity to recall and express our gratitude and appreciation to the members of the first composition of the Constitutional Court and to the first President of the Constitutional Court, Gagik Harutyunyan, for their immense contribution to the formation, consolidation and development of constitutional justice.

The history of the Constitutional Court of the Republic of Armenia reflects all the trials and triumphs of our statehood. The Court has undergone several stages of constitutional reforms, each time reassessing its role. The introduction of the institution of individual applications became the turning point that widely opened the doors of the Court to every citizen, making the Court the supreme guarantor of the protection of fundamental human rights.

We have witnessed and participated in the most complex legal and political processes, wherein the Constitution has been the sole reliance and guidance, and where the Court has affirmed that even the most acute political crises can be resolved through law. The High Court has managed to serve as an island of stability, ensuring the continuity of statehood even in times of the greatest trials.

Սահմանադրական դատարանը երբեք չի եղել սոսկ դատական ատյան. այն պետականության իրավական խիղճն է և Սահմանադրության արթուն պահապանը: Իրավական պետության կայացման ճանապարհին Սահմանադրական դատարանը հանդես է եկել որպես հիմնասյուն, որի վրա խարսխվել է իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը: Որպես զսպումների և հակակշիռների համակարգի գերագույն արբիտր՝ Սահմանադրական դատարանի առաքելությունն է ապահովել, որ իշխանության երեք ճյուղերի փոխազդեցությունը չվերածվի մրցավազքի, այլ մնա փոխլրացման և փոխադարձ հարգանքի տիրույթում:

Անցած երեք տասնամյակների ընթացքում Սահմանադրական դատարանը դարձել է նաև հայկական սահմանադրաիրավական մշակույթի դարբնոց: Այն չի սահմանափակվել լոկ իրավական նորմերի մեկնաբանմամբ, այլ կերտել է սահմանադրական արժեբանություն: Դատարանն իր մեկնաբանություններով կենդանի շունչ է հաղորդել Սահմանադրությանը՝ հասարակական փոփոխություններին համընթաց՝ միաժամանակ ապահովելով, որ այն չկորցնի իր հիմնարար իմաստը: Դատարանի յուրաքանչյուր որոշում նոր շերտ է ավելացրել մեր պետականության իրավական հիշողության մեջ, որը հուշում է հանրային իշխանությանը գործել պատասխանատվությամբ, իսկ քաղաքացուն՝ տիրոջ իրավունքով պահանջել իր ազատությունների հարգումը:

The Constitutional Court has never been merely a judicial instance; it is the legal conscience of statehood and the vigilant guardian of the Constitution. On the path toward the establishment of a rule of law state, the Constitutional Court has acted as a cornerstone upon which the principle of the separation and balance of powers was anchored. As the supreme arbiter within the system of checks and balances, the mission of the Constitutional Court is to ensure that the interaction among the three branches of government does not turn into rivalry, but remains within the realm of complementarity and mutual respect.

Over the past three decades, the Constitutional Court has also become a forge of Armenian constitutional and legal culture. It has not confined itself merely to interpreting legal norms, but has shaped constitutional axiology. Through its interpretations, the Court has breathed living spirit into the Constitution, keeping pace with societal changes while ensuring that the Constitution does not lose its fundamental meaning. Each decision of the Court has added a new layer to the legal memory of our statehood, reminding public authorities to act responsibly and citizens, as holders of rights, to demand respect for their freedoms.

Այսօր ՀՀ Սահմանադրական դատարանը հանդես է գալիս նաև որպես համաշխարհային սահմանադրական ընտանիքի լիիրավ և հարգված անդամ: Մեր լայն միջազգային կապերը՝ Վենետիկի հանձնաժողովից մինչև Եվրոպական սահմանադրական դատարանների համաժողով, վկայում են, որ հայկական սահմանադրական միտքը համահունչ է համամարդկային իրավական չափանիշներին:

Երեսուն տարիների ընթացքում Դատարանը կառուցել է կամուրջներ, որոնք մեզ միացնում են համաշխարհային իրավական քաղաքակրթությանը: Դատարանի միջազգային հեղինակությունը գեթ արձանագրում չէ. այն հայկական սահմանադրական մտքի մրցունակության և արդիականության վկայությունն է:

Սահմանադրական դատարանի համագործակցությունը Եվրոպայի խորհրդի, Վենետիկի հանձնաժողովի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և մյուս գործընկերների հետ հիմնված է ոչ թե լոկ ընդօրինակման, այլ արժեքավոր երկխոսության վրա: Սահմանադրական դատարանը ոչ միայն ներդրել է եվրոպական լավագույն չափանիշները ՀՀ ներպետական իրավունքում, այլև իր որոշումներով հարստացրել է ընդհանուր սահմանադրական ժառանգությունը: Սահմանադրական դատարանների եվրոպական և համաշխարհային համաժողովներում Հայաստանի ակտիվ ներկայությունը փաստում է մեկ ճշմարտություն. մենք խոսում ենք իրավունքի համընդհանուր լեզվով՝ միաժամանակ պահպանելով մեր ազգային ինքնության ինքնատիպությունը:

Today, the RA Constitutional Court also stands as a full and respected member of the global constitutional family. Our extensive international ties – from the Venice Commission to the Conference of European Constitutional Courts – testify that Armenian constitutional thought is in harmony with universal human legal standards.

Over these thirty years, the Court has built bridges that connect us to global legal civilization. The Court's international standing is not merely a statement; it is evidence of the competitiveness and modernity of Armenian constitutional thought.

The cooperation of the Constitutional Court with the Council of Europe, the Venice Commission, the European Court of Human Rights, and other partners is based not merely on imitation, but on a dialogue of values. The Constitutional Court has not only incorporated the best European standards into Armenian domestic law, but has also enriched the common constitutional heritage through its decisions.

Armenia's active presence at the European and world conferences of constitutional courts bears witness to one truth: we speak the universal language of law while preserving the distinctiveness of our national identity.

Միջազգային լայն կապերը ծառայում են որպես հավելյալ երաշխիք մեր երկրում ժողովրդավարության անշրջելիության համար: ՀՀ Սահմանադրական դատարանը դարձել է միջազգային իրավական հանրույթի վստահելի գործընկեր, որի փորձը և կարծիքը հաշվի են առնվում ամենաբարձր ամբիոններից: Սա հպարտության առիթ է մեր պետության համար, և միաժամանակ մեծ պատասխանատվություն՝ մնալու այդ բարձունքում:

Անցյալի փորձն ու ներկայի ձեռքբերումները հիմք են ապագայի թռիչքի համար: Մուտք գործելով չորրորդ տասնամյակ՝ Սահմանադրական դատարանն իր առջև դնում է նոր, ավելի հավակնոտ նպատակներ: Մենք կոչված ենք պատասխանելու 21-րդ դարի մարտահրավերներին՝ թվային միջավայրում մարդու իրավունքներից մինչև էկոլոգիական անվտանգություն՝ միշտ հավատարիմ մնալով Սահմանադրության հիմնարար սկզբունքներին: Քաղաքացին պետք է զգա, որ Սահմանադրական դատարանն իր կողքին է՝ պաշտպանելու իրեն նոր դարաշրջանի վտանգներից՝ լինեն դրանք թվային տիրույթում, թե կենսաէթիկայի ոլորտում:

Մեր տեսլականը պարզ է և հստակ. նպաստել այնպիսի ինքնիշխան Հայաստանի կերտմանը, որտեղ մարդը բարձրագույն արժեք է, իսկ իրավունքի գերակայությունը, իրական ժողովրդավարությունն ու ժողովրդավարական սկզբունքները չունեն այլընտրանք, որտեղ Սահմանադրությունը ոչ թե

The extensive international ties serve as an additional guarantee of the irreversibility of democracy in our country. The RA Constitutional Court has become a reliable partner of the international legal community, whose experience and views are taken into account at the highest platforms. This is a source of pride for our State and, at the same time, a great responsibility to remain at this height.

The experience of the past and the achievements of the present are the foundation for a leap into the future. Entering its fourth decade, the Constitutional Court sets before itself new and more ambitious goals. We are called upon to respond to the challenges of the 21st century – from human rights in the digital realm to environmental security – while remaining steadfastly faithful to the fundamental principles of the Constitution. Citizens must feel that the Constitutional Court stands by their side, protecting them from the dangers of the new era, whether in the digital realm or in the field of bioethics.

Our vision is clear and distinct: to contribute to building a sovereign Armenia where the human being is the highest value, and where the rule of law, genuine democracy, and democratic principles have no alternative; where the Constitution is not a book, but an everyday guide for the organization of public and

գիրք է, այլ հանրային և սոցիալական կյանքի կազմակերպման ամենօրյա ուղեցույց: Մեր նպատակն է սահմանադրական արդարադատությունը դարձնել ավելի թափանցիկ, հասանելի և արդյունավետ՝ էլ ավելի ամրապնդելով հանրային վստահությունը Բարձր դատարանի նկատմամբ:

Սահմանադրական դատարանը կշարունակի լինել այն անսասան հաստատությունը, որը երաշխավորում է, որ Հայաստանի Հանրապետության զարգացման ցանկացած ուղի անցնելու է բացառապես իրավունքի հունով:

Հարգելի՛ գործընկերներ և հայրենակիցներ,

Այս հուշագիրքը հարգանքի փոորք է բոլոր նրանց, ովքեր կանգնած են եղել Սահմանադրական դատարանի հիմնադրման ակունքներում և այսօր շարունակում են այդ վսեմական գործը:

30 տարին միայն սկիզբն է. մեր ուղին անշրջելի է, մեր կամքը՝ անսասան, իսկ մեր նպատակը՝ սահմանադրական Հայաստանը:

Շնորհավորում եմ բոլորիս այս նշանակալի հոբելյանի առթիվ:

Արման Դիլանյան

social life. Our goal is to make constitutional justice more transparent, accessible, and effective, further strengthening public confidence in the High Court.

The Constitutional Court shall continue to be the steadfast institution which guarantees that any course of development of the Republic of Armenia shall proceed exclusively along the path of law.

Dear colleagues and compatriots,

This commemorative book is a tribute of respect to all those who stood at the origins of the establishment of the Constitutional Court and to all those who continue that noble work.

Thirty years is only the beginning: our path is irreversible, our will is unwavering, and our goal is a constitutional Armenia.

I congratulate us all on this significant jubilee.

Arman Dilanyan



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

ABOUT THE CONSTITUTIONAL COURT OF THE REPUBLIC OF ARMENIA

Սահմանադրական դատարանը Սահմանադրի կամքի պահապանն է:

Նրա առաքելությունն է անշեղորեն հետևել Սահմանադրությամբ ամրագրված սահմանադրի կամքի պահպանմանը և կանխել դրանից ցանկացած շեղում:

Սահմանադրությունը ստատիկ փաստաթուղթ չէ. այն ապրող և զարգացող իրավական իրողություն է, որի բովանդակությունն ու կարգավորիչ ներուժը բացահայտվում և զարգանում են նաև Սահմանադրական դատարանի որոշումների և դրանցում արտահայտված իրավական դիրքորոշումների միջոցով:

Սահմանադրական դատարանը բացառիկ տեղ է զբաղեցնում Հայաստանի Հանրապետության սահմանադրաիրավական համակարգում: Լինելով դատական իշխանության մաս՝ այն իր սահմանադրական առաքելությամբ և գործառույթներով առանձնանում է ընդհանուր իրավասության ու մասնագիտացված դատարանների համակարգից և սահմանադրական վերահսկողություն է իրականացնում հանրային իշխանության ամբողջ համակարգի, ներառյալ՝ դատական իշխանության, ինչպես նաև ***իր իսկ նկատմամբ:***

Դատական համակարգում Սահմանադրական դատարանը հանդես է գալիս որպես սահմանադրական վերահսկողության բարձրագույն ատյան՝ ապահովելով իրավական համակարգի

The Constitutional Court is the guardian of the will of the Constituent.

Its mission is to ensure unwavering adherence to the will of the Constituent as prescribed by the Constitution and to prevent any deviation therefrom.

The Constitution is not a static document; it is a living and evolving legal reality, and its content and regulatory potential are revealed and developed through the decisions of the Constitutional Court and the legal positions expressed therein.

The Constitutional Court occupies a unique position in the constitutional legal system of the Republic of Armenia. As part of the judiciary, it is distinguished from the system of courts of general jurisdiction and specialized courts by virtue of its constitutional mission and functions, and it exercises constitutional review over the entire system of public authority, including the judiciary, ***as well as over itself***.

Within the judicial system, the Constitutional Court acts as the highest body of constitutional review, ensuring the coherence of the legal system with the Constitution. Its primary function is not the resolution

ներդաշնակությունը Սահմանադրությանը: Նրա հիմնական գործառույթը ոչ թե իրավական վեճերի լուծումն է՝ այդ հասկացության դասական իմաստով, այլ իրավակարգավորումների սահմանադրական որակի վերահսկումը: Այլ կերպ ասած՝ Սահմանադրական դատարանը դատում է ոչ թե մարդկանց, այլ իրավական ակտերը: Իր որոշումներով Սահմանադրական դատարանն ուրվագծում է հանրային իշխանության բոլոր օղակների գործունեության սահմանադրաիրավական շրջանակները:

Սահմանադրական դատարանի առանձնահատուկ դերակատարումը դրսևորվում է նաև գործերի քննության շրջանակներում ***Սահմանադրության համապատասխան նորմերի պաշտոնական մեկնաբանություն իրականացնելու բացառիկ իրավասությամբ:*** Նրա իրավական դիրքորոշումներն են ձևավորում այն սահմանադրական չափանիշները, որոնցով պարտավոր են առաջնորդվել հանրային իշխանության բոլոր մարմինները թե՛ իրավաստեղծ և թե՛ իրավակիրառ գործունեություն իրականացնելիս, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձինք:

Սահմանադիրը Սահմանադրական դատարանին վերապահել է նաև յուրահատուկ սահմանադրական իրավապաշտպան առաքելություն: Դատարանը հանդես է գալիս որպես մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների, իրավական պետության ու ժողովրդավարության երաշխավոր՝ իր որոշումներով ուրվագծելով մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության

of legal disputes in the classical sense of that notion, but rather the review of the constitutional quality of legal regulations. In other words, the Constitutional Court adjudicates not people, but legal acts. Through its decisions, the Constitutional Court outlines the constitutional legal framework governing the activities of all levels of public authority.

The distinctive role of the Constitutional Court is also manifested in ***its exclusive power to provide the official interpretation of the relevant norms of the Constitution*** within the framework of case consideration. Its legal positions establish the constitutional standards by which all public authorities, in both law-making and law-enforcement activities, as well as natural and legal persons, are required to be guided.

The Constituent has also entrusted the Constitutional Court with a unique constitutional mission of safeguarding constitutional rights. The Court acts as the guarantor of fundamental human rights and freedoms, the rule of law state, and democracy by outlining, through its decisions, the constitutional legal boundaries of the protection of human rights and freedoms, facilitating the elimination of the

սահմանադրաիրավական սահմանները, նպաստելով հակասահմանադրական օրենսդրության կիրառման հետևանքների վերացմանը և կանխարգելելով մարդու իրավունքների՝ Սահմանադրությամբ երաշխավորված պաշտպանության շրջանակներից ցանկացած անթույլատրելի շեղում:

Սահմանադիրը Սահմանադրական դատարանին օժտել է նաև սահմանադրական մարմինների միջև նրանց սահմանադրական լիազորությունների իրականացման առնչությամբ առաջացող վեճերը լուծող անկախ արբիտրի կարգավիճակով: Այդ իրավասության շրջանակում Սահմանադրական դատարանը մեկնաբանում է Սահմանադրությունը, հստակեցնում սահմանադրական մարմինների իրավասությունների սահմաններն ու դրանց փոխհարաբերությունների բնույթը, ինչպես նաև ապահովում է իշխանության թևերի միջև սահմանադրական հավասարակշռությունն ու բնականոն գործունեությունը:



consequences of the application of unconstitutional legislation, and preventing any impermissible deviation from the scope of protection of human rights guaranteed by the Constitution.

The Constituent has further vested the Constitutional Court with the status of an independent arbiter to resolve disputes arising between constitutional bodies in the exercise of their constitutional powers. Within the scope of this power, the Constitutional Court interprets the Constitution, clarifies the limits of the powers of constitutional bodies and the nature of their interrelationship, and ensures the constitutional balance and the proper functioning of the branches of power.

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

HISTORY OF THE ESTABLISHMENT AND DEVELOPMENT OF THE CONSTITUTIONAL COURT

1990



1990 թվականի նոյեմբերի 5-ին ՀՀ Սահմանադրության մշակման նպատակով ստեղծվեց սահմանադրական հանձնաժողով:

1995



1995 թվականի հուլիսի 5-ին համաժողովրդական հանրաքվեի արդյունքում ընդունվեց ՀՀ Սահմանադրությունը: Նույն թվականի նոյեմբերի 20-ին ՀՀ Ազգային ժողովն ընդունեց ՀՀ օրենքը «Սահմանադրական դատարանի մասին»:

1996



1996 թվականի փետրվարի 6-ին ամբողջությամբ կազմավորվեց և սկսեց գործել ՀՀ սահմանադրական դատարանը: Նույն թվականի մարտի 13-ին Սահմանադրական դատարանը կայացրեց իր առաջին՝ ՍԴՈ-1 որոշումը:

2005



2005 թվականի նոյեմբերի 27-ի հանրաքվեի արդյունքում ընդունվեցին ՀՀ Սահմանադրության փոփոխությունները, որոնցով էականորեն ընդլայնվեցին Սահմանադրական դատարանի լիազորությունները, և ներդրվեց անհատական սահմանադրական գանգատի ինստիտուտը:

2006



2006 թվականի հունիսի 1-ին Սահմանադրական նոր կարգավորումները կենսագործելու նպատակով ընդունվեց «Սահմանադրական դատարանի մասին» նոր օրենքը, իսկ այնուհետև՝ Դատարանի նոր կանոնակարգը:

2015



2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված Սահմանադրական փոփոխությունների հիման վրա ընդլայնվեց Սահմանադրական դատարանի իրավազորության շրջանակը:

2018



2018 թվականի ապրիլի 9-ին ամբողջությամբ ուժի մեջ մտավ 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների՝ դատական իշխանությանը վերաբերող 7-րդ գլուխը:

2020–2024



2020 թվականի հունիսի 22-ին ՀՀ Ազգային ժողովն ընդունեց ՀՀ Սահմանադրության 213-րդ հոդվածի փոփոխությունները, որոնք վերաբերելի էին Սահմանադրական դատարանին:

2020-2024 թվականներին ամբողջ ծավալով կյանքի կոչվեցին Սահմանադրական դատարանի կազմավորման վերաբերյալ Սահմանադրության 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը:

2026



2026 թվականին Սահմանադրական դատարանը նշում է իր հիմնադրման 30-ամյակը՝ հավատարիմ մնալով իր առաքելությանը՝ ամրապնդելու սահմանադրականությունը և իրավունքի գերակայությունը Հայաստանի Հանրապետությունում:



ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

FORMATION OF THE CONSTITUTIONAL SYSTEM AND THE PRECONDITIONS FOR THE INTRODUCTION OF THE INSTITUTION OF CONSTITUTIONAL JUSTICE

1990 — 1996 — 2005 — 2015 — 2026

Հայաստանի Հանրապետության անկախացման գործընթացին զուգահեռ սկսվեցին ազգային սահմանադրահիրավական մոդելի ձևավորման և նոր պետական ինստիտուտների ստեղծման աշխատանքները:

1991 թվականի սեպտեմբերի 25-ին ընդունվեց «Անկախ պետականության հիմնադրույթների մասին» ՀՀ սահմանադրական օրենքը, որի 16-րդ հոդվածով սահմանվեց. «Մինչև Հայաստանի Հանրապետության նոր սահմանադրության ընդունումը գործող սահմանադրությունն ու օրենքները գործում են այնքանով, որքանով դրանք չեն հակասում սույն օրենքին և «Հայաստանի անկախության մասին» հռչակագրի հիման վրա ընդունված օրենսդրական ակտերին»:

Դեռևս 1990 թվականի նոյեմբերի 5-ին նորանկախ Հայաստանի Սահմանադրության մշակման նպատակով ստեղծվեց սահմանադրական հանձնաժողով, որը, սակայն, իր առաջին նիստը հրավիրեց միայն 1992 թվականի հոկտեմբերի 15-ին*:

1978 թվականի ՀԽՍՀ Սահմանադրությունը սահմանադրական արդարադատության մասնագիտացված մարմին որպես այդպիսին չէր նախատեսում: Միայն 1989 թվականի դեկտեմբերի 23-ին

*Հ. Խաչատրյան, «Հայաստանի Հանրապետության առաջին Սահմանադրությունը»: Եր., 1997 թ., էջեր 17-18:

In parallel with the independence process of the Republic of Armenia, efforts commenced to develop a national constitutional legal model and to establish new state institutions.

On 25 September 1991, the Constitutional Law of the Republic of Armenia “On the Fundamental Principles of Independent Statehood” was adopted, and Article 16 thereof provided that: “Until the adoption of the new Constitution of the Republic of Armenia, the existing Constitution and laws shall remain in force insofar as they do not contradict this Law and the legislative acts adopted on the basis of the Declaration on the Independence of Armenia”.

As early as 5 November 1990, a Constitutional Commission was established to draft the Constitution of the newly independent Armenia; however, it convened its first session only on 15 October 1992*.

The 1978 Constitution of the Armenian SSR did not provide for a specialized body of constitutional justice, *per se*. It was only on 23 December 1989 that the Law “On Constitutional Supervision in the

*H. Khachatryan, "The First Constitution of the Republic of Armenia". Yerevan, 1997, pp. 17-18.

ընդունվեց օրենք «ԽՍՀՄ-ում սահմանադրական հսկողության մասին», որին համապատասխան՝ փոփոխություններ ու լրացումներ կատարվեցին ՀԽՍՀ 1989 թվականի Սահմանադրության մեջ: Այս փոփոխությունների համաձայն՝ նախատեսվում էր, որ Գերագույն խորհուրդն ընտրում է սահմանադրական հսկողության կոմիտե՝ 10 տարի ժամկետով: Այդ կոմիտեն, սակայն, այդպես էլ չստեղծվեց:

Նորանկախ Հայաստանի Հանրապետության իրավակարգի ձևավորումը պահանջում էր նոր ինստիտուցիոնալ համակարգ՝ հիմնված իշխանությունների տարանջատման, մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանության և Սահմանադրության գերակայության սկզբունքների վրա: Նոր Սահմանադրության մշակման ընթացքում քննարկվում էին սահմանադրական վերահսկողության տարբեր մոդելներ, և ի վերջո ընտրվեց առանձին մասնագիտացված սահմանադրական արդարադատության մարմնի ստեղծման՝ մայրցամաքային համակարգի մոդելին բնորոշ լուծումը:

1995 թվականի հուլիսի 5-ին համաժողովրդական հանրաքվեով ընդունված ՀՀ Սահմանադրության 6-րդ գլխով Սահմանադիրն ազդարարեց Սահմանադրական դատարանի՝ որպես հայաստանյան դատական իշխանության ինքնուրույն և անկախ մարմնի ստեղծումը՝ նրան վերապահելով սահմանադրական արդարադատություն իրականացնելու բացառիկ առաքելություն:

USSR” was adopted, pursuant to which amendments and supplements were introduced to the 1989 Constitution of the Armenian SSR. Under those amendments, the Supreme Council was to elect a Constitutional Supervision Committee for a term of ten years. However, that Committee was never established.

The formation of the legal order of the newly independent Republic of Armenia required a new institutional framework based on the principles of the separation of powers, the protection of fundamental human rights and freedoms, and the supremacy of the Constitution. During the drafting of the new Constitution, various models of constitutional review were considered, and ultimately the Continental European model was chosen, providing for the establishment of a separate specialized body of constitutional justice.

By Chapter 6 of the RA Constitution, adopted by nationwide referendum on 5 July 1995, the Constituent proclaimed the establishment of the Constitutional Court as an independent and autonomous body of the judiciary of Armenia, entrusting it with the exclusive mission of administering constitutional justice.

1995 թվականի Սահմանադրությամբ նախատեսվեց ինն անդամից կազմված սահմանադրական դատարանի ձևավորումը, որի անդամներից հինգին նշանակում էր Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը, իսկ չորսին՝ Հայաստանի Հանրապետության Նախագահը: Սահմանադրական դատարանի նախագահը Ազգային ժողովի նախագահի առաջարկությամբ նշանակվում էր Ազգային ժողովի կողմից, իսկ Սահմանադրական դատարանի կազմավորումից հետո երեսնօրյա ժամկետում Ազգային ժողովի կողմից Սահմանադրական դատարանի նախագահ չնշանակվելու դեպքում վերջինս նշանակվում էր Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից:

Սահմանադրությամբ Սահմանադրական դատարանին վերապահվեցին մի շարք առանցքային լիազորություններ՝ որոշել օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, կարգադրությունների, կառավարության որոշումների համապատասխանությունը Սահմանադրությանը, մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշել դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը (նախնական սահմանադրական վերահսկողություն), լուծել հանրաքվեների, Հանրապետության Նախագահի և պատգամավորների ընտրությունների արդյունքների հետ կապված վեճերը, անհաղթահարելի կամ վերացած ճանաչել Հանրապետության Նախագահի թեկնածուի համար

The 1995 Constitution provided for the formation of a Constitutional Court composed of nine members, five of whom were appointed by the National Assembly of the Republic of Armenia and four by the President of the Republic of Armenia. The President of the Constitutional Court was appointed by the National Assembly upon the nomination of the Chairperson of the National Assembly. If, within thirty days following the formation of the Constitutional Court, the National Assembly failed to appoint the President of the Constitutional Court, the appointment was to be made by the President of the Republic of Armenia.

The Constitution vested the Constitutional Court with a number of key powers, including determining the conformity with the Constitution of laws, decisions of the National Assembly, decrees and executive orders of the President of the Republic, and decisions of the Government; determining, *prior to* the ratification of an international treaty, whether the obligations contained therein complied with the Constitution (preliminary constitutional review); resolving disputes relating to the results of referenda and the elections of the President of the Republic and deputies; declaring obstacles preventing a candidate

առաջացած խոչընդոտները, եզրակացություն տրամադրել Հանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության, Հանրապետության նախագահի կողմից ռազմական դրություն հայտարարելու կամ սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգի դեպքում նախատեսված միջոցառումների, Հանրապետության Նախագահի՝ իր լիազորությունների կատարման անհնարինության, Սահմանադրական դատարանի անդամի լիազորությունները դադարեցնելու, նրան կալանավորելու, դատական կարգով վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկելու մասին, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում որոշում կայացնել կուսակցության գործունեությունը կասեցնելու կամ արգելելու մասին:


Սահմանադիրը դրեց Սահմանադրական դատարանի ինստիտուցիոնալ գործունեության հիմքերը. դրա գործունեության համար անհրաժեշտ էին համապատասխան օրենսդրական կարգավորումներ, որոնք թույլ կտային Սահմանադրական դատարանին սկսել իր սահմանադրական առաքելության իրականացումը: 1995 թվականի նոյեմբերի 20-ին Ազգային ժողովն ընդունեց «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքը, որն ստորագրվեց 1995 թվականի դեկտեմբերի 6-ին և ուժի մեջ մտավ դեկտեմբերի 15-ին՝ ամբողջացնելով նորաստեղծ սահմանադրական մարմնի գործունեության օրենսդրական հիմքերը:

for President of the Republic to be insurmountable or removed; as well as issuing opinions regarding the existence of grounds for the removal of the President of the Republic from office; the declaration of martial law by the President of the Republic or the measures envisaged in the event of an immediate threat to the constitutional order; the inability of the President of the Republic to exercise their own powers; the termination of the powers of a member of the Constitutional Court, their detention, or the institution of administrative or criminal proceedings against such member by judicial procedure; as well as deciding, in cases prescribed by law, on the suspension or prohibition of the activities of a political party.

The Constituent laid the institutional foundations for the functioning of the Constitutional Court. To commence the exercise of its constitutional mission, the Court needed to adopt the relevant legislative framework governing its own activities. On 20 November 1995, the National Assembly adopted the Law of the Republic of Armenia “On the Constitutional Court”, which was signed on 6 December 1995 and entered into force on 15 December 1995, thereby completing the legislative framework for the functioning of the newly established constitutional body.

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՅԱՑՈՒՄԸ

THE FORMATION AND INSTITUTIONAL CONSOLIDATION OF THE CONSTITUTIONAL COURT


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ 1996 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 4-ԻՆ ԿՆՔՎԱԾ ԿՈՆՈՒԹՅՈՒՑԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԳՈՐԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան, 13 մարտի 1996թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը, նախագահությամբ՝ դատարանի նախագահ գ. Հարությունյանի, կազմով՝ սահմանադրական դատարանի անդամներ Ա. Գյուլումյանի, Հ. Խալաթյանյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Վ. Պողոսյանի, Վ. Սահակյանի, Մ. Սկսկանի,

մասնակցությամբ՝ սահմանադրական դատարան ղեկավարող Վ. Ավետիսյանի, դեկավարվելով Հայաստանի Հանրապետության 100 հոդվածի 2-րդ կետով, 101 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով և 56 հոդվածով, հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 101 հոդվածի 1-ին կետով և 102 հոդվածով, "Սահմանադրական վարույթի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 5 հոդվածի 2-րդ կետով, 25 հոդվածի 1-ին կետով և 56 հոդվածով, ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր ներկայացուցիչ Ա. Ղազարյանի մասնակցությամբ, դատարանի նիստում քննեց "Հայաստանի Հանրապետության և Միջազգային զարգացման ընկերակցության միջև 1996 թվականի մարտի 4-ին կնքված կառուցվածքային բարեփոխումների վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների" հայտնաբերման Սահմանադրությանը հակասող մասին" գործը:

Գործի քննության ժամը է հանդիսացել Հայաստանի Հանրապետության և Միջազգային զարգացման ընկերակցության միջև կնքված կառուցվածքային բարեփոխումների վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Լսելով Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի անդամ Վ. Հովհաննիսյանի հաղորդումը, Հայաստանի Հանրապետության Նախագահի ներկայացուցիչ Վ. Ավետիսյանի բացատրությունը, հետազոտելով Հայաստանի Հանրապետության վարչապետի լիազորությունները հավաստող փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը

Հայաստանի Հանրապետության և Միջազգային զարգացման ընկերակցության միջև կատարվելիք վարկային հաճախադրման մասին համաձայնագիրը կնքվել է 1996 թվականի մարտի 4-ին, Վաշինգտոնում:

Համաձայնագրով նախատեսվում է մոտ 59 միլիոն ԱՄՆ-ի դոլար:

Կատարվելիք բարեփոխումների վարկային հաճախադրման ծրագրի գումարը կազմում է 40 միլիոն հիսուն հազար ԱՄՆ-ի դոլարին, համաձայնագրի 2.07 բաժնում, հաճախադրի տրամադրում է արդեն իսկ բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետությանը տրամադրված վարկի գումարը կազմում է մոտ 59 միլիոն ԱՄՆ-ի դոլար:

Վարկը տրամադրված է ամենօրյա, 35 տարի ժամկետով 1996-2030 թվականներ, տասը տարի արտոնյալ ժամկետով՝ մարումը սկսելով 2006 թվականից:

Վարկի մարման ժամկետները և կարգը նախատեսված են համաձայնագրի 2.07 բաժնում, համաձայն որի 2006-2015 թվականներին, ըստ կիսամյակների, կպահանջվի տարեկան մեկ տոկոսի չափով, 2015-2030 թվականներին՝ տրամադրված վարկի 2.5 տոկոսի չափով:

Կատարվելիք բարեփոխումների համար որոշակի պայմաններով, որոնք շարադրված են համաձայնագրի II և III հոդվածներում շարադրված են վարկի գումարների տրման, որոնց մարման հետ կապված պայմանները և ծախսերը, ինչպես նաև նշված են վարկային պարտավորությունների չկատարման դեպքում կիրառվող հարաբերությունները:

Ելնելով գործի քննության արդյունքներից և դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածով, "Սահմանադրական դատարանի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 5 հոդվածի 2-րդ կետով, 67 և 69 հոդվածներով, սահմանադրական դատարանը ՈՐՈՇԵՑ.

1. Հայաստանի Հանրապետության և Միջազգային զարգացման ընկերակցության միջև 1996 թվականի մարտի 4-ին կնքված կառուցվածքային բարեփոխումների վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

13 մարտի 1996 թվականի
ՍԴՈ-1

1996 թվականի փետրվարին տեղի ունեցան Սահմանադրական դատարանի անդրանիկ կազմի անդամների նշանակումները: Փետրվարի 5-ին Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերով Սահմանադրական դատարանի անդամներ նշանակվեցին Ալվինա Գյուլումյանը, Հրանտ Նազարյանը, Միքայել Սևյանը և Վոլոդյա Հովհաննիսյանը: Փետրվարի 6-ին ՀՀ Ազգային ժողովի որոշումներով ՀՀ Սահմանադրական դատարանի անդամներ նշանակվեցին Գագիկ Հարությունյանը, Վահե Ստեփանյանը, Հենրիկ Խաչատրյանը, Վլադիմիր Սահակյանը և Վալերի Պողոսյանը:

Նույն օրը ՀՀ Ազգային ժողովում տեղի ունեցավ Սահմանադրական դատարանի նորանշանակ անդամների երդման արարողությունը, որից հետո Ազգային ժողովի որոշմամբ ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ նշանակվեց Գագիկ Հարությունյանը, որը մինչ այդ զբաղեցնում էր Հայաստանի Հանրապետության փոխնախագահի պաշտոնը:

Այսպիսով Սահմանադրական դատարանն ամբողջությամբ ձևավորվեց և սկսեց գործել 1996 թվականի փետրվարի 6-ից:

«Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 7-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ Կառավարությունը, սահմանադրական դատարանին՝ նրա բնականոն գործունեության ապահովման համար, պետք է հատկացներ առանձին շենք և անհրաժեշտ գույք: 1996 թվականին Երևանի Բաղրամյան պողոտա 10 հասցեում գտնվող վարչական շենքը տրամադրվեց ՀՀ Սահմանադրական դատարանին և դարձավ նրա մշտական նստավայրը:

Ընդ որում՝ ուշագրավ է այն փաստը, որ Սահմանադրական դատարանի գործունեության առաջին ամիսներին այդ նույն շենքում էր տեղակայված նաև ՀՀ արտաքին գործերի նախարարությունը:

1996 թվականի մարտի 13-ին Սահմանադրական դատարանը կայացրեց իր առաջին՝ ՍԴՈ-1 որոշումը, որով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանող ճանաչվեցին Հայաստանի Հանրապետության և Միջազգային զարգացման ընկերակցության միջև 1996 թվականի մարտի 4-ին կնքված կառուցվածքային բարեփոխումների վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները:

Թեև 1995 թվականի հուլիսի 5-ի Սահմանադրությամբ, ինչպես արդեն իսկ նշվեց, Սահմանադրական դատարանին վերապահված էին լայն լիազորություններ, այդուհանդերձ, Դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների սահմանափակ շրջանակը թույլ չէր տալիս վերջինիս ամբողջությամբ իրականացնել իր ողջ սահմանադրահիրավական ներուժը: Մայր խմբագրությամբ Սահմանադրությունը նախատեսում էր, որ ՀՀ Սահմանադրական դատարան կարող են դիմել

In February 1996, the members of the first composition of the Constitutional Court were appointed. On 5 February, by Decrees of the President of the Republic of Armenia, Alvina Gyulumyan, Hrant Nazaryan, Michael Sevyan, and Volodya Hovhannisyan were appointed as Members of the Constitutional Court. On 6 February, by Decisions of the RA National Assembly, Gagik Harutyunyan, Vahe Stepanyan, Henrik Khachatryan, Vladimir Sahakyan, and Valery Poghosyan were appointed as Members of the Constitutional Court.

On the same day, the oath-taking ceremony of the newly appointed members of the Constitutional Court took place at the National Assembly of the Republic of Armenia, following which Gagik Harutyunyan, who had previously held the office of Vice-President of the Republic of Armenia, was appointed President of the Constitutional Court by decision of the National Assembly.

Thus, the Constitutional Court was fully constituted and commenced its activities on 6 February 1996.

Pursuant to the requirements of Article 7 of the Law “On the Constitutional Court”, the Government was required to allocate to the Constitutional Court a separate building and the necessary property to ensure its proper functioning. In 1996, the administrative building located at 10 Baghramyan Avenue, Yerevan, was allocated to the Constitutional Court and became its permanent seat.

It is noteworthy that during the first months of its activities, the Constitutional Court shared that building with the Ministry of Foreign Affairs of the Republic of Armenia.

On 13 March 1996, the Constitutional Court delivered its first decision, Decision DCC-1, whereby the obligations prescribed by the Structural Adjustment Credit Agreement, signed on 4 March 1996 between the Republic of Armenia and the International Development Association, were declared to conform to the Constitution of the Republic of Armenia.

Although, as already noted, the Constitution of 5 July 1995 vested the Constitutional Court with broad powers, nevertheless, the limited circle of subjects entitled to apply to the Court did not allow the Court to fully realise its constitutional legal potential. In its original wording, the Constitution provided that applications to the Constitutional Court could be lodged by the President of the Republic, at least one third of the deputies (44 deputies), candidates for the office of President of the Republic and

Հանրապետության Նախագահը, պատգամավորների առնվազն մեկ երրորդը (44 պատգամավոր), Հանրապետության Նախագահի և պատգամավորության թեկնածուները՝ ընտրությունների արդյունքների հետ կապված վեճերով, ինչպես նաև ՀՀ կառավարությունը Հանրապետության Նախագահի լիազորությունների կատարման անհնարինության մասին եզրակացություն հայցելու դեպքում: Այդ պատճառով առաջին տարիներին Սահմանադրական դատարանում քննված գործերի զգալի մասը վերաբերում էր ՀՀ միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների սահմանադրականության գնահատմանը, որոնցով սահմանադրական դատարան կարող էր դիմել բացառապես Հանրապետության Նախագահը: Ուստի՝ պատահական չէր նաև այն, որ առաջին որոշումը, որով հակասահմանադրական ճանաչվեց իրավակարգավորումը, ևս վերաբերում էր միջազգային պայմանագրի:

1996 թվականի օգոստոսի 30-ի ՍԴՈ-17 որոշմամբ առաջին անգամ Սահմանադրությանը չհամապատասխանող ճանաչվեցին միջազգային պայմանագրում՝ Հայաստանի Հանրապետության և Գերմանիայի Դաշնակցային Հանրապետության միջև կապիտալ ներդրումների խրախուսման ու փոխադարձ պաշտպանության մասին 1995 թվականի դեկտեմբերի 21-ին Երևանում ստորագրված պայմանագրի 4-րդ հոդվածով նախատեսված պարտավորությունները:

parliamentary candidates in disputes relating to election results, as well as by the RA Government when requesting an opinion concerning the impossibility of the President of the Republic to discharge their powers. Consequently, during its early years, a significant proportion of the cases examined by the Constitutional Court concerned the review of the constitutionality of obligations prescribed by international treaties undertaken by the Republic of Armenia, and the applications in respect whereof could be submitted exclusively by the President of the Republic. It was therefore no coincidence that the first decision by which a legal regulation was declared unconstitutional also concerned an international treaty.

By Decision DCC-17 of 30 August 1996, the Constitutional Court, for the first time, declared incompatible with the Constitution the obligations prescribed by Article 4 of the Agreement between the Republic of Armenia and the Federal Republic of Germany on the Promotion and Reciprocal Protection of Capital Investments, signed in Yerevan on 21 December 1995.

1996 թվականի ՀՀ Նախագահի թեկնածուներ Վազգեն Մանուկյանը և Աշոտ Մանուչարյանը դիմումներ ներկայացրին Սահմանադրական դատարան՝ նախագահական ընտրությունների արդյունքների վիճարկման վերաբերյալ՝ սկիզբ դնելով ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից ընտրական վեճերով իրավակիրառ պրակտիկայի ձևավորմանը: «1996 թվականի սեպտեմբերի 22-ին կայացած Հայաստանի Հանրապետության Նախագահի ընտրության արդյունքները վիճարկելու վերաբերյալ» գործով ՀՀ Սահմանադրական դատարանի 1996 թվականի նոյեմբերի 22-ի ՍԴՈ-26 որոշումը դարձավ ընտրական վեճերով ՀՀ Սահմանադրական դատարանի կայացրած անդրանիկ որոշումը և հիմք դրեց այդ բնագավառում սահմանադրական դատավարության պրակտիկայի ձևավորմանը:

Օրենքի սահմանադրականության ստուգման առաջին գործը Դատարանը քննեց 1997 թվականին՝ Ազգային ժողովի 65 պատգամավորների դիմումի հիման վրա: 1997 թվականի մայիսի 19-ի ՍԴՈ-56 որոշմամբ «Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածը ճանաչվեց Սահմանադրությանը համապատասխանող, միաժամանակ հստակեցվեցին այդ նորմի կիրառման սահմանադրաիրավական շրջանակները: Այս որոշումն առաջին օրինակն է, երբ Դատարանը նորմի սահմանադրականությունը գնահատել է դրա իրավաչափ մեկնաբանության հետ համակցված:

In 1996, presidential candidates Vazgen Manukyan and Ashot Manucharyan submitted applications to the Constitutional Court challenging the results of the presidential election, thereby initiating the development of the RA Constitutional Court's jurisprudence in electoral disputes. The Constitutional Court's Decision DCC-26 of 22 November 1996 in the case “On Challenging the Results of the Presidential Election in the Republic of Armenia held on 22 September 1996” became the Court's first decision in an electoral dispute and laid the foundation for the development of constitutional adjudication in this field.

The first case on the constitutionality of laws was examined by the Court in 1997, raised by the application of sixty-five deputies of the National Assembly. By Decision DCC-56 of 19 May 1997, Article 17 of the RA Law “On Elections to Local Self-Government Bodies” was declared to conform with the Constitution, while the constitutional legal framework governing the application of that norm was simultaneously clarified. This decision marked the first instance in which the Court assessed the constitutionality of a norm in conjunction with its compliant interpretation.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանն իր ձևավորման առաջին իսկ օրերից ակտիվ և հետևողական քաղաքականություն է նախաձեռնել միջազգային համագործակցության ոլորտում՝ նպատակ ունենալով ուսումնասիրելու սահմանադրական արդարադատության լավագույն միջազգային փորձը, խթանելու մասնագիտական երկխոսությունը և ներկայացնելու հայրենական սահմանադրական արդարադատության ձեռքբերումները միջազգային հարթակներում:

1996 թվականին աշխատանքային կապեր հաստատվեցին Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի՝ Վենետիկի հանձնաժողովի հետ: Հետագայում Դատարանը մասնակցեց նաև Վենետիկի հանձնաժողովի Սահմանադրական արդարադատության միասնական խորհրդի աշխատանքներին և CODICES շտեմարանի համալրմանը:

Վենետիկի հանձնաժողովի և միջազգային այլ գործընկերների հետ համատեղ կազմակերպված սահմանադրական արդարադատության արդի հիմնախնդիրներին նվիրված ամենամյա Երևանյան խորհրդաժողովները դարձան Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի այցեքարտը:

1997 թվականի հոկտեմբերին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի առաջարկությամբ հիմնադրվեց «Երիտասարդ ժողովրդավարության երկրների սահմանադրական դատարանների կոնֆերանս» միջազգային կազմակերպությունը՝ միավորելով նախկին ԽՍՀՄ

From the very first days of its establishment, the Constitutional Court of the Republic of Armenia pursued an active and consistent policy of international cooperation aimed at studying the best international practices in constitutional justice, promoting professional dialogue, and presenting the achievements of Armenian constitutional justice at international venues.

In 1996, working relations were established with the European Commission for Democracy through Law of the Council of Europe (the Venice Commission). Subsequently, the Court also participated in the activities of the Joint Council on Constitutional Justice of the Venice Commission and contributed to the CODICES database.

The annual Yerevan International Conferences dedicated to contemporary issues of constitutional justice, jointly organized with the Venice Commission and other international partners, became the hallmark of the Constitutional Court of the Republic of Armenia.

In October 1997, upon the initiative of the Constitutional Court of the Republic of Armenia, the international organization “Conference of Constitutional Courts of Countries of Young Democracy” was established, bringing together constitutional justice bodies from several former USSR states.

մի շարք երկրների սահմանադրական արդարադատության մարմինները: 2000-ականներին կազմակերպությունը վերանվանվեց «Նոր ժողովրդավարության երկրների սահմանադրական դատարանների կոնֆերանսի», քանզի կազմակերպության անդամ պետություններն արդեն կայացած սահմանադրաիրավական համակարգեր ունեին: Հետագայում այն վերանվանվեց և ներկայում գործում է որպես «Սահմանադրական վերահսկողության մարմինների եվրասիական ընկերակցություն»:

2000 թվականին ՀՀ Սահմանադրական դատարանն անդամակցեց Եվրոպական սահմանադրական դատարանների խորհրդաժողովին՝ դառնալով եվրոպական սահմանադրական դատարանների համագործակցության ընդհանուր հարթակի լիիրավ մասնակից:

Ինստիտուցիոնալ կայացման առաջին տասնամյակում ՀՀ Սահմանադրական դատարանը ձևավորեց սահմանադրական արդարադատության վերաբերյալ որոշ հիմնարար իրավական դիրքորոշումներ, որոնք անկյունաքարային նշանակություն ունեցան սահմանադրական իրավունքի դոկտրինի և իրավակիրառ պրակտիկայի շարունակական զարգացման համար: 2005 թվականի ավարտին Սահմանադրական դատարանը կայացրել էր վեց հարյուրից ավելի որոշում: Թեև դրանց զգալի մասը վերաբերում էր միջազգային պայմանագրերին, քննվել էին նաև սեփականության իրավունքի, անձեռնմխելիության, դատական պաշտպանության և այլ սահմանադրաիրավական հիմնահարցերի առնչվող գործեր:

During the 2000s, the organization was renamed the “Conference of Constitutional Courts of Countries of New Democracy”, as by that period its member states had already developed established constitutional legal systems. It was subsequently renamed again and currently operates as the “Eurasian Association of Constitutional Review Bodies”.

In 2000, the Constitutional Court became a member of the Conference of European Constitutional Courts, thereby becoming a full participant in the common platform for cooperation among European constitutional courts.

During the first decade of its institutional consolidation, the Constitutional Court developed a number of fundamental legal positions on constitutional justice that became cornerstones for the ongoing development of constitutional law doctrine and law-enforcement practice. By the end of 2005, the Constitutional Court had delivered more than six hundred decisions. Although a significant proportion of those decisions concerned international treaties, the Court also adjudicated cases relating to the right to property, inviolability, judicial protection, and other fundamental constitutional legal issues.



ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 2005-2015 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

THE DEVELOPMENT OF THE CONSTITUTIONAL COURT IN 2005-2015

1990 1996 2005 2015 2026

2005 թվականի նոյեմբերի 27-ին կայացած սահմանադրական հանրաքվեի արդյունքներով 1995 թ. ՀՀ Սահմանադրությունը բարեփոխվեց՝ համահունչ դառնալով համաեվրոպական սահմանադրական զարգացումների միտումներին: Այդ զարգացումներից զերծ չմնացին նաև ՀՀ սահմանադրական արդարադատությանն առնչվող սահմանադրական կարգավորումները: Սահմանադրական դատարանի լիազորությունների հստակեցման, Դատարանին դիմում ներկայացնելու իրավասություն ունեցող սուբյեկտների կազմի ընդլայնման վերաբերյալ քննարկումները Հայաստանի Հանրապետությունում ծավալվել էին դեռևս 2000-ականների սկզբին, երբ ակնհայտ էր դարձել, որ Սահմանադրական դատարանը տվյալ սուբյեկտակազմի պարագայում չի կարող արդյունավետ իրականացնել իր լիազորությունները, և սահմանադրական դատարանի լիազորությունների շրջանակը ևս պետք է համահունչ դառնա եվրոպական չափորոշիչներին: Իհարկե, դա պայմանավորված էր նախևառաջ Եվրոպայի խորհրդին Հայաստանի Հանրապետության անդամակցության գործընթացի, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի վավերացման, Մարդու իրավունքների եվրոպական դատարան դիմելու իրավունք ստանալու հետ, և 2005 թվականին ընդունված սահմանադրական բարեփոխումները պետք է անդրադարձ կատարեին նման հարցադրումներին:

Այդ փոփոխությունների արդյունքում որոշակիորեն ընդլայնվեցին ՀՀ Սահմանադրական դատարանի լիազորությունները, մասնավորապես՝ Սահմանադրական դատարանի իրավասությունը

As a result of the constitutional referendum held on 27 November 2005, the 1995 Constitution of the Republic of Armenia was amended so as to align with the prevailing trends of constitutional development across Europe. The constitutional regulations governing constitutional justice in the Republic of Armenia likewise underwent significant reform. Discussions concerning the clarification of the Constitutional Court's powers and the expansion of the range of entities entitled to apply to the Court had already commenced in the Republic of Armenia in the early 2000s, when it had become evident that, given the existing circle of authorized applicants, the Constitutional Court was unable to exercise its constitutional functions effectively, and that the scope of the Constitutional Court's powers likewise had to be brought into conformity with European standards. These developments were, above all, driven by Armenia's accession to the Council of Europe, the ratification of the European Convention on Human Rights, and the acquisition of the right to apply to the European Court of Human Rights, so the constitutional reforms adopted in 2005 were therefore expected to address these issues.

As a result of these amendments, the powers of the Constitutional Court of the Republic of Armenia were

տարածվեց նաև տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների սահմանադրականության ստուգման վրա: Սահմանադրական դատարանին իրավասություն վերապահվեց նաև եզրակացություն ներկայացնելու համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու հիմքերի մասին՝ համապատասխան դիմումի առկայության դեպքում: Այսպիսով, եթե Սահմանադրական դատարանի *ratione materiae* իրավասությունը սահմանադրական բարեփոխումների շրջանակներում էապես չվերափոխվեց, բացառությամբ տեղական ինքնակառավարման մարմիններին առնչվող հարթության, ապա Սահմանադրական դարտարանի *ratione personae* իրավասությունն էապես վերափոխվեց. ընդլայնվեց ՀՀ Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը. Սահմանադրական դարտարան դիմելու իրավունք վերապահվեց տեղական ինքնակառավարման մարմիններին՝ իրենց սահմանադրական իրավունքները խախտող պետական մարմինների՝ նորմատիվ ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով, դատարաններին և գլխավոր դատախազին՝ իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործին առնչվող նորմատիվ ակտերի դրույթների սահմանադրականության հարցերով, մարդու իրավունքների պաշտպանին՝ նորմատիվ ակտերի՝ Սահմանադրության «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները» գլխի դրույթներին համապատասխանության հարցերով:

expanded to some extent; in particular, the Court's jurisdiction was extended to review the constitutionality of decisions adopted by local self-government bodies. The Constitutional Court was also vested with the authority, upon a relevant application, to issue an opinion concerning the existence of grounds for the removal of a community head from office. Thus, while the *ratione materiae* jurisdiction of the Constitutional Court was not substantially transformed in the course of the constitutional reforms, except with regard to matters relating to local self-government bodies, its *ratione personae* jurisdiction underwent a significant transformation. The scope of entities entitled to apply to the Constitutional Court was expanded; namely, local self-government bodies were granted the right to apply to the Constitutional Court concerning the constitutionality of normative acts adopted by state authorities that infringe their constitutional rights; courts and the Prosecutor General were authorized to apply to the Constitutional Court regarding the constitutionality of provisions of normative acts relevant to specific cases pending before the latter; the Human Rights Defender was granted the right to challenge the conformity of normative acts with the provisions of the Chapter of the Constitution on the Fundamental Rights and Freedoms of the Human Being and the Citizen.

Վերացական սահմանադրական վերահսկողության շրջանակում Սահմանադրական դատարան դիմելու համար պատգամավորների անհրաժեշտ թիվը նվազեցվեց՝ պատգամավորների ընդհանուր թվի մեկ երրորդից հասնելով մեկ հինգերորդի:

Առավել նշանակալի նորամուծություններից էր անհատական սահմանադրական դիմումի ինստիտուտի ներդրումը: 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրությամբ անհատը վերջապես ստացավ ՀՀ Սահմանադրական դարտարան դիմելու իրավունք՝ որոշակի իրավական նախապայմանների պահպանման պարագայում: Սահմանադրության համաձայն՝ Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ստացավ յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը:

Այս փոփոխությունը սահմանադրական արդարադատությունն անմիջականորեն հասանելի դարձրեց անձանց՝ միաժամանակ Դատարանի առջև դնելով ընդունելիության հստակ չափանիշներ ձևավորելու խնդիր:

Սահմանադրական նոր կարգավորումները կենսագործելու նպատակով 2006 թվականի հունիսի 1-ին ընդունվեց «Սահմանադրական դատարանի մասին» նոր օրենքը, իսկ այնուհետև՝ Դատարանի

Within the framework of abstract constitutional review, the number of deputies required to apply to the Constitutional Court was reduced from one-third of the total number of deputies to one-fifth.

One of the most significant innovations was the introduction of the institution of individual constitutional applications. The 2005 constitutional amendments finally granted individuals the right to apply to the RA Constitutional Court, subject to compliance with certain legal preconditions. Under the Constitution, everyone was granted the right to apply to the Constitutional Court in relation to a specific case where a final judicial act had been rendered, all available judicial remedies had been exhausted, and the constitutionality of the provision of the normative legal act applied to the person by the judicial act was being challenged.

This reform made constitutional justice directly accessible to individuals, while simultaneously placing before the Constitutional Court the task of developing clear admissibility criteria for individual constitutional applications.

In order to implement the new constitutional framework, the new Law “On the Constitutional Court” was

նոր կանոնակարգը: Նոր իրավակարգավորումներով վերափոխվեցին գործերի քննության ընթացակարգերը, ներդրվեցին անհատական դիմումների նախնական ուսումնասիրում իրականացնող դատական կազմերը, բանավոր քննությանը զուգահեռ նախատեսվեց գրավոր ընթացակարգ և նորմատիվ վերահսկողության գործերով ամրագրվեց Սահմանադրական դատարանի դատավորի կողմից հատուկ կարծիք ներկայացնելու հնարավորությունը:

2006 թվականի սեպտեմբերի 20-ին Սահմանադրական դատարանն ընդունեց ՍԴՈ-647 որոշումը, որը դատարանի կողմից ներկայացված դիմումի հիման վրա կայացված առաջին որոշումն էր: Այն գործնական հիմք ստեղծեց ընդհանուր իրավասության դատարանների և սահմանադրական դատարանի միջև կոնկրետ սահմանադրական վերահսկողության շրջանակում համագործակցության համար:

Անհատական դիմումներ ներկայացնելու ինստիտուտի ներդրումը, ինչպես և կանխատեսվում էր, անմիջապես հանգեցրեց դիմումների թվի կտրուկ աճի: Առանցքային խնդիր դարձավ սահմանադրաիրավական իրական վեճ պարունակող դիմումների տարբերակումն այն դիմումներից, որոնցով ըստ էության վիճարկվում էր նորմի կիրառման իրավաչափությունը կամ ընդհանրապես ակտի օրինականությունը: 2006 թվականի երկրորդ կեսի Սահմանադրական դատարանի հիմնական մարտահրավերն էր ձևավորել անհատական դիմումների ընդունելիությանը վերաբերող

adopted on 1 June 2006, followed by the Court's new Rules of Procedure. The new legal framework restructured the procedures for case adjudication; namely, it introduced judical panels for the preliminary examination of individual applications, established written proceedings alongside oral hearings, and provided, in cases of normative review, for the possibility of issuing dissenting opinions by the judges of the Constitutional Court.

On 20 September 2006, the Constitutional Court delivered its Decision DCC-647, which became the first decision rendered upon an application submitted by a court. It laid the practical foundation for cooperation between the courts of general jurisdiction and the Constitutional Court within the framework of concrete constitutional review.

Immediately following the introduction of the institution of individual constitutional applications, and as had been anticipated, the Constitutional Court faced a sharp increase in the number of applications. A key challenge was to distinguish applications raising genuine constitutional legal disputes from those that, in substance, merely contested the lawfulness of the application of a norm or, more generally, the legality of

չափորոշիչներ, ստեղծել անհրաժեշտ մեխանիզմներ՝ ներկայացված դիմումները զտելու, և վերջնական որոշում կայացնել իրական սահմանադրաիրավական վեճ պարունակողների վերաբերյալ:

Անհատական դիմումի հիման վրա ըստ էության կայացրած առաջին որոշումը «Քաղաքացի Արամ Մարտիրոսյանի դիմումի հիման վրա՝ Ազգային ժողովի կողմից 1998 թվականի մայիսի 5-ին ընդունված՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 470 հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով Սահմանադրական դատարանի 2006 թվականի սեպտեմբերի 26-ի ՍԴՈ-648 որոշումն է:

Նույն թվականի հոկտեմբերին Սահմանադրական դատարանի դատավորներ Ֆելիքս Թոխյանը, Ռաֆայել Պապայանը և Վալերի Պողոսյանը ներկայացրին իրենց հատուկ կարծիքը «Քաղ. Մ. Քոչարյանի և քաղ. Հ. Դավթյանի դիմումների հիման վրա՝ «Սոցիալական ապահովության քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11 հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով Սահմանադրական դատարանի ՍԴՈ-649 որոշման վերաբերյալ՝ սկիզբ դնելով նորմատիվ վերահսկողության շրջանակներում ՀՀ Սահմանադրական դատարանի դատավորների հատուկ կարծիքների հրապարակման պրակտիկային:

an act. During the second half of 2006, the Constitutional Court's principal challenge was to develop admissibility criteria for individual constitutional applications, establish necessary mechanisms for filtering submitted applications, and adopt final decisions in cases involving genuine constitutional legal issues.

The first decision rendered on the merits following an individual application was Decision DCC-648 of 26 September 2006, in the “Case concerning the conformity with the Constitution of the Republic of Armenia of Article 470 of the Civil Code of the Republic of Armenia adopted by the National Assembly on 5 May 1998, raised by the application of the citizen Aram Martirosyan”.

In October of the same year, Constitutional Court Members Felix Tokhyan, Rafayel Papayan, and Valery Poghosyan delivered their dissenting opinion with respect to Decision DCC-649 in the “Case concerning the conformity with the Constitution of the Republic of Armenia of Article 11 of the Law of the Republic of Armenia 'On Social Security Cards', raised by the applications of citizens M. Kocharyan and H. Davtyan”. This marked the beginning of the practice of promulgating dissenting opinions of members of the RA Constitutional Court in the scope of normative constitutional review.

Այս ժամանակահատվածում շարունակվեց նաև ՀՀ Սահմանադրական դարտարանի միջազգային համագործակցության ընդլայնումը: Սահմանադրական դատարանը մասնակցեց 2009 թվականին մեկնարկած Սահմանադրական արդարադատության համաշխարհային կոնֆերանսի ձևավորման գործընթացին, իսկ 2011 թվականի սեպտեմբերից դարձավ այդ կազմակերպության անդամ:

2005-2015 թվականները դարձան Սահմանադրական դատարանի ինստիտուցիոնալ զարգացման և հիմնական առանցքային իրավական դիրքորոշումների ձևավորման տասնամյակ: Սահմանադրական դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումներից շատերը նոր սահմանադրաիրավական ուղենիշներ սահմանեցին ու նպաստեցին օրենսդրության ու իրավակիրառ պրակտիկայի կատարելագործմանը:

Այդ տարիներին սահմանադրական արդարադատությունն ավելի մատչելի դարձավ անձանց համար, իսկ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները նշանակալի ազդեցություն ունեցան դատական պաշտպանության, սեփականության, սոցիալական իրավունքների և իրավական որոշակիության հետ կապված ինստիտուտների զարգացման վրա:

During this period, the Constitutional Court also continued to expand its international cooperation. The Constitutional Court participated in the process of establishing the World Conference on Constitutional Justice, launched in 2009, and became a member of the organization in September 2011.

The period from 2005 to 2015 became a decade of institutional development for the Constitutional Court and of the formation of its key legal positions. Many of the legal positions expressed by the Constitutional Court established new constitutional legal benchmarks and contributed to the improvement of legislation and judicial practice.

During these years, constitutional justice became more accessible to individuals, while the Constitutional Court's legal positions exerted a substantial influence on the development of the institutions related to judicial protection, property rights, social rights, and the principle of legal certainty.



ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻՑ ՄԻՆՉ ՄԵՐ ՕՐԵՐ

CONSTITUTIONAL JUSTICE FROM THE 2015 CONSTITUTIONAL REFORMS TO THE PRESENT DAY

1990 — 1996 — 2005 — 2015 — 2026

2013-2015 թվականներին Հայաստանի Հանրապետությունում նախաձեռնված սահմանադրական բարեփոխումների գործընթացն ավարտվեց Սահմանադրության 2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված փոփոխություններով: Դրանցով Հայաստանի Հանրապետությունն անցում կատարեց խորհրդարանական կառավարման մոդելի, և էապես վերափոխվեց հանրային իշխանության մարմինների ձևավորման ու փոխհարաբերությունների նոր համակարգը: Փոփոխությունները վերաբերեցին նաև Սահմանադրական դատարանի կազմավորման կարգին, դատավորների պաշտոնավարման ժամկետներին, Դատարանի նախագահի և փոխնախագահի ընտրությանը, ինչպես նաև լիազորությունների շրջանակին:

Նոր կարգավորմամբ Սահմանադրական դատարանը կազմված է ինը դատավորից, որոնց ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, տասներկու տարի ժամկետով: Երեք թեկնածու առաջադրում է Հանրապետության նախագահը, երեքը՝ Կառավարությունը, երեքը՝ դատավորների ընդհանուր ժողովը, որը կարող է առաջարկել միայն դատավորների: Նույն անձը Սահմանադրական դատարանի դատավոր կարող է ընտրվել միայն մեկ անգամ:

Սահմանադրական դատարանն իր կազմից՝ վեց տարի ժամկետով, ընտրում է Սահմանադրական դատարանի նախագահ և փոխնախագահ՝ առանց վերընտրվելու իրավունքի:

The process of constitutional reforms initiated in the Republic of Armenia between 2013 and 2015 culminated in the constitutional amendments adopted by the referendum of 6 December 2015. Through these amendments, the Republic of Armenia transitioned to a parliamentary system of government, fundamentally transforming the system governing the formation of public authorities and the relationships among them. The reforms also affected the procedure for the formation of the Constitutional Court, the terms of office of the judges, the election of the President and Vice-President of the Court, as well as the scope of its powers.

Under the new constitutional framework, the Constitutional Court is composed of nine judges, elected by the RA National Assembly by vote of at least three-fifths of the total number of deputies for a term of twelve years. Three candidates shall be nominated by the President of the Republic, three by the Government, and three by the General Assembly of Judges, which may nominate only judges. The same person may be elected as a judge of the Constitutional Court only once.

The Constitutional Court shall elect the President and Vice-President from among its composition for a six-year term, without the right to be re-elected.

2015 թվականի սահմանադրական փոփոխություններով ընդլայնվեցին Սահմանադրական դատարանի լիազորությունները: Սահմանադրական դատարանը լիազորվեց գնահատելու նաև ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականությունը, ինչպես նաև մինչև ընդունումը որոշելու սահմանադրական փոփոխությունների և հանրաքվեի դրվող իրավական ակտերի նախագծերի համապատասխանությունը Սահմանադրությանը:

Սահմանադրական դատարանին վերապահվեց սահմանադրական մարմինների միջև նրանց սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացող վեճերի լուծումը:

Խորհրդարանական կառավարման համակարգի շրջանակում Սահմանադրական դատարանը նաև լիազորվեց որոշում կայացնելու պատգամավորի լիազորությունները դադարեցնելու հարցի վերաբերյալ:

Այս փոփոխությունները ձևավորեցին Սահմանադրական դատարանի ներկայիս սահմանադրական մոդելի հիմնական կառուցվածքը՝ կազմավորման համընդգրկուն ընթացակարգով, ընդլայնված լիազորություններով և Դատարանում պաշտոնավարման հստակ ժամկետներով:

2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության՝ դատական իշխանությանը վերաբերող 7-րդ գլուխն ամբողջությամբ ուժի մեջ մտավ 2018 թվականի ապրիլի 9-ին: Անցումային կարգավորումների հետևանքով Սահմանադրական դատարանում միաժամանակ պաշտոնավարում

The 2015 constitutional amendments expanded the powers of the Constitutional Court. The Constitutional Court was vested with the power to review the constitutionality of sub-legislative normative legal acts, as well as to determine, *prior to* their adoption, the conformity with the Constitution of draft constitutional amendments and draft legal acts to be submitted to a referendum.

The Constitutional Court was also entrusted with the resolution of disputes arising between constitutional bodies concerning their respective constitutional powers.

Within the framework of the parliamentary system of government, the Constitutional Court was further empowered to decide on the termination of the mandate of a deputy.

These amendments established the fundamental structure of the current constitutional model of the Constitutional Court, characterised by an inclusive formation procedure, expanded powers, and fixed terms of office for the judges of the Court. Chapter 7 of the 2015 constitutional amendments, concerning the judiciary, entered into force in its entirety on 9 April 2018. As a consequence of the transitional regulations, the Constitutional Court simultaneously comprised members appointed under the previous

էին նախկին սահմանադրական կարգավորումների շրջանակներում նշանակված կամ նոր կարգով ընտրված դատավորներ: 2020 թվականի հունիսի 22-ին Ազգային ժողովն ընդունեց Սահմանադրության 213-րդ հոդվածի փոփոխությունները, որոնցով ավարտվեց մինչև 2018 թվականի ապրիլի 9-ը նշանակված և ընդհանուր առմամբ առնվազն տասներկու տարի պաշտոնավարած անդամների պաշտոնավարումը, իսկ մնացածի համար սահմանվեց տասներկուամյա ընդհանուր ժամկետ: Փոփոխությունների արդյունքում առաջացած երեք թափուր տեղերի համար թեկնածուներ առաջադրեցին Կառավարությունը, Հանրապետության նախագահը և դատավորների ընդհանուր ժողովը:

Արդյունքում 2020-2024 թվականներին ամբողջ ծավալով կյանքի կոչվեցին Սահմանադրական դատարանի կազմավորման վերաբերյալ Սահմանադրության 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը՝ հավասարեցնելով Սահմանադրական դատարանի դատավորների կարգավիճակները և նրանց պաշտոնավարման ժամկետները, ինչպես նաև հնարավորություն ընձեռելով իրականացնելու Սահմանադրական դատարանի կազմից Սահմանադրական դատարանի նախագահի ընտրությունը և ապահովելով Սահմանադրությամբ նախատեսված՝ Սահմանադրական դատարանի կազմի համալրմանը մասնակից բոլոր մարմինների ներգրավվածությունը՝ որպես Սահմանադրական դատարանի ժողովրդավարական լեգիտիմության բարձրացման գործոն:

constitutional framework and judges elected under the new constitutional procedure. On 22 June 2020, the National Assembly adopted amendments to Article 213 of the Constitution, thereby terminating the tenure of those members of the Court who had been appointed before 9 April 2018 and had served for an aggregate period of at least twelve years, while establishing a uniform twelve-year term of office for the remaining judges. To fill the three vacancies arisen *due to* these amendments, candidates were nominated by the Government, the President of the Republic, and the General Assembly of Judges.

As a result, during the period 2020–2024, parts 1 and 2 of Article 166 of the Constitution, governing the composition of the Constitutional Court, were fully implemented, thus ensuring the harmonization of the status and terms of office of all judges of the Constitutional Court, enabling the election of the President of the Constitutional Court from among the judges of the Court, and ensuring the involvment of all bodies designated by the Constitution in the process of reconstituting the Constitutional Court, as a factor contributing to enhancing the democratic legitimacy of the Constitutional Court.

This period was, *inter alia*, marked by a number of decisions of the Constitutional Court, which played a

Այս շրջափուլը, ի թիվս այլնի, նշանավորվեց Սահմանադրական դատարանի մի շարք որոշումներով, որոնք առանցքային նշանակություն ունեցան Սահմանադրության գերակայության, մարդու իրավունքների պաշտպանության և իշխանությունների բաժանման ու հավասարակշռման, ժողովրդավարության կայացման և զարգացման առումով:

Անցած երեք տասնամյակների ընթացքում սահմանադրական արդարադատության ինստիտուտը Հայաստանում ապրեց բեկումնային շրջադարձեր, որոնք Սահմանադրական դատարանը դարձրին եվրոպական տարածաշրջանի սահմանադրական արդարադատության մարմինների ընտանիքի լիիրավ անդամ:

Իրավական պետության անխախտ ուղին հանձնառած Հայաստանի Հանրապետությունում ժողովրդավարական արժեքներն ու հիմնարար սկզբունքները ապրող իրողություններ են, ի շարս այլնի՝ նաև Սահմանադրական դատարանի որոշումների շնորհիվ:

Հայաստանի Հանրապետությունում Սահմանադրական դատարանի հիմնադրումը պետականության ինստիտուցիոնալ զարգացման առանցքային հանգրվաններից էր: Նրա երեսնամյակը ոչ միայն անցած ճանապարհը գնահատելու առիթ է, այլև սահմանադրական արդարադատության անկախության, արդյունավետության, մատչելիության և հանրային վստահության շարունակական ամրապնդման հրամայական:

pivotal role in safeguarding the supremacy of the Constitution, protecting human rights, upholding the separation and balance of powers, and promoting the consolidation and development of democracy.

Over the past three decades, the institution of constitutional justice in Armenia has undergone transformative developments, and the Constitutional Court has become a full-fledged member of the family of constitutional justice bodies in the European region.

In the Republic of Armenia, which remains committed to the unwavering path of the rule of law state, democratic values and fundamental principles have become a living reality, owing, *inter alia*, to the decisions of the Constitutional Court.

The establishment of the Constitutional Court in the Republic of Armenia was one of the key milestones in the institutional development of Armenian statehood. Its thirtieth anniversary is not only an occasion to assess the path traversed but also underscores the imperative of continuously strengthening the independence, effectiveness, accessibility, and public trust in constitutional justice.


30
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ



ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԸ

JUDGES OF THE CONSTITUTIONAL COURT

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՂ ԿԱԶՄԸ

THE CURRENT COMPOSITION OF THE CONSTITUTIONAL COURT



ԱՐՄԱՆ ԷԴՈՒԱՐԴԻ ԴԻԼԱՆՅԱՆ
Սահմանադրական դատարանի նախագահ

ARMAN DILANYAN
President of the Constitutional Court



ԷԴԳԱՐ ԷԴՈՒԱՐԴԻ ՇԱԹԻՐՅԱՆ
Սահմանադրական դատարանի փոխնախագահ

EDGAR SHATIRYAN
Vice-President of the Constitutional Court



ԱՐՏԱԿ ՀԱՅԿԱԶԻ ԶԵՅՆԱԼՅԱՆ
Սահմանադրական դատարանի դատավոր

ARTAK ZEYNALYAN
Judge of the Constitutional Court



ԴԱՎԻԹ ՄՀԵՐԻ ԽԱԶԱՏՈՒՐՅԱՆ
Սահմանադրական դատարանի դատավոր

DAVIT KHACHATURYAN
Judge of the Constitutional Court



ԵՐՎԱՆԴ ՀԵՆՐԻԿԻ ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
Սահմանադրական դատարանի դատավոր

YERVAND KHUNDKARYAN
Judge of the Constitutional Court



ՀՈՎԱԿԻՄ ԱԼՎԱՆԻԿԻ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ
Սահմանադրական դատարանի դատավոր

HOVAKIM HOVAKIMYAN
Judge of the Constitutional Court



ՍԵԴԱ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՍԱՖԱՐՅԱՆ
Սահմանադրական դատարանի դատավոր

SEDA SAFARYAN
Judge of the Constitutional Court



ԱՐԹՈՒՐ ԳՐԻՇԱՅԻ ՎԱՂԱՐՇՅԱՆ
Սահմանադրական դատարանի դատավոր

ARTHUR VAGHARSHYAN
Judge of the Constitutional Court



ՎԼԱԴԻՄԻՐ ԴԱՎԻԹԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Սահմանադրական դատարանի դատավոր

VLADIMIR VARDANYAN
Judge of the Constitutional Court



ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԿԻՆ ԱՆԴԱՄՆԵՐ (ԴԱՏԱՎՈՐՆԵՐ)

FORMER MEMBERS (JUDGES) OF THE CONSTITUTIONAL COURT



ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Սահմանադրական դատարանի առաջին նախագահ
1996-2018

GAGIK HARUTYUNYAN
The First President of the Constitutional Court
1996-2018



ՀՐԱՅՐ ԹՈՎՄԱՍՅԱՆ
Սահմանադրական դատարանի նախագահ, դատավոր
2018-2026

HRAYR TOVMASYAN
President of the Constitutional Court, Judge
2018-2026



ՎՈԼՈԴՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Սահմանադրական դատարանի փոխնախագահ, անդամ (դատավոր)
1996-2018

VOLODYA HOVHANNISYAN
Vice-President of the Constitutional Court, Member (Judge)
1996-2018



ԱԼՎԻՆԱ ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ
Սահմանադրական դատարանի փոխնախագահ, անդամ (դատավոր)
1996-2003 / 2014-2020

ALVINA GYULUMYAN
Vice-President of the Constitutional Court, Member (Judge)
1996-2003 / 2014-2020



ԱՇՈՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Սահմանադրական դատարանի փոխնախագահ, անդամ (դատավոր)
2010-2022

ASHOT KHACHATRYAN
Vice-President of the Constitutional Court, Member (Judge)
2010-2022



ՎԱՀԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Սահմանադրական դատարանի փոխնախագահ, դատավոր
2019-2025

VAHE GRIGORYAN
Vice-President of the Constitutional Court, Judge
2019-2025



ԱՐԱԻԿ ԹՈՒՆՅԱՆ
Սահմանադրական դատարանի անդամ (դատավոր)
2014-2024

ARAIK TUNYAN
Member (Judge) of the Constitutional Court
2014-2024




ԱՐԵՎԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ
Սահմանադրական դատարանի անդամ (դատավոր)
2010-2022

AREVIK PETROSYAN
Member (Judge) of the Constitutional Court
2010-2022



ՀՐԱՆՏ ՆԱԶԱՐՅԱՆ
Սահմանադրական դատարանի անդամ (դատավոր)
1996-2020

HRANT NAZARYAN
Member (Judge) of the Constitutional Court
1996-2020



ՖԵԼԻՔՍ ԹՈԽՅԱՆ
Սահմանադրական դատարանի անդամ (դատավոր)
1997-2020

FELIX TOKHYAN
Member (Judge) of the Constitutional Court
1997-2020



ԿԻՄ ԲԱԼԱՅԱՆ
Սահմանադրական դատարանի անդամ (դատավոր)
2003-2018

KIM BALAYAN
Member (Judge) of the Constitutional Court
2003-2018




ՄԱՆՈՒԿ ԹՈՓՈՒԶՅԱՆ
Սահմանադրական դատարանի անդամ
1999-2014

MANUK TOPUZYAN
Member of the Constitutional Court
1999-2014



ՎԱԼԵՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Սահմանադրական դատարանի անդամ
1996-2014

VALERY POGHOSYAN
Member of the Constitutional Court
1996-2014



ՎԱՀԵ ՍՏԵՓԱՆՅԱՆ
Սահմանադրական դատարանի անդամ
1996-1997

VAHE STEPANYAN
Member of the Constitutional Court
1996-1997



ՀԵՆՐԻԿ ԴԱՆԻԵԼՅԱՆ
Սահմանադրական դատարանի անդամ
2005-2010

HENRIK DANIELYAN
Member of the Constitutional Court
2005-2010



ՀԵՆՐԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Սահմանադրական դատարանի անդամ
1996-1997

HENRIK KHACHATRYAN
Member of the Constitutional Court
1996-1997



ԶԻՆԱՎՈՐ ՂՈՒԿԱՍՅԱՆ
Սահմանադրական դատարանի անդամ
2003-2009

ZINAVOR GHUKASYAN
Member of the Constitutional Court
2003-2009



ՌԱՖԱՅԵԼ ՊԱՊԱՅԱՆ
Սահմանադրական դատարանի անդամ
1997-2010

RAFAYEL PAPAYAN
Member of the Constitutional Court
1997-2010



ՎԼԱԴԻՄԻՐ ՍԱՀԱԿՅԱՆ
Սահմանադրական դատարանի անդամ
1996-2003

VLADIMIR SAHAKYAN
Member of the Constitutional Court
1996-2003



ՄԻՔԱՅԵԼ ՍԵՎՅԱՆ
Սահմանադրական դատարանի անդամ
1996-2005

MICHAEL SEVYAN
Member of the Constitutional Court
1996-2005













ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

DECISIONS OF THE CONSTITUTIONAL COURT

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Սահմանադրական դատարանի որոշումները պետական իշխանության ճյուղերի միջև սահմանադրական հավասարակշռության պահպանման առանցքային գործիքներ են: Դրանք ոչ միայն իրավական գնահատական են տալիս վիճարկվող նորմերին կամ դրանց՝ իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությանը, այլև սահմանում են հանրային իշխանության գործառութային սահմանները. այս իմաստով Սահմանադրական դատարանի որոշումները կատարում են սահմանադրական «արգելակման և հակակշռման» մեխանիզմի դեր՝ իրավական ձևով ուղղորդելով քաղաքական գործընթացները: Միևնույն ժամանակ, Սահմանադրական դատարանի որոշումները ձևավորում են սահմանադրական քաղաքականություն՝ ամրագրելով մարդու իրավունքների պաշտպանության, ժողովրդավարական կառավարման, իրավական պետության և իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիմնարար չափորոշիչները: Դատարանի դիրքորոշումները հաճախ վերածում են պարտադիր ուղենիշների օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների համար՝ կանխորոշելով հետագա օրենսդրական և իրավակիրառ զարգացումները: Այս հանգամանքը Սահմանադրական դատարանը դարձնում է ոչ միայն իրավական, այլ նաև արժեքային ուղղորդման կենտրոն:

THE LEGAL AND POLITICAL SIGNIFICANCE OF THE DECISIONS OF THE CONSTITUTIONAL COURT

The decisions of the Constitutional Court are key instruments for maintaining the constitutional balance between the branches of state power. Those decisions not only provide a legal assessment of the disputed norms or their interpretations in legal practice but also define the functional boundaries of public auhorty; in this sense, the decisions of the Constitutional Court serve as a constitutional “checks and balances” mechanism, guiding political processes through legal means. At the same time, the decisions of the Constitutional Court shape constitutional policy by enshrining fundamental criteria for the protection of human rights, democratic governance, the rule of law, and the separation and balance of powers. The Court’s positions often evolve into mandatory guidelines for the legislative, executive, and judicial branches, predetermining subsequent legislative and legal developments. This circumstance makes the Constitutional Court not only a legal but also a value-orienting center.

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՊԵՏԱԿԱՆԱՇԻՆԱԿԱՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՎ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՎՈՐՄԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐ

Սահմանադրական դատարանի որոշումները չեն սահմանափակվում սահմանադրական վերահսկողության կամ կոնկրետ սահմանադրաիրավական վեճի լուծման գործառույթով: Դրանք հանդես են գալիս որպես պետականաշինական արժեհամակարգի ձևավորման, պահպանման և զարգացման հիմնարար ուղենիշներ, որոնց միջոցով սահմանվում են պետական իշխանության գործողությունների թույլատրելի սահմանները և սահմանադրական ինքնության բովանդակային առանցքները:

Սահմանադրական դատարանի որոշումներն ապահովում են սահմանադրական ինքնության շարունակականությունն ու կայունությունը՝ կանխելով հանրային իշխանության մարմինների կողմից սահմանադրական արժեքների կամայական վերաիմաստավորումը: Սահմանադրական դատարանն իր իրավական դիրքորոշումներով բացահայտում է այն արժեքային միջուկը, որը ձևավորում է պետության սահմանադրական ինքնությունը՝ ինքնիշխանություն, ժողովրդավարություն, իրավական պետություն, մարդու արժանապատվություն, իշխանությունների բաժանում և հավասարակշռում և այլն:

Սահմանադրական դատարանի որոշումների առանձնահատկությունն է արժեքային սկզբունքներն իրավաբանորեն պարտադիր չափանիշների վերածելը: Արժեքները՝ անկախություն, ազգային

THE DECISIONS OF THE CONSTITUTIONAL COURT AS GUIDELINES FOR SIGNIFYING THE STATE-BUILDING VALUE SYSTEM AND CONSTITUTIONAL IDENTITY

The decisions of the Constitutional Court are not limited to the function of constitutional control or the resolution of specific constitutional-legal disputes. They serve as fundamental guidelines for the formation, preservation, and development of the state-building value system, through which the permissible boundaries of state power actions and the substantive cores of constitutional identity are defined.

The decisions of the Constitutional Court ensure the continuity and stability of constitutional identity by preventing arbitrary reassessment of constitutional values by public authorities. Through its legal positions, the Constitutional Court reveals the core of values that shape the state’s constitutional identity - sovereignty, democracy, rule of law, human dignity, separation and balance of powers, etc.

The decisions of the Constitutional Court have a distinctive feature of transforming value principles into legally binding standards. Values such as independence, national identity, public interest, and legal

ինքնություն, հանրային շահ, իրավական անվտանգություն, դուրս են բերվում հռչակագրային կամ գաղափարական հարթությունից և տեղադրվում իրավական կարգավորման կենտրոնում: Այս գործընթացը նպաստում է պետականաշինության հետևողական և կանխատեսելի զարգացմանը: Մյուս կողմից՝ Սահմանադրական դատարանի որոշումները հանդես են գալիս որպես իշխանության սահմանադրականացման առանցքային գործիքներ: Բարձր դատարանը սահմանում է, որ պետականաշինական նպատակահարմարությունը չի կարող գերակայել սահմանադրական արժեհամակարգի նկատմամբ: Այսկերպ ձևավորվում է այն սահմանադրաչափ ընկալումը, որ պետականաշինությունը ոչ թե քաղաքական կամքի ազատ դրսևորում է, այլ սահմանադրորեն պայմանավորված գործընթաց:

Սահմանադրական դատարանի որոշումները հաճախ անդրադառնում են պատմական ակտերին, հիմնարար փաստաթղթերին և պետականության ձևավորման հանգրվաններին՝ ապահովելով դրանց իրավական գործողության շարունակականությունը: Այսպիսով, Բարձր դատարանը հանդես է գալիս նաև որպես պետական հիշողության իրավական պահապան՝ կանխելով պատմական արժեքների սահմանադրական արժերանությունից շեղվող վերաիմաստավորումը:

Իր գործունեության ընթացքում Սահմանադրական դատարանը կայացրել է մի շարք որոշումներ, որոնցից առանձնանում են ներքոգրյալները.

«2009 թվականի հոկտեմբերի 10-ին Ցյուրիխ քաղաքում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբե-

security are withdrawn from declarative or ideological dimensions and placed at the center of legal regulation. This process contributes to the consistent and predictable development of state-building. On the other hand, the Constitutional Court's decisions serve as key instruments for the constitutionalization of public power. The High Court establishes that state-building expediency cannot prevail over the constitutional value system. In this way, the constitutional understanding is formed that state-building is not a free expression of political will but a constitutionally conditioned process.

The decisions of the Constitutional Court often refer to historical papers, fundamental documents, and milestones in statehood formation, ensuring their ongoing legal force. Thus, the High Court also acts as the legal guardian of state memory, preventing reassessments that deviate from the constitutional axiology of historical values.

During its activities, the Constitutional Court has issued a number of decisions, among which the following stand out:

The Constitutional Court's Decision DCC-850 of 12 January 2010, on the **"Case concerning the conformity with the Constitution of the Republic of Armenia of the obligations prescribed by the Protocol on the Establishment of Diplomatic Relations between the Republic of Armenia and**

րություններ հաստատելու մասին» և «Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև հարաբերությունների զարգացման մասին» արձանագրություններում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով Սահմանադրական դատարանի 2010 թվականի հունվար 12-ի ՍԴՈ-850 որոշումը հայ իրականության մեջ սահմանադրական արդարադատության սկզբունքային նշանակություն ունեցող պատմական որոշում է. սույն որոշման ուղերձներից էր այն, որ արձանագրությունների կիրարկումը չի կարող հանգեցնել պետական ինքնիշխանության, տարածքային ամբողջականության կամ պատմահրավական ժառանգության վերաբերյալ նախապայմաններով պարտավորությունների կատարման: Այս մոտեցմամբ Սահմանադրական դատարանը փաստացի սահմանադրական արգելք դրեց այնպիսի իրավական արդյունքների վրա, որոնք կարող էին ներառել պատմական փաստերի վերանայում, Հայոց ցեղասպանության իրողության միջազգային ճանաչման վրա ճնշում: Այսպիսով, խնդրո առարկա որոշումը լեգիտիմացրեց այն իրողությունը, որ սահմանադրականությունը վեր է քաղաքական նպատակահարմարությունից, և որ միջազգային պայմանագրերը չեն կարող պարունակել անուղղակի պարտավորություններ, որոնք դուրս են պետության սահմանադրական ինքնությունից:

«Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 86-րդ հոդվածի 2-րդ և 7-րդ մասերի, 5-րդ հոդվածի 2-րդ մասի 4.2-րդ կետի՝

the Republic of Turkey and by the Protocol on the Development of Relations between the Republic of Armenia and the Republic of Turkey, signed in Zurich on 10 October 2009", is a historic decision of principled importance in Armenian reality for constitutional justice, and one of the messages of this decision was that the implementation of the protocols cannot lead to obligations with preconditions regarding state sovereignty, territorial integrity, or historical-legal heritage. With this approach, the Constitutional Court effectively imposed a constitutional barrier on legal outcomes that could involve the revision of historical facts or pressure on the international recognition of the Armenian Genocide. Thus, the decision in question legitimized the fact that constitutionality is superior to political expediency, and international treaties cannot contain implicit obligations that go beyond the state's constitutional identity.

The Constitutional Court's Decision DCC-1590 of 29 April 2021, on the **"Case concerning the constitutionality of parts 2 and 7 of Article 86, and point 4.2 of part 2 of Article 5 of the Constitutional Law 'On the Rules of Procedure of the National Assembly', raised by the application of at least one fifth of the total number of deputies of the National Assembly of the**

Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով Սահմանադրական դատարանի 2021 թվականի ապրիլի 29-ի ՍԴՈ-1590 որոշումը Հայաստանի Հանրապետության պետականաշինության գաղափարաբանական և սահմանադրական ինքնության արժևորման առումով հիմնարար նշանակություն ունի: Սույն որոշմամբ Սահմանադրական դատարանը Սահմանադրությամբ ամրագրված դրույթները դասակարգել է՝ ըստ դրանց ընդունող սուբյեկտների իրավասության.

ա) Սահմանադրության նախաբանը, 1-3-րդ և 203-րդ հոդվածները՝ որպես Սահմանադրության անփոփոխելի դրույթներ,

բ) Սահմանադրության՝ միայն հանրաքվեի միջոցով փոփոխվող դրույթները՝ որպես Հայաստանի Հանրապետության ժողովրդի բացառիկ իրավազորության ներքո գտնվող սահմանադրական դրույթներ, որոնք թվարկված են Սահմանադրության 202-րդ հոդվածի 1-ին մասում,

գ) Սահմանադրության՝ նաև Ազգային ժողովի կողմից փոփոխվող դրույթներ:

Սահմանադրական դատարանն անդրադարձել է սահմանադրական դրույթների փոփոխման կարգերի տարբերակմանը՝ շեշտադրելով, որ դրանց հիմքում դրված է Հայաստանի Հանրապետության առաջին սահմանադրի՝ հայ ժողովրդի սահմանած անփոփոխ դրույթներում ամրագրված արժեքների և սկզբունքների գերակայությունը, Սահմանադրության ներքին կայունությունը, Սահմանադրության դրույթների մեկնաբանությունների կանխատեսելիությունը, հնարավոր ներքին կոլիզիաների կանխումը, իսկ դրանց բացահայտման դեպքում՝ լուծումը:

Republic of Armenia”, is of fundamental significance in terms of signification of the ideological and constitutional identity of state-building in the Republic of Armenia. In this decision, the Constitutional Court classified the provisions stipulated in the Constitution according to the competence of the subjects authorized to adopt such provisions:

(a) The Preamble, Articles 1-3, and Article 203 of the Constitution as non-amendable provisions of the Constitution,

(b) Provisions of the Constitution that can be amended only through a referendum as constitutional provisions under the exclusive competence of the people of the Republic of Armenia, listed in part 1 of Article 202 of the Constitution,

(c) Provisions of the Constitution that can also be amended by the National Assembly.

The Constitutional Court has addressed the differentiation of procedures for amending constitutional provisions, emphasizing that it is based on the supremacy of the values and principles enshrined in the non-amendable provisions set by the Armenian people - as the first Constituent of the Republic of Armenia, as well as the internal stability of the Constitution, the predictability of interpretations of the

Սույն որոշմամբ Սահմանադրական դատարանն ազդարարել է Սահմանադրության նախաբանի անփոփոխելիության անօտարելի սահմանադրական որակը՝ միաժամանակ փաստելով, որ Սահմանադրության անփոփոխելի դրույթներն այն հիմնարար և կենտրոնական առանցքն են, որի հիման վրա և շուրջ ձևավորվել ու զարգանալու է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգը:

«1998 թվականի հուլիսի 17-ին ստորագրված՝ Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով 2023 թվականի մարտի 24-ի ՍԴՈ-1680 որոշմամբ Սահմանադրական դատարանն ընդգծեց, որ Սահմանադրության նախաբանում Հայ ժողովրդի համամարդկային արժեքներին հավատարմության հավաստիքը՝ հատկապես համընդհանուր խաղաղությանն սպառնացող ծանրագույն հանցագործությունների և դրանց անպատժելիության դեմ պայքարին վերաբերելի մասով՝ որպես Սահմանադրության դրույթների մեկնաբանման արժերաբանական ուղենիշ դիտարկելու սահմանադրական հրամայականի հիմքում ընկած է նաև այն պատմական, էթիկական և քաղաքակրթական չափորոշիչը, որ Կանոնադրության նախաբանում շարադրված ոճրագործությունների և դրանց անպատժելիության դեմ պայքարի կարևորությունն արդեն իսկ արձանագրված է եղել Հայաստանի անկախության գործընթացում՝ հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը սատարելու մասին հռչակմամբ (Հայաստանի անկախության մասին հռչակագիր, կետ 11): Սահմանադրական դատարանն ընդգծեց, որ Հայոց ցեղասպանության

provisions of the Constitution, the prevention of possible internal collisions, and their resolution if detected.

In this decision, the Constitutional Court proclaimed the inalienable constitutional quality of the non-amendability of the Constitution’s Preamble, while stating that the non-amendable provisions of the Constitution are the fundamental and central axis on which the legal system of the Republic of Armenia has been formed and will develop.

In Decision DCC-1680 of 24 March 2023 on the “**Case concerning the constitutionality of the obligations prescribed by the Rome Statute of the International Criminal Court, signed on 17 July 1998”,** the Constitutional Court emphasized the commitment of the Armenian People to universal values, as prescribed by the Preamble of the Constitution, especially in the part of the fight against the grave crimes that threaten the peace of the world, and to put an end to the impunity of these crimes – as a constitutional imperative to consider the interpretation of the provisions of the Constitution as an axiological guideline – is also based on the historical, ethical and cultural criterion that the importance of the fight against such grave crimes and their impunity, as prescribed by the Preamble of the Statute, was already stated in the process of the Armenian independence, in support of the task of achieving

միջազգային ճանաչմանը սատարելու մասին դրույթը Հայաստանի անկախության մասին հռչակագրում ունի ոչ միայն պատմական իրողության հետադարձորեն ճանաչման, այլև առավել ևս ապագայում նման ծանրագույն հանցագործությունների և դրանց անպատժելիության դեմ պայքարի միջոցով համընդհանուր խաղաղության և անվտանգության պաշտպանության միջազգային ջանքերին մասնակցության քաղաքակրթական բնույթի պարտավորության նշանակություն:

«2024 թվականի օգոստոսի 30-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև պետական սահմանի սահմանազատման և սահմանային անվտանգության հարցերով հանձնաժողովի ու Ադրբեջանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև պետական սահմանի սահմանազատման պետական հանձնաժողովի համատեղ գործունեության մասին» կանոնակարգում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով Սահմանադրական դատարանի 2024 թվականի սեպտեմբերի 26-ի ՍԴՈ-1749 որոշման իրավաքաղաքական նշանակության ամբողջական ընկալումը հնարավոր չէ առանց այն՝ Հայաստանի անկախության մասին հռչակագրի հիմքում ընկած պետականաշինական արժեհամակարգի և սահմանադրական ինքնության առանցքային դրույթների հաշվառման: Սույն որոշմամբ Սահմանադրական դատարանը փաստել է. «Հռչակագիրը եղել է այն ուղղորդիչ իրավաքաղաքական-գաղափարական բովանդակություն ունեցող ակտը, որի ծրագրային 12-րդ կետում զետեղված դրույթները հանգեցրել են Սահմանադրության ընդունմանը: Սա Հայաստանի Հանրապետության

international recognition of the Armenian Genocide (Declaration of Independence of Armenia, paragraph 11). The Constitutional Court emphasized that the provision on supporting the international recognition of the Armenian Genocide, as prescribed by the Declaration of Independence of Armenia, is not only aimed at retroactive recognition of the historical reality, but even more so, it is of a civilized commitment to participate in international efforts aimed at the protection of the peace and security of the world through the fight against such grave crimes and their impunity in the future.

The full understanding of the legal-political significance of the Constitutional Court's Decision DCC-1749 of 26 September 2024, on the "**Case concerning the constitutionality of the obligations prescribed by the Regulation 'On Joint Activity of the Commission on Delimitation and Border Security of the State Border between the Republic of Armenia and the Republic of Azerbaijan and the State Commission on the Delimitation of the State Border between the Republic of Azerbaijan and the Republic of Armenia', signed on 30 August 2024",** is impossible without taking into account the state-building value system underlying the Declaration of Independence of Armenia and the key provisions of constitutional identity. In this decision, the Constitutional Court stated as follows: "The Declaration was an act that had a guiding legal-political and ideological content, the provisions of

ինքնիշխանության, ժողովրդավարական, իրավական և սոցիալական պետության հիմնման, Սահմանադրության նախաբանում նախանշված՝ «Հայաստանի անկախության մասին հռչակագրում հաստատագրված հայոց պետականության հիմնարար սկզբունքները և համազգային նպատակները, իրականացրած ինքնիշխան պետության վերականգնման իր ազատասեր նախնիների սուրբ պատգամը, նվիրված հայրենիքի հզորացմանը և բարգավաճմանը, ապահովելու համար սերունդների ազատությունը, ընդհանուր բարեկեցությունը, քաղաքացիական համերաշխությունը, հավատարմությունը համամարդկային արժեքներին» համազգային նպատակների և Սահմանադրության մյուս դրույթներով իմաստային ուղղորդիչ նախանշում ունեցող՝ Սահմանադրության բարձրագույն ուժով օժտված իրավական ակտով, խտրաբար և խնամքով ընտրված և ձևակերպված ամրագրումների միջոցով Հայաստանին հանգեցրել է սահմանադրական կայունության ժամանակաշրջանի՝ արմատապես բացառելով «սահմանադրական երկիշխանության» ծայրահեղ վտանգավոր դրսևորումների իրավական հնարավորությունը»:

programme-paragraph 12 of which resulted in the adoption of the Constitution. This introduced in Armenia a period of constitutional stability through a legal act having semantic guiding designation and vested with supreme legal power of the Constitution, and through carefully and meticulously selected and formulated provisions, on the establishment of the sovereignty of the Republic of Armenia, democratic, and social state governed by the rule of law, stipulations of the nation-wide objectives "taking as a basis the fundamental principles of the Armenian Statehood and the nation-wide objectives enshrined in the Declaration of Independence of Armenia, having fulfilled the sacred behest of its freedom-loving ancestors for the restoration of the sovereign state, committed to the strengthening and prosperity of the fatherland, with a view of ensuring the freedom of generations, general well-being and civic solidarity, assuring the allegiance to universal values" indicated in the Preamble of the Constitution, thus profoundly excluding the legal possibility of any extremely dangerous manifestation of "constitutional dinarchy".

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐ

Սահմանադրական դատարանի որոշումները մարդու իրավունքների ոլորտում չեն սահմանափակվում միայն կոնկրետ սահմանադրական իրավունքի խախտման արձանագրմամբ կամ նորմի՝ իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության հակասահմանադրական ճանաչմամբ: Դրանք հանդես են գալիս որպես իրավաքաղաքական և դոկտրինալ ուղենիշներ, որոնց միջոցով ձևավորվում են մարդու իրավունքների սահմանադրական ընկալման բովանդակությունը, ծավալը և կիրառման մեխանիզմները: Այս առումով Սահմանադրական դատարանի որոշումների առանցքային գործառույթներից է մարդու իրավունքների բովանդակային մեկնաբանումը. Սահմանադրության տեքստում ամրագրված իրավունքները հաճախ ունեն ընդհանուր, վերացական բնույթ, և դրանց իրական իմաստը բացահայտվում է հենց Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների միջոցով: Այս իմաստով Սահմանադրական դատարանը գործում է որպես մարդու իրավունքների «կենդանի սահմանադրության» ձևավորող, իրավունքների ծավալը և սահմանները հստակեցնող և իրավունքի էության պահպանման երաշխավոր: Ավելին, մարդու իրավունքների ոլորտում Սահմանադրական դատարանի կայացրած որոշումները հաճախ դառնում են օրենսդրական բարեփոխումների մեկնակետեր: Դատարանի իրավական դիրքորոշումները պարտադրում են

THE DECISIONS OF THE CONSTITUTIONAL COURT AS A SOURCE OF CONSTITUTIONAL GUARANTEES FOR THE PROTECTION OF HUMAN RIGHTS

The decisions of the Constitutional Court rendered in the field of human rights are not limited to merely recording the violation of a specific constitutional right or declaring as unconstitutional the interpretation of a norm in legal practice. They serve as legal-political and doctrinal guidelines through which the content, scope, and mechanisms for applying the constitutional understanding of human rights are formed. In this regard, one of the key functions of the Constitutional Court's decisions is the substantive interpretation of human rights; the rights stipulated in the text of the Constitution often have a general, abstract nature, and their genuine meaning is revealed precisely through the legal positions of the Constitutional Court. In this sense, the Constitutional Court acts as the shaper of a "living constitution" of human rights, clarifying the scope and boundaries of rights and guaranteeing the preservation of the essence of the right. Moreover, the decisions of the Constitutional Court rendered in the field of human rights often become starting points for legislative reforms. The Court's legal positions compel the legislature to revise legal regulations, guiding the human-centered nature of legal policy. Thus, the

օրենսդրին՝ վերանայելու իրավակարգավորումները՝ ուղղորդելով իրավական քաղաքականության մարդակենտրոն բնույթը: Այսպիսով, Սահմանադրական դատարանի որոշումները կատարում են ոչ միայն վերականգնողական, այլև կանխարգելիչ դեր՝ կանխելով ապագա խախտումները:

Իր երեսնամյա պատմության մեջ Սահմանադրական դատարանը կայացրել է մարդու իրավունքների երաշխավորմանը միտված հարյուրավոր որոշումներ, որոնք, ի թիվս այլնի, ձևավորում են մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի մշակույթ, սահմանում են պետության և անձի հարաբերությունների սահմանադրական մոդելը, ամրապնդում մարդու արժանապատվության գերակայությունը՝ որպես սահմանադրական հիմնարար արժեք:

«ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով 2010 թվականի սեպտեմբերի 14-ի ՍԴՈ-913 որոշմամբ Սահմանադրական դատարանը խնդրո առարկա դրույթն այն մասով, որով առնչվում է Հայաստանում չիրականացվող փոխպատվաստման հանգամանքներում դիակային դոնորից օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելուն, ճանաչել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3-րդ հոդվածի 1-ին մասին և 14-րդ հոդվածին հակասող և անվավեր: Սույն որոշմամբ հստակ ընդգծվել է կենսաբժշկական միջամտությունների նկատմամբ կամքի ազատ արտահայտման ապահովման ներկայիս անհրաժեշտությունը մարդու արժանապատվության և անձնական անձեռնմխելիության երաշխավորման լույսի ներքո: Սույն

decisions of the Constitutional Court perform not only a restorative but also a preventive role, preventing future violations.

In its thirty-year history, the Constitutional Court has issued hundreds of decisions aimed at guaranteeing human rights, which, among other things, foster a culture of respect for human rights, define the constitutional model of relations between the state and the individual, and reinforce the supremacy of human dignity as a fundamental constitutional value.

In Decision DCC-913 of 14 September 2010 on the **"Case concerning the conformity with the Constitution of the Republic of Armenia of Article 7 of the RA Law 'On transplantation of human organs and/or tissues', raised by the application of the RA Human Rights Defender"**, the Constitutional Court declared the disputed provision as contradicting part 1 of Article 3 and Article 14 of the Constitution of the Republic of Armenia and invalid, insofar as it relates to the removal of organs and/or tissues from a cadaveric donor in circumstances where transplantation is not performed in Armenia. This decision clearly emphasized the unquestionable necessity of ensuring the free expression of will regarding biomedical interventions in light of guaranteeing human dignity and personal inviolability. This decision

որոշումը կոչված էր ներգործելու նաև հասարակության արժեքային համակարգի վրա՝ անհատի կամքը դարձնելով գերակա: Միևնույն ժամանակ, այն միտված է, ի թիվս այլնի, նաև առողջապահական համակարգի հանդեպ հանրային վստահության բարձրացմանը:

«Քաղաքացի Արթուր Խաչատրյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով 2013 թվականի նոյեմբերի 5-ի ՍԴՈ-1121 որոշմամբ Սահմանադրական դատարանն ազդարարեց բարոյական ոչ նյութական վնասի՝ որպես վնասի տարատեսակի և դրա հատուցման մեխանիզմների ներդրման անհրաժեշտությունը, ինչը հիմք հանդիսացավ հետագա օրենսդրական փոփոխությունների համար: Սույն որոշմամբ մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության և դրանցով պայմանավորված՝ բարոյական վնասի ինստիտուտին առնչվող կանոնակարգումների լիարժեքությունն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով՝ Սահմանադրական դատարանը գտել է, որ բարոյական վնասի նյութական փոխհատուցման ընդհանուր չափանիշներն ու կարգը պետք է օրենսդրորեն հստակ ամրագրվեն, որպեսզի երաշխավորվի համապատասխան դեպքերում և կարգով անձին պատճառված բարոյական վնասի ողջամիտ և արդարացի փոխհատուցումը, ապահովվի ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ մարդու իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացումը և չխոչընդոտվի Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնված միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարումը:

«ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի

was intended to also influence the society's value system, making the individual's will paramount. At the same time, it was aimed, *inter alia*, at increasing public trust in the healthcare system.

In Decision DCC-1121 of 5 November 2013 on the **"Case concerning the conformity with the Constitution of the Republic of Armenia of part 2 of Article 17 of the RA Civil Code, raised by the application of the citizen Arthur Khachatryan",** the Constitutional Court proclaimed the necessity of introducing moral non-material damage as a type of damage and mechanisms for its compensation, which served as a basis for subsequent legislative amendments. In this decision, proceeding from the necessity of ensuring the completeness of regulations related to the protection of human rights and freedoms and the institution of moral damage conditioned thereby, the Constitutional Court considered that the general standards and procedure for material compensation of moral damage must be clearly defined by the legislation so that reasonable and fair compensation for moral damage caused to a person in certain cases and procedures is guaranteed, the effective realization of human rights and freedoms guaranteed by the RA Constitution is ensured, and the good-faith fulfillment of international commitments undertaken by the Republic of Armenia is not hindered.

դիմումի հիման վրա՝ «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 20.1-ին հոդվածի 3-րդ մասի, 22-րդ հոդվածի 3-րդ պարբերության և ՀՀ առողջապահության նախարարի 2021 թվականի օգոստոսի 20-ի N 65-Ն հրամանի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով 2021 թվականի դեկտեմբերի 23-ի ՍԴՈ-1621 որոշմամբ Սահմանադրական դատարանը կարևորել է այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելման նպատակով պատվաստումային քաղաքականությունը մշակելիս և իրականացնելիս պետությունը, նախքան համապատասխան կառուցակարգերի ներդրումը, ինչպես նաև դրանց ներդրմանը զուգահեռ, գործուն միջոցներ ձեռնարկի պատվաստման վերաբերյալ հանրային պատշաճ իրազեկվածության, դրա մակարդակի բարձրացման ուղղությամբ՝ ներկայացնելով պատվաստման կանխարգելիչ նշանակության, պատվաստանյութերի անվտանգության և արդյունավետության, ինչպես նաև պատվաստվելու կամ չպատվաստվելու հնարավոր ռիսկերի և անցանկալի հետևանքների վերաբերյալ անհրաժեշտ և բավարար տեղեկատվություն: Սահմանադրական դատարանն ընդգծեց, որ կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) պայմանավորված համավարակի պայմաններում նշված հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելումը և դրա դեմ պայքարը յուրաքանչյուր պետության պոզիտիվ պարտականություններն են (այլ ոչ հայեցողությունը), և պետությունը պատվաստումային քաղաքականությունը մշակելիս ու իրականացնելիս առաջնահերթ պետք է

In Decision DCC-1621 of 23 December 2021 on the **"Case concerning the constitutionality of part 3 of Article 20.1, the third paragraph of Article 22 of the RA Law 'On ensuring the sanitary-epidemiological safety of the population of the Republic of Armenia', and Order N 65-N of the RA Minister of Health dated 20 August 2021, raised by the application of at least one fifth of the total number of deputies of the RA National Assembly",** the Constitutional Court emphasized the importance of the fact that when developing and implementing vaccination policy for the prevention of the spread of coronavirus disease (COVID-19) in the Republic of Armenia, the state should, prior to introducing appropriate mechanisms and in parallel with their introduction, take effective measures towards proper public awareness regarding vaccination, and increasing its level by providing necessary and sufficient information on the preventive significance of vaccination, the safety and effectiveness of vaccines, as well as possible risks and undesirable consequences of getting vaccinated or not. The Constitutional Court emphasized that in the conditions of the pandemic caused by coronavirus disease (COVID-19), the prevention of the spread of said disease (COVID-19) and the fight against it are the positive obligations of every state (not discretion), and when developing and implementing a vaccination policy, the state must primarily employ the instrumentality of persuasion. In this context, the improper organization

գործադրի համոզման գործիքակազմը: Այդ համատեքստում, հանրային իրազեկման արշավի ոչ պատշաճ կազմակերպումը և արդյունքում՝ հանրության ոչ բավարար իրազեկվածությունը, ինչպես նաև հոչակված սահմանադրական նպատակներին ուղղված գործիքակազմում չհիմնավորված բացառությունները ծնում են տարաբնույթ մտավախություններ պատվաստումային գործընթացի (լայն առումով) առնչությամբ՝ ընդհուպ կասկածի տակ դնելով նշված գործընթացի արդյունավետությունը:

«Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների դիմումի հիման վրա՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5, 7, 8, 37, 38, 45, 49 և 86-րդ հոդվածների սահմանադրականության վերաբերյալ» գործով Սահմանադրական դատարանի 2014 թվականի ապրիլի 2-ի ՍԴՈ-1142 որոշումը հիմնարար նշանակություն ունեցավ Հայաստանի Հանրապետությունում կուտակային կենսաթոշակային համակարգի ձևավորման համար՝ սահմանելով այն առանցքային սկզբունքները, որոնք պետք է դրվեն այս համակարգի հիմքում:

ՍԴՈ-1142 որոշմամբ Սահմանադրական դատարանը փաստել է, որ համեմատաբար ավելի մեծ հաջողություն են արձանագրում այն երկրները, որտեղ կենսաթոշակային ապահովման խնդրի լուծմանը մասնակցում են երեք հիմնական սուբյեկտներ՝ պետությունը, գործատուն և աշխատողը: Ավելին, Սահմանադրական դատարանը խնդրո առարկա որոշմամբ դիրքորոշում է արտահայտել կուտակային կենսաթոշակային համակարգի առավել արդյունավետ գործելու հնարավոր տարբերակի վերաբերյալ՝ արձանագրելով, որ հարցի ամբողջական լուծումը Ազգային ժողովի իրավասության շրջանակներում է: Սահմանադրական դատարանը գտել է, որ խնդրի համակարգային լուծման

of a public awareness campaign and the resulting insufficient public awareness, as well as unjustified exceptions in the instrumentality aimed at the proclaimed constitutional goals, give rise to various concerns regarding the vaccination process (in a broad sense) - up to questioning the effectiveness of the said process.

The Constitutional Court's Decision DCC-1142 of 2 April 2014, on the **"Case concerning the constitutionality of Articles 5, 7, 8, 37, 38, 45, 49, and 86 of the Law of the Republic of Armenia 'On funded pensions', raised by the application of the deputies of the National Assembly of the Republic of Armenia",** had fundamental significance for the formation of the funded pension system in the Republic of Armenia, establishing the key principles that should underlie this system.

In Decision DCC-1142, the Constitutional Court has stated that countries where the three main subjects - the state, the employer, and the employee - participate in solving pension provision matters have relatively greater success. Moreover, in the decision at issue, the Constitutional Court has expressed a position on a potentially more effective option for the operation of the funded pension system, noting that a complete solution to the issue lies within the competence of the National Assembly. The Constitutional Court has stated that ensuring such harmonious triunity is precisely one of the effective ways to resolve the issue systemically.

արդյունավետ ուղիներից մեկը հենց նման ներդաշնակ եռամիասնության ապահովումն է:

«Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով 2025 թվականի ապրիլի 16-ի ՍԴՈ-1776 որոշմամբ Սահմանադրական դատարանը հստակություն մտցրեց «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի վերաբերյալ իրավակիրառ պրակտիկայում առկա հակասական դիրքորոշումների կապակցությամբ:

Սահմանադրական դատարանը շեշտադրեց ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ վարույթների սահմանադրաչափության առանցքային սկզբունքները՝ փաստելով, որ խնդրո առարկա վարույթի շրջանակներում բռնագանձման ենթակա է՝ 1) այն գույքը, որը ձեռք է բերվել համապատասխան պաշտոնատար անձի՝ պաշտոնն ստանձնելու պահից հետո, ինչպես նաև 2) այն գույքը, որը կապ ունի համապատասխան հանցանքի հետ:

Այս որոշումը դոկտրինալ նշանակություն ունեցավ կոռուպցիայի դեմ աներկրա պայքար հայտարարած Հայաստանի Հանրապետության իրավակարգում՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ վարույթներով ուղղորդելով դատարաններին նշված վարույթներն իրականացնել սահմանադրական հունով, որի հետևանքը, ի շարս այլնի, նաև բազմաթիվ գործերով վարույթների կարճումն էր՝ հիմքում դնելով Սահմանադրական դատարանի՝ խնդրո առարկա որոշմամբ արտահայտած արժեքավոր դիրքորոշումները:

In Decision DCC-1776 of 16 April 2025 on the "**Case concerning the constitutionality of the Law 'On civil forfeiture of illegal assets', raised by the application of at least one fifth of the total number of deputies of the National Assembly of the Republic of Armenia",** the Constitutional Court brought clarity to the contradictory positions existing in legal practice regarding the RA Law "On civil forfeiture of illegal assets".

The Constitutional Court emphasized the key principles of the constitutionality of proceedings regarding the civil forfeiture of illegal assets, stating that subject to civil forfeiture in the framework of the proceedings in question are: 1) property acquired after the relevant official assumed the position, as well as 2) property related to a certain crime.

This decision had doctrinal significance in the legal system of the Republic of Armenia, which had declared an unquestionable fight against corruption, guiding courts to conduct said proceedings in a constitutional route in proceedings regarding the civil forfeiture of illegal assets, the consequence of which, among other things, was the termination of proceedings in numerous cases, based on the valuable positions expressed by the Constitutional Court in the decision in question.

«Արմեն Ավագյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով Սահմանադրական դատարանի 2025 թվականի մայիսի 20-ի ՍԴՈ-1782 որոշումը անձի՝ արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների արդյունավետ իրացման հնարավորությունը երաշխավորելու տեսանկյունից առանցքային նշանակություն ունի, քանզի սույն որոշմամբ հնարավորություն ստեղծվեց հաղթահարելու օրենսդրական կարգավորումների արդյունքում առաջացող այն դատավարական փակուղին, որը բազմաթիվ անձանց խոչընդոտում էր հասնել արդարադատության: Անդրադառնալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին իրավակիրառ պրակտիկայում տրված այն մեկնաբանության սահմանադրականությանը, որի համաձայն՝ մինչդատական վարույթում քննիչի, իրավասու դատախազի համապատասխան որոշումը (համապատասխանաբար՝ քրեական վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու և այլն), որում ամրագրված են քաղաքացիական/սնանկության գործի լուծման համար էական նշանակություն ունեցող և օրինական ուժի մեջ մտած դատական ակտի կայացման հիմքում ընկած՝ իրականությանը չհամապատասխանող գրավոր կամ իրեղեն ապացույցների առկայությունը վկայող հանգամանքները, որոնք գոյություն են ունեցել տվյալ գործի լուծման պահին, հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել բողոք բերած գործին մասնակցող անձին ու դատարանին, նույն օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի իմաստով

The Constitutional Court's Decision DCC-1782 of 20 May 2025, on the **"Case concerning the constitutionality of points 1 and 2 of part 1 of Article 418 of the Civil Procedure Code of the Republic of Armenia, raised by the application of Armen Avagyan",** is of key significance from the perspective of guaranteeing the possibility of effective realization of a person's rights to effective judicial protection and fair trial, as this decision created the opportunity to overcome the procedural deadlock arising from legislative regulations, which hindered many persons from achieving justice. Referring to the constitutionality of the interpretation in legal practice of point 1 of part 1 of Article 418 of the RA Civil Procedure Code - according to which the relevant decision of the investigator or authorized prosecutor in pre-trial proceedings (respectively, on terminating the criminal proceedings, ceasing criminal prosecution, etc.), where the circumstances testifying to the presence of written or material evidence not corresponding to reality, serving as basis for the adoption of a judicial act that has entered into legal force and having essential significance for the resolution of the civil/bankruptcy case, which existed at the time of the resolution of the given case, were not known and could not have been known to the person participating in the case who filed the complaint and to the court, cannot be qualified as

չի կարող որակվել որպես «նոր երևան եկած հանգամանք»՝ հաշվի առնելով Օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված իրավակարգավորումը, որը դատական ակտը վերանայելու համար անհրաժեշտ պայման է նախատեսում դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված՝ գրավոր կամ իրեղեն ապացույցների կեղծված լինելը, Սահմանադրական դատարանը փաստել է, որ գործնականում չեն բացառվում իրավիճակներ, երբ քրեական վարույթի շրջանակներում փաստվեն անձի կողմից ոչ իրավաչափ վարքագծով պայմանավորված այնպիսի հանգամանքներ, որոնք գոյություն են ունեցել գործի լուծման պահին, հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել բողոք բերած գործին մասնակցող անձին ու դատարանին, ուստի՝ դրանք պետք է նոր երևան եկած հանգամանքի ուժով դատական ակտերը վերանայելու համար հիմք հանդիսանան:

Սույն որոշմամբ, փաստորեն, մինչդատական վարույթի շրջանակներում կայացված այս որոշումները կարող են քաղաքացիադատավարական կարգով, որպես նոր երևան եկած հանգամանք, հիմք հանդիսանալ դատական ակտի վերանայման համար՝ երաշխավորելով անձանց արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները:

«Հայկ Մելքոնյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 123-րդ հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով 2025 թվականի սեպտեմբերի 30-ի ՍԴՈ-1798 որոշմամբ Բարձր դատարանն ուղենշային նշանակություն ունեցող իր դիրքորոշմամբ ազդարարեց, որ տնային կալանքի կիրառման կարգի, ժամկետների և բողոքարկման վրա տարածվում են կալանքի

a "newly emerged circumstance" in the sense of point 1 of part 1 of Article 418 of the same Code, taking into account the legal regulation prescribed by point 2 of part 1 of Article 418 of the Code, which provides as a necessary condition for reviewing a judicial act the establishment by a court judgment that has entered into legal force of the falsity of written or material evidence - the Constitutional Court has stated that in practice, situations are not excluded where, in the framework of criminal proceedings, circumstances conditioned by a person's unlawful conduct are established, which existed at the time of the resolution of the case, were not known and could not have been known to the person participating in the case who filed the complaint, and to the court; therefore, they must serve as a basis for reviewing judicial acts upon the grounds of a newly emerged circumstance.

In this decision, in fact, these decisions rendered in the framework of pre-trial proceedings can serve as a basis for reviewing a judicial act as a newly emerged circumstance in civil procedure, guaranteeing persons' rights to effective judicial protection and fair trial.

In Decision DCC-1798 of 30 September 2025 on the **"Case concerning the constitutionality of Article 123 of the Criminal Procedure Code of the Republic of Armenia, raised by the application of**

վերաբերյալ համապատասխան դրույթները, այդ թվում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 121-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ կալանքից ազատված անձին կրկին կալանավորելու երաշխիքները: ՍԴՈ-1798 որոշումը, ըստ էության, կանխեց այն արատավոր պրակտիկայի ձևավորումը, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 121-րդ հոդվածի դրույթները կիրառելի չեն տնային կալանք այլընտրանքային խափանման միջոցի նկատմամբ, քանի որ օրենսդիրը, «կալանք» խափանման միջոցը գնահատելով որպես ամենախիստ խափանման միջոց, դրա կրկին կիրառման համար նախատեսել է նոր էական հանգամանքների և դրանց քննարկման իմպերատիվ անհրաժեշտությունը՝ իրավակիրառ պրակտիկան ուղղորդելով դեպի սահմանադրական հուն՝ Սահմանադրության 27-րդ հոդվածով երաշխավորված անձնական ազատության իրավունքը դիտարկելով որպես հիմնարար սահմանադրական արժեք:

Մարդու իրավունքների երաշխավորման ոլորտում Բարձր դատարանի կայացրած հարյուրավոր որոշումների շարքում, ի թիվս այլ դիրքորոշումների, առանցքային նշանակություն ունեն հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման սահմանադրաչափության վերաբերյալ դիրքորոշումները, որոնք Սահմանադրական դատարանը զարգացրել է տարիներ շարունակ:

Պատմությունը վկայում է, որ Կառավարությունը դատական և իրավական բարեփոխումների ռազմավարություններում հանրության գերակա շահերի ապահովման նպատակով (հասարակության և պետության կարիքների համար) սեփականության օտարումներն առանձնացրել է որպես

Hayk Melkonyan”, the High Court expressed a guiding position proclaiming that the rules, terms, and appeal procedures for applying house arrest shall extend to the relevant provisions regarding detention, including the guarantees for re-detaining a person released from detention prescribed by part 1 of Article 121 of the RA Criminal Procedure Code. Decision DCC-1798, in essence, prevented the formation of the vicious practice that the provisions of Article 121 of the RA Criminal Procedure Code shall not apply to the alternative preventive measure of house arrest, since the legislature, assessing the preventive measure of “detention” as the strictest preventive measure, has provided for the imperative necessity of examination of new essential circumstances for the re-application of detention, thus guiding legal practice towards a constitutional route, considering the right to personal liberty guaranteed by Article 27 of the Constitution as a fundamental constitutional value.

Among the hundreds of decisions rendered by the High Court in the field of guaranteeing human rights, *inter alia*, the positions regarding the constitutionality of expropriation of property for the purpose of ensuring overriding public interests, which the Constitutional Court has developed over the years, are of key significance.

հայաստանյան իրականության շրջանակներում մարդու իրավունքների զանգվածային խախտումների ոլորտներից մեկը: Այս առումով Սահմանադրական դատարանի որոշումները, առաջին հերթին, կատարում են հավասարակշռող գործառույթ. հաշվի առնելով, որ այս գործընթացում էապես սահմանափակվում են անհատական իրավունքները՝ Բարձր դատարանն իր դիրքորոշումներում մշտապես շեշտում է համաչափության սահմանադրաիրավական սկզբունքի անվերապահ պահպանման անհրաժեշտությունը: Սույն մոտեցումը Սահմանադրական դատարանը դարձնում է ոչ թե հանրային շահի անվերապահ պաշտպան, այլ դրա սահմանադրաչափության երաշխավոր:

Ավելին, Սահմանադրական դատարանի դիրքորոշումները կարևոր են հանրային իշխանությունների հայեցողության սահմանափակման տեսանկյունից: Սահմանադրական դատարանի որոշումները հստակեցնում են, որ հանրային շահը չի կարող ծառայել որպես համընդհանուր արդարացում՝ շրջանցելու Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների ապահովման ստանդարտը: Բացի դրանից, Բարձր դատարանի դիրքորոշումներն ունեն երկարաժամկետ համակարգային ազդեցություն: Դրանք ձևավորում են իրավակիրառական կայուն պրակտիկա, ուղղորդում են օրենսդրական քաղաքականությունը և նպաստում հանրային վստահության ամրապնդմանը սահմանադրական արդարադատության նկատմամբ:

Սահմանադրական դատարանի դիրքորոշումները հանրային գերակա շահերի ապահովման ոլորտում հանդիսանում են սահմանադրական պետության արժեքային առանցքը, որտեղ հանրային և մասնավոր շահերի բախումը լուծվում է ոչ թե քաղաքական նպատակահարմարությամբ, այլ

History testifies that in strategies for judicial and legal reforms, the Government has singled out expropriations of property for the needs of society and the state (for overriding public interests) as one of the areas of mass human rights violations in the Armenian reality. In this regard, the decisions of the Constitutional Court primarily perform a balancing function; so, taking into account that individual rights are significantly restricted in this process, the High Court consistently emphasizes in its positions the imperative need to unconditionally preserve the constitutional-legal principle of proportionality. This approach makes the Constitutional Court not an unconditional defender of the public interest, but rather the guarantor of its constitutionality.

Furthermore, the positions of the Constitutional Court are important from the perspective of limiting the discretion of public authorities. The decisions of the Constitutional Court clarify that the public interest cannot serve as a universal justification for circumventing the unquestionable requirement to ensure rights guaranteed by the Constitution. In addition, the positions of the High Court have a long-term systemic impact. They shape stable legal practice, guide legislative policy, and contribute to strengthening public trust in constitutional justice.

Սահմանադրության գերակայության, իրավունքի լիիշխանության և մարդու արժանապատվության առաջնայնության սկզբունքներով:

Այս առումով հատկանշական են, ի շարս այլնի, նաև Սահմանադրական դատարանի ներքոնշյալ որոշումները.

«Ազգային ժողովի կողմից 1995 թվականի դեկտեմբերի 27-ին ընդունված «Անշարժ գույքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22 հոդվածի երկրորդ, երրորդ, չորրորդ և հինգերորդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 8 հոդվածին և 28 հոդվածի երկրորդ մասին համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով 1998 թվականի փետրվարի 27-ին կայացրած ՍԴՈ-92 որոշմամբ բացահայտելով հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման ինստիտուտի սահմանադրական բովանդակությունը՝ Սահմանադրական դատարանը նշել է, որ Սահմանադրությունն ամրագրում է, որ սեփականության օտարումը հասարակության և պետության կարիքների համար կարող է կատարվել միայն բացառիկ դեպքերում, օրենքի հիման վրա՝ նախնական համարժեք փոխհատուցմամբ: Այսպիսով, որպես սեփականության օտարման հիմք է ճանաչվում «պետության և հասարակության կարիքները», իսկ օտարվող գույքի սեփականատիրոջ իրավունքների պաշտպանության երաշխիքներ են համարվում օտարումը՝ «միայն բացառիկ դեպքերում», օտարումը՝ «օրենքի հիման վրա», օտարումը՝ «օտարվող գույքի նախնական համարժեք փոխհատուցմամբ»: Այս որոշմամբ Բարձր դատարանը նախանշել է սույն գործընթացի սահմանադրաչափության տարրերն ու որակները, որոնք

The positions of the Constitutional Court in the field of ensuring overriding public interests serve as the value axis of the constitutional state, where the conflict between public and private interests is resolved not by political expediency, but by the principles of the supremacy of the Constitution, the rule of law, and the primacy of human dignity.

In this context, *inter alia*, the following decisions of the Constitutional Court are particularly noteworthy:

In Decision DCC-92 of 27 February 1998 on the **"Case concerning the conformity of the second, third, fourth, and fifth parts of Article 22 of the Law of the Republic of Armenia 'On immovable property', adopted by the National Assembly on 27 December 1995, with Article 8 and part 2 of Article 28 of the Constitution of the Republic of Armenia",** the Constitutional Court revealed the constitutional content of the institution of expropriation of property for the needs of society and the state, noting that the Constitution establishes that expropriation of property for the needs of society and the state may be carried out only in exceptional cases, based on the law, with prior equivalent compensation. Thus, "the needs of the state and society" are considered as the basis for expropriation of property, while expropriation "in exceptional cases", expropriation "based on the law", and

հետագայում զարգացրել է իր առանձին որոշումների շրջանակներում:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 218 հոդվածի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 104, 106 և 108 հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2002 թվականի օգոստոսի 1-ին ընդունված՝ «Երևանի Կենտրոն թաղային համայնքի վարչական սահմանում կառուցապատման ծրագրերի իրականացման միջոցառումների մասին» թիվ 1151-Ն որոշման՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 31 հոդվածին համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով 2006 թվականի ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշմամբ Սահմանադրական դատարանը հստակ արձանագրեց, որ պետությունը պարտավոր է օրենքի միջոցով սահմանել հասարակության և պետության կարիքների համար սեփականությունը հարկադիր օտարելու կարգը, ինչը պետք է ապահովի սեփականատիրոջ իրավունքը՝ նախապես իմանալու, թե ինչու է հարկադիր միջամտություն ցուցաբերվում սեփականության իր իրավունքին և ինչ կոնկրետ կարիքների համար է սեփականությունն օտարվում. եթե հանրային կարիքների համար սեփականության հարկադիր օտարում է տեղի ունենում՝ առանց օրենսդրորեն հստակ սահմանելու և գործնականում հաշվի առնելու օտարման սահմանափակումների վերաբերյալ սահմանադրական պահանջները, ապա դա կլինի անհամաչափ միջամտություն սեփականության իրավունքին:

«Ռուբեն Գրիգորյանի և Գոհար Գալստյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածի՝ Սահմանադրությանը համապա-

expropriation "with prior adequate compensation" for the expropriated property are considered to be the guarantees for the protection of the rights of the owner of the expropriated property. In this decision, the High Court outlined the elements and qualities of the constitutionality of this process, which were subsequently developed within the framework of certain decisions of the Court.

In Decision DCC-630 of 18 April 2006 on the **"Case concerning the conformity of Article 218 of the Civil Code of the Republic of Armenia, Articles 104, 106, and 108 of the Land Code of the Republic of Armenia, and Government Decision No. 1151-N of 1 August 2002, 'On measures for the implementation of development programs in the administrative boundaries of the Kentron Community of Yerevan', with Article 31 of the Constitution of the Republic of Armenia",** the Constitutional Court clearly stated that the state is obliged to regulate by law the procedure for compulsory expropriation of property for the needs of society and the state, which must ensure the owner's right to get informed in advance why compulsory interference is being exercised in their property right and for what specific needs the property is being expropriated; namely, where compulsory alienation of property for public needs occurs without clear legislative prescription and practical consideration of

տասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով 2023 թվականի նոյեմբերի 7-ի ՍԴՈ-1699 որոշմամբ Բարձր դատարանը փաստեց, որ Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված միջամտության (օտարման) համար Սահմանադրի կողմից ամրագրվել է նման միջամտությունը «միայն նախնական և համարժեք փոխհատուցմամբ» իրականացնելու պայման-երաշխիքը, որի ազդեցությամբ օտարվող գույքի սեփականատերը, ունենալով դրա դիմաց «նախնական և համարժեք փոխհատուցման» պահանջի իրավունքը, պաշտպանվում է նման միջամտության դեպքում անհամաչափ ծանրության բեռ կրելու հնարավոր հետևանքից: Սույն որոշմամբ Սահմանադրական դատարանն ազդարարեց, որ օտարվող գույքի սեփականատերն ունի դրա դիմաց «նախնական և համարժեք փոխհատուցման» պահանջի բացարձակ իրավունք: Բացարձակ իրավունքի որակը բացառում է իշխանության միջամտության հնարավորությունը, հանրային իշխանությանը ծանրաբեռնում է այդ իրավունքի իրականացման նպատակով ձեռնարկելու դրա արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր, վերաբերում է հանրության գերակա շահերի ապահովման նպատակով (հասարակության և պետության կարիքների համար) օտարված սեփականության դիմաց օտարված գույքի սեփականատիրոջ՝ Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասի հիմքով «նախնական և համարժեք փոխհատուցման» պահանջի իրավունքին: Ավելին, սույն որոշմամբ Բարձր դատարանը գտել է, որ Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված «նախնական և համարժեք փոխհատուցման» պահանջի իրավունքի նկատմամբ Քաղաքացիական օրենսգրքով

the constitutional requirements regarding the restrictions on alienation, it will constitute disproportionate interference in the right to property.

In Decision DCC-1699 of 7 November 2023 on the **"Case concerning the constitutionality of Article 344 of the Civil Code of the Republic of Armenia, raised by the application of Ruben Grigoryan and Gohar Galstyan",** the High Court stated that the Constituent has stipulated the condition-guarantee for implementing the interference (expropriation) prescribed by part 5 of Article 60 of the Constitution "only with prior adequate compensation", and the owner of the property expropriated under such conditions, having the right to request "prior adequate compensation" for the property, shall be protected from the possible consequence of disproportionate burden in case of such interference. In this decision, the Constitutional Court declared that the owner of the expropriated property has an absolute right to request "prior adequate compensation" for it. The quality of the absolute right excludes the possibility of interference by the authorities, burdens the public power to undertake the organisational structures and procedures necessary for its effective implementation in order to exercise that right, and refers to the right of the owner of the expropriated property to claim "prior adequate compensation" under part

նախատեսված հայցային վաղեմության բացառման ցանկում 1999 թվականի հունվարի 1-ից մինչև 2006 թվականի հոկտեմբերի 1-ը ժամանակահատվածում սեփականատիրոջ համաձայնության բացակայությամբ հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման իրավահարաբերություններից բխող վեճերում նախնական և համարժեք փոխհատուցման պահանջը չնախատեսելը չի կարող մեկնաբանվել որպես հայցային վաղեմության կիրառման հիմք, քանի որ Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասի հիման վրա՝ սեփականատիրոջ համաձայնության բացակայությամբ օտարված գույքի դիմաց նախնական և համարժեք փոխհատուցման պահանջների նկատմամբ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով նախատեսված հայցային վաղեմության ժամկետների վերաբերյալ դրույթներն առհասարակ չեն կարող տարածվել: Այսպիսով, արձանագրելով, որ սեփականատիրոջ համաձայնության բացակայությամբ օտարված գույքի դիմաց նախնական և համարժեք փոխհատուցման պահանջների նկատմամբ հայցային վաղեմության ժամկետների վերաբերյալ դրույթներն առհասարակ չեն կարող տարածվել:

«Արամայիս, Համասփյուռ, Արմինե, Արման, Արշակ, Լևոն, Մանուշակ Ալիխանյանների և այլոց դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով 2025 թվականի փետրվարի 11-ի ՍԴՈ-1769 որոշմամբ Սահմանադրական դատարանն իր դիրքորոշմամբ փաստեց, որ Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված՝ հանրության գերակա շահերի ապահովման նպատակով

5 of Article 60 of the Constitution only for the property expropriated for the purpose of ensuring overriding public interests (for the needs of society and the state). Furthermore, in this decision the High Court found that the failure to define the requirement of prior adequate compensation for expropriation of property for the needs of society and the state without the owner's consent in disputes arising from legal relations regulated by the legal provisions effective from 1 January 1999 to 1 October 2006, in the list of the statute of limitations prescribed by the Civil Code with respect to the right to claim "prior adequate compensation" prescribed by part 5 of Article 60 of the Constitution, cannot be interpreted as a basis for applying the statute of limitations, since under part 5 of Article 60 of the Constitution, the provisions on the statute of limitations prescribed by the Civil Code of the Republic of Armenia cannot, in general, apply to the claims for prior adequate compensation for the property expropriated without the owner's consent. Thus, it was stated that the provisions on the statute of limitations cannot, in general, apply to the claims for prior adequate compensation for the property expropriated without the owner's consent.

In Decision DCC-1769 of 11 February 2025 on the **"Case concerning the constitutionality of point 2**

սեփականության օտարման դիմաց նախնական և համարժեք փոխհատուցման որևէ սկզբունքի սահմանափակումը չի կարող սահմանադրաչափ համարվել՝ ընդգծելով, որ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրի հիման վրա գործող դատարանում գործին չմասնակցած անձի կողմից, որը նույն դատարանի վճռի կամ որոշման կայացման պահին չի ունեցել այդ դատարան դիմելու իրավունքը միջազգային պայմանագրով նախատեսված պահանջներին (ժամկետներին) համապատասխան իրացնելու հնարավորություն, Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված՝ հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման դիմաց նախնական և համարժեք փոխհատուցման որևէ սկզբունքի՝ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրի հիման վրա գործող դատարանի կողմից խախտված ճանաչվելու դեպքում նոր հանգամանքով դատական ակտի վերանայման բողոք ներկայացնելու՝ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված սահմանափակումը հակասում է Սահմանադրությանը: Նույն որոշմամբ Սահմանադրական դատարանը միաժամանակ նշեց, որ սույն դիրքորոշումը չի բացառում օրենսդրի հայեցողությունը՝ այս խմբի մեջ մտնող անձանց մասով նույնպես սահմանելու ժամկետային սահմանափակումներ՝ պայմանով, որ դրանք ողջամտորեն համահունչ կլինեն նրանց կողմից Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված իրավունքի առանձնահատկություններին: Բարձր դատարանի այս որոշումը հույսի շող էր բազմաթիվ սեփականատերերի համար, որոնք, հուսալքվելով ներպետական դատական ատյաններում, իրենց

of part 1 of Article 419 of the Civil Procedure Code of the Republic of Armenia, raised by the application of Aramayis, Hamaspyur, Armine, Arman, Arshak, Levon, Manushak Alikhanyans and others”, the Constitutional Court expressed the position that any restriction on the principles of prior adequate compensation for expropriation of property for prevailing public interests, as prescribed by part 5 of Article 60 of the Constitution, cannot be considered as constitutional, emphasizing that the restriction prescribed by point 2 of part 1 of Article 419 of the Civil Procedure Code contradicts the Constitution, where under that restriction, the person who did not participate in the case trial at the court operating on the basis of an international treaty ratified by the Republic of Armenia – deprived of the opportunity to exercise the right to apply to that court following the requirements (time limits) prescribed by the international treaty at the time the judgment or decision of the same court was adopted – could not file a complaint for review of a judicial act based on a new circumstance in the event the court operating on the basis of an international treaty ratified by the Republic of Armenia has declared violated any of the principles of prior adequate compensation for expropriation of property for prevailing public interests, as prescribed by part 5 of Article 60 of the Constitution. In the same decision, the Constitutional Court simultaneously noted that this position does not exclude the legislature’s discretion

իրավունքների պաշտպանության նկատառումներով չէին դիմել Մարդու իրավունքների եվրոպական դատարան:

Շարունակելով Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված՝ հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման դիմաց նախնական և համարժեք փոխհատուցման բացարձակ իրավունքի երաշխավորմանը միտված իր իրավաբանությունը՝ Սահմանադրական դատարանը **«Մարինե Կպրյանի և Անժելա Ասրիբաբայանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 427-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ»** գործով 2025 թվականի սեպտեմբերի 23-ի ՍԴՈ-1797 որոշմամբ հստակ արձանագրել է, որ կոնվենցիոն իրավունքի խախտում թույլ տված դատական ակտն անվերապահորեն նոր հանգամանքի հիմքով ենթակա է բեկանման, ընդ որում՝ Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասով ամրագրված երաշխիքների տրամադրումը կարող է բացահայտվել բացառապես վերանայվող դատական ակտի բեկանումից հետո, և չի կարող մեկնաբանվել որպես կրկնակի փոխհատուցման պահանջ: Այս որոշմամբ Սահմանադրական դատարանն ուղղորդեց եռաստիճան դատական համակարգին նաև դատական ակտի բեկանումից հետո պարտադիր պարզաբանման ենթակա հանգամանքների գնահատման շրջանակի կապակցությամբ՝ ընդգծելով, որ գործի նոր քննության ընթացքում դատարանը պետք է պարզի՝ արդյոք գույքի իրավատիրոջը

to also establish time limits for this group of persons, provided that they are reasonably consistent with the specifics of the right prescribed by part 5 of Article 60 of the Constitution. This decision of the High Court was a ray of hope for many owners who, having lost faith in domestic judicial instances, had not applied to the European Court of Human Rights for the protection of their rights.

Continuing its jurisprudence aimed at guaranteeing the absolute right to prior adequate compensation for expropriation of property for the purpose of ensuring overriding public interests, as prescribed by part 5 of Article 60 of the Constitution, in Decision DCC-1797 of 23 September 2025 on the **“Case concerning the constitutionality of part 2 of Article 427 of the Civil Procedure Code of the Republic of Armenia, raised by the application of Marine Kpryan and Anzhela Asribabayan”,** the Constitutional Court clearly stated that a judicial act that has allowed a violation of conventional law is unconditionally subject to annulment based on new circumstances; moreover, the provision of guarantees stipulated by part 5 of Article 60 of the Constitution can be revealed only after the annulment of the reviewed judicial act and cannot be interpreted as a demand for double compensation. In this decision, the Constitutional Court also guided the three-tier judicial system regarding the scope of assessment of circumstances subject to mandatory clarification after the annulment of the judicial act,

տրամադրվել է ներպետական չափանիշներին համապատասխան փոխհատուցում՝ հաշվի առնելով.

- փոխհատուցման գումարի նախապես վճարված լինելու կամ չլինելու հանգամանքը, և ըստ այդմ՝ փաստացի փոխհատուցման պահին գույքի շուկայական արժեքը, անձի կրած վնասներն ամբողջ ծավալով վճարելու անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով նաև փաստացի փոխհատուցման պահի դրությամբ գույքի արժեքի տարբերությունը:
- գույքի ընթացիկ եկամտաբերությունը,
- գույքի շահագործման հնարավորությունները,
- գույքի փոխարինելիության աստիճանը և անհատական հետևանքային այլ ազդեցության գործոնները գույքի իրավատիրոջ կյանքի վրա և այլ վնասների փաստացի փոխհատուցված լինելը:

«Էմմա Թունյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով 2025 թվականի նոյեմբերի 6-ի ՍԴՈ-1801 որոշմամբ Սահմանադրական դատարանը, զարգացնելով 2025 թվականի փետրվարի 11-ի ՍԴՈ-1769 որոշմամբ (բայց ոչ միայն) արտահայտած իրավական դիրքորոշումները, գտել է, որ դատական ակտը նոր հանգամանքով ենթակա է վերանայման, եթե Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրի հիման վրա գործող միջազգային դատարանի՝ ընդդեմ Հայաստանի Հանրապետության գործով ուժի մեջ մտած վճռով կամ որոշմամբ հիմնավորվել է

emphasizing that in the process of new examination of the case, the court must clarify whether the property right holder has been provided with compensation corresponding to domestic standards, taking into account the following:

- the circumstance of whether the compensation amount was paid in advance or not, and accordingly, the market value of the property at the time of actual compensation, the need to pay the full extent of damages suffered by the person, taking into account the difference in the value of the property at the time of actual compensation;
- the current income-generating capacity of the property;
- the possibilities for exploitation of the property;
- the degree of replaceability of the property and other consequential individual impact factors on the life of the property right holder, and the actual compensation for other damages.

In Decision DCC-1801 of 6 November 2025 on the **"Case concerning the constitutionality of point 2 of part 1 of Article 419 of the Civil Procedure Code of the Republic of Armenia, raised by the application of Emma Tunyan",** the Constitutional Court developed (but not only) the legal positions expressed in Decision DCC-1769 of 11 February 2025, and found that a judicial act shall be subject to

Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը՝ Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված՝ հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման դիմաց նախնական և համարժեք փոխհատուցման որևէ սկզբունքի խախտված ճանաչվելու դեպքում՝ հաշվի առնելով նաև այդ համատեքստում ներպետական դատական ատյանների կողմից Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրի հիման վրա գործող միջազգային դատարանի՝ ընդդեմ Հայաստանի Հանրապետության գործով ուժի մեջ մտած վճռով կամ որոշմամբ արտահայտված վերաբերելի իրավական դիրքորոշումներից շեղվելու հանգամանքը՝ անկախ տվյալ գործին անձի մասնակից լինելու հանգամանքից:

Սույն որոշմամբ, փաստորեն, յուրաքանչյուր դեպքում, երբ ընդդեմ Հայաստանի Հանրապետության գործով ուժի մեջ մտած վճռով կամ որոշմամբ հիմնավորվել է Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը՝ Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված՝ հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման դիմաց նախնական և համարժեք փոխհատուցման որևէ սկզբունքի խախտված ճանաչվելու դեպքում անձն իրավունք ունի հայցելու իր նկատմամբ կայացված դատական ակտի՝ նոր հանգամանքով վերանայում՝ անկախ այն հանգամանքից, թե վերջինս մասնակից եղել է միջազգային ատյանում գործի քննությանը, թե՝ ոչ:

review based on new circumstances where by a final judgment or decision of an international court operating on the basis of an international treaty ratified by the Republic of Armenia, adopted in a case against the Republic of Armenia, a violation of a right provided by an international treaty ratified by the Republic of Armenia has been established in cases where a violation of any principle of prior adequate compensation for expropriation of property for the purpose of ensuring overriding public interests under part 5 of Article 60 of the Constitution is recognized, taking into account also the circumstance of deviation by domestic judicial instances from the relevant legal positions expressed in such a final judgment or decision of an international court operating on the basis of an international treaty ratified by the Republic of Armenia, adopted in a case against the Republic of Armenia, regardless of the person's participation in that case.

Thus, according to this decision, in fact, in every case where a violation of a right prescribed by an international treaty ratified by the Republic of Armenia has been established by a final judgment or decision of an international court adopted in a case against the Republic of Armenia - where a violation of any principle of prior adequate compensation for expropriation of property for the purpose of ensuring overriding public interests under part 5 of Article 60 of the Constitution is recognized - the person has

Ընդ որում՝ նման լայն հնարավորություն ընձեռվել է բացառապես Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված՝ հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման դիմաց նախնական և համարժեք փոխհատուցման որևէ սկզբունքի խախտված ճանաչվելու դեպքում՝ հաշվի առնելով նախկինում Բարձր դատարանի որոշումներով սույն իրավունքի բացարձակ բնույթը հանրահռչակվելու հանգամանքը:

the right to claim a review of the judicial act adopted against them based on new circumstances, regardless of whether or not they participated in the proceedings before the international instance or not.
Moreover, such a broad opportunity has been granted exclusively in cases where a violation of any principle of prior adequate compensation for expropriation of property for the purpose of ensuring overriding public interests under part 5 of Article 60 of the Constitution is recognized, taking into account the circumstance that the absolute nature of this right has been proclaimed in previous decisions of the High Court.

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՊ ՀԱՆՐԱՅԻՆ ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՀԻՄՆԱՐԱՐ ԳՈՐԾԻՔ

Երեսնամյա պատմության ժամանակարնթացքում Սահմանադրական դատարանի որոշումները հանդես են եկել նաև որպես դատական իշխանության հանդեպ հանրային վստահության ձևավորման, պահպանման և ամրապնդման հիմնարար գործիքներ՝ պայմանավորելով ոչ միայն սահմանադրական վերահսկողության արդյունավետությունը, այլև ողջ դատական համակարգի լեգիտիմության հանրային ընկալումը:

Այս համատեքստում Սահմանադրական դատարանի յուրաքանչյուր որոշում գործում է երկակի հարթությունում. մի կողմից՝ որպես կոնկրետ սահմանադրաիրավական վեճի լուծում, մյուս կողմից՝ որպես հանրային ուղերձ՝ ուղղված հասարակությանը, հանրային իշխանության մարմիններին և իրավակիրառ սուբյեկտներին: Որոշումների իրավական հիմնավորվածությունը, ներքին տրամաբանական ամբողջականությունը, սահմանադրական արժեքների հստակ արժևորումը և մարդու իրավունքների միջազգային չափանիշների համադրումը նպաստում են այն ընկալմանը, որ դատական իշխանությունը գործում է ոչ թե պահի նպատակահարմարությամբ, այլ իրավական կանխատեսելիության և արժեքային հետևողականության շրջանակում:

Հանրային վստահության տեսանկյունից առանձնահատուկ նշանակություն ունի այն

THE DECISIONS OF THE CONSTITUTIONAL COURT AS A FUNDAMENTAL TOOL FOR STRENGTHENING PUBLIC TRUST IN THE JUDICIARY

Over the course of thirty years of history, the decisions of the Constitutional Court have also served, *inter alia,* as fundamental tools for forming, maintaining, and strengthening public trust in the judiciary, conditioning not only the effectiveness of constitutional control but also the public perception of the legitimacy of the entire judicial system.

In this context, each decision of the Constitutional Court operates on a dual plane: on the one hand, as a resolution of a specific constitutional-legal dispute, and on the other hand, as a public message directed to society, public authorities, and law enforcement authorities. The legal substantiation of the decisions, their internal logical completeness, the precise assessment of constitutional values, and the combination with international human rights standards contribute to the perception that the judiciary operates not according to the expediency of the moment, but within the framework of legal foreseeability and value consistency.

From the perspective of public trust, particular importance is attached to the fact that the decisions of

հանգամանքը, որ Սահմանադրական դատարանի որոշումները հաճախ անդրադառնում են հանրային բարձր զգայունություն ունեցող հարցերին՝ իշխանությունների բաժանման և հավասարակշռման, դատական իշխանության անկախության, մարդու հիմնարար իրավունքների սահմանափակման թույլատրելիության, ինչպես նաև հանրային գերակա շահի և անհատական իրավունքների հավասարակշռության խնդիրներին: Այդպիսի գործերով արտահայտված հստակ և սկզբունքային դիրքորոշումները նպաստում են այն համոզմունքի ձևավորմանը, որ դատական իշխանությունը հանդիսանում է իրական հակակշիռ այլ իշխանություններին և ապահովում է սահմանադրական կարգի կայունությունը:

Արդյունքում, Սահմանադրական դատարանի որոշումները հանդես են գալիս որպես դատական իշխանության հանդեպ հանրային վստահության ինստիտուցիոնալ կապիտալ կուտակող գործոն՝ նպաստելով իրավական պետության գաղափարի գործնական իրագործմանը, սահմանադրական մշակույթի խորացմանը և հասարակության ու դատարանների միջև կայուն վստահության հարաբերությունների ձևավորմանը:

«Հանրապետության նախագահի դիմումի հիման վրա՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից 2021 թվականի մարտի 19-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի և հարակից՝ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին»

the Constitutional Court often address issues of high public sensitivity, namely, the separation and balancing of powers, the independence of the judiciary, the permissibility of restricting fundamental human rights, as well as the problems of balancing overriding public interest and individual rights. The clear and principled positions expressed in such cases contribute to the formation of the conviction that the judiciary is a real counterweight to other powers and ensures the stability of the constitutional order. As a result, the decisions of the Constitutional Court act as a factor accumulating institutional capital of public trust in the judiciary, contributing to the practical realization of the idea of the rule of law state, the deepening of constitutional culture, and the formation of stable relations of trust between society and the courts.

In Decision DCC-1613 of 12 October 2021 on the **"Case concerning the constitutionality of the Constitutional Law 'On making amendments and supplements to the Constitutional Law 'Judicial Code of the Republic of Armenia' adopted by the RA National Assemblyon on 19 March 2021, and adjunct laws 'On making supplements to the RA Criminal Procedure Code' and 'On making supplements to the Law 'On state duty', raised by the application of the President of the Republic",** the Constitutional Court stated that the contested provisions regarding the selection by the

օրենքների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով 2021 թվականի հոկտեմբերի 12-ի ՍԴՈ-1613 որոշմամբ Սահմանադրական դատարանը փաստեց, որ Բարձրագույն դատական խորհրդի կողմից «առանձին բարդության գործեր» քննող դատավորներ ընտրելու վերաբերյալ վիճարկվող դրույթները կարող են հանգեցնել դատավորների անհիմն տարբերակման, ուստի՝ նաև դատավորի ընդհանուր կարգավիճակի միասնականության սկզբունքի խախտման արդյունքում՝ դատավորների անկախության և արդարադատության շահերի ոտնահարման: Բացի դրանից, անկողմնակալ դիտորդի մոտ կարող է առաջացնել ողջամիտ կասկած՝ մնացած դատավորների ոչ արհեստավարժության վերաբերյալ, ինչն էլ իր հերթին կասկածի տակ կդնի ինչպես դատավորի մասնագիտական հեղինակությունը, նրա անկախ և անաչառ լինելու հանգամանքը, այնպես էլ կնվազեցնի դատական իշխանության հանդեպ հանրային վստահությունը՝ նսեմացնելով ողջ դատական իշխանության հեղինակությունը: Սույն որոշումը, ի շարս այլնի, փաստորեն կանխեց դատական համակարգում դատավորի կարգավիճակի միասնականությունը վտանգող կարգավորումների հետևանքային լուրջ ազդեցությունը՝ չեզոքացնելով թե՛ արդարադատության համակարգի, թե՛ դատական իշխանության հանդեպ հասարակական վստահության խաթարման հնարավոր ռիսկերը:

«Հանրապետության նախագահի դիմումի հիման վրա՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասության և Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի

Supreme Judicial Council of judges to examine "cases of special complexity" may lead to unjustified differentiation of judges and, consequently, to a violation of the principle of uniformity of the general status of judges, resulting in an infringement of judicial independence and the interests of justice. In addition, it may give rise to reasonable doubts among impartial observers regarding the lack of professionalism of the rest of the judges, which in turn would cast doubt on the judge's professional authority, their independence and impartiality, as well as diminish public trust in the judiciary, thus undermining the authority of the entire judiciary. In fact, this decision, among other things, prevented the serious consequences that could have arisen from regulations threatening the uniformity of the judge's status in the judicial system, both for the justice system and for public trust in the judiciary.

In Decision DCC-1691 of 2 June 2023 on the **"Case concerning the constitutionality of the second sentence of part 1 of Article 35 of the Constitutional Law 'Judicial Code of the Republic of Armenia' and point 1 of part 1 of Article 3 of the Administrative Procedure Code of the Republic of Armenia, insofar as it provides for the possibility of appealing to the Administrative Court the decisions of the Supreme Judicial Council adopted in the exercise of the powers stipulated**

3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ այնքանով, որքանով նախատեսում է Բարձրագույն դատական խորհրդի կողմից Սահմանադրության 175-րդ հոդվածի 1-ին մասի 1–4-րդ կետերով նախատեսված լիազորությունների իրականացմամբ կայացված որոշումների՝ վարչական դատարան բողոքարկելու հնարավորություն, Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով 2023 թվականի հունիսի 2-ի ՍԴՈ-1691 որոշմամբ Սահմանադրական դատարանն ուղղակիորեն արձանագրեց, որ Բարձրագույն դատական խորհրդի՝ Սահմանադրության 175-րդ հոդվածի 1-ին մասի 2–4-րդ կետերով նախատեսված լիազորություններն իրականացնելիս կայացվող որոշումները պետք է պատճառաբանված լինեն՝ հաշվի առնելով դրանց բողոքարկման սահմանափակումը: Սահմանադրական դատարանը շեշտեց, որ հիշյալ սահմանադրական լիազորությունների իրականացմամբ որոշումներ կայացնելիս Բարձրագույն դատական խորհուրդը, անշուշտ, պետք է ունենա համապատասխան որոշման պատճառաբանության խորությունը և ծավալը որոշելու հայեցողություն, որը, սակայն պետք է իրականացվի դատավորների մասնագիտական առաջխաղացման և դրա վրա ազդող որոշումների համար հիմք ծառայող չափորոշիչների հիման վրա: Նշվածը կնպաստի դատավորների, դատարանների նախագահների և Վճռաբեկ դատարանի պալատների նախագահների թեկնածուների ընտրության, դատավորների առաջխաղացման, վերջնարդյունքում՝ դատավորների, դատարանների նախագահների և Վճռաբեկ դատարանի պալատների նախագահների նշանակման/ընտրության գործընթացներում հանրային հաշվետվողականության ապահովմանը և կամայականությունների բացառմանը:

by points 1-4 of part 1 of Article 175 of the Constitution, raised by the application of the President of the Republic”, the Constitutional Court directly stated that decisions adopted by the Supreme Judicial Council in exercising the powers prescribed by points 2-4 of part 1 of Article 175 of the Constitution must be reasoned, taking into account the limitation of their appeal. The Constitutional Court emphasized that when adopting decisions in the exercise of the mentioned constitutional powers, the Supreme Judicial Council, undoubtedly, must have discretion to determine the depth and scope of the reasoning of the respective decision, which, however, must be exercised based on the criteria serving as a basis for decisions affecting the professional advancement of judges. The mentioned measures will contribute to ensuring public accountability in the processes of selecting candidates for judges, court chairpersons, and chairpersons of chambers of the Cassation Court, promoting judges, ultimately appointing/electing judges, court chairpersons, and chairpersons of chambers of the Cassation Court, and excluding arbitrariness.

Moreover, in the decision in question of the Constitutional Court, it was clearly stated that in the context of the necessity of reasoning of decisions adopted by the Supreme Judicial Council in the framework of

Ընդ որում՝ Սահմանադրական դատարանի խնդրո առարկա որոշմամբ հստակ արձանագրվեց, որ Բարձրագույն դատական խորհրդի կողմից նշված լիազորությունների իրականացման շրջանակներում ընդունված և դատավորների կամ դատավորների թեկնածուների մասնագիտական առաջխաղացման վրա ազդեցություն ունեցող որոշումների պատճառաբանվածության անհրաժեշտության համատեքստում Խորհրդի՝ քննության առանցքում գտնվող սահմանադրական երեք լիազորությունները վերաբերում են իրավական գործընթացների, որոնցում որոշիչ դերակատարություն ունեն նաև Հանրապետության նախագահը (Սահմանադրության 175-րդ հոդվածի 1-ին մասի 2–3-րդ կետեր) և Ազգային ժողովը (Սահմանադրության 175-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ): Այդ երկու սահմանադրական մարմինների որոշումների համար Խորհրդի որոշումներում պատճառաբանությունն անհրաժեշտ է տեղեկացված որոշում կայացնելու համար, քանի որ, թեպետ այս մարմինները սահմանափակված չեն ներկայացված դատավորների կամ թեկնածուների ընտրության հարցերի համար անհրաժեշտ այլ թույլատրելի աղբյուրներից տեղեկատվություն ստանալ, Խորհրդի հեղինակավոր դիրքորոշումը չի կարող փոխարինվել այլ մարմինների կողմից տրամադրված պատճառաբանություններով:

«ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 145-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով 2024 թվականի հունվարի 17-ի ՍԴՈ-1709

exercising the mentioned powers and affecting the professional advancement of judges or candidates for judges, the three constitutional powers at the center of the examination relate to legal processes where the President of the Republic (points 2-3 of part 1 of Article 175 of the Constitution) and the National Assembly (point 4 of part 1 of Article 175 of the Constitution) also have a decisive role. Reasoning in the decisions of the Council is necessary for those two constitutional bodies to adopt informed decisions, since although these bodies are not limited to obtaining information from other permissible sources necessary for the selection of nominated judges or candidates, the authoritative position of the Council cannot be replaced by reasonings provided by other bodies.

In Decision DCC-1709 of 17 January 2024 on the **“Case concerning the constitutionality of point 2 of part 1 of Article 145 of the Constitutional Law ‘Judicial Code of the Republic of Armenia’, raised by the application of at least one fifth of the total number of deputies of the RA National Assembly”,** the Constitutional Court addressed the question that gave rise to debate in the legal community, namely, the constitutionality of the authority of the Minister of Justice to initiate disciplinary proceedings against a judge in the context of guaranteeing the independence of a judge and the principle

որոշմամբ Սահմանադրական դատարանն անդրադարձավ իրավաբանական հանրույթում բանավեճի տեղիք տվող հարցադրմանը՝ Արդարադատության նախարարի կողմից դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու լիազորության սահմանադրականությանը՝ դատավորի անկախության և իշխանությունների բաժանման և տարանջատման սկզբունքի երաշխավորման համատեքստում: Սույն որոշմամբ Սահմանադրական դատարանը նշեց, որ Արդարադատության նախարարի կողմից ներկայացված՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդությունը դատավորի նկատմամբ միջամտող ակտ չէ, որը դատավորի նկատմամբ իրավական հետևանք է առաջացնում, այլ ընդամենը նախաձեռնում է նման միջամտող ակտ կայացնելու իրավասություն ունեցող միակ իրավասու ատյանի՝ Բարձրագույն դատական խորհրդի առջև դատավորի կարգապահական գործով վեճի լուծման հնարավորություն: Վերոնշյալի հիման վրա Սահմանադրական դատարանը եզրահանգեց, որ Արդարադատության նախարարի՝ որպես վարույթ հարուցող լիազոր մարմնի մասնակցությունը դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վարույթին, իրրև այդպիսին, չի հակասում օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման սահմանադրական սկզբունքին:

Միևնույն ժամանակ, Սահմանադրական դատարանն անվերապահորեն ազդարարեց, որ դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու սահմանադրաիրավական նշանակությունն ու հետևանքները հաշվի առնելով՝ պետք է բացառվեն կարգապահական վարույթ հարուցող մարմինների և կարգապահական պատասխանատվության հարցի վերաբերյալ

of separation and division of powers. In this decision, the Constitutional Court noted that the motion submitted by the Minister of Justice on subjecting a judge to disciplinary liability is not an interfering act against a judge that entails legal consequences for a judge, but merely initiates the possibility of resolving a dispute on a judge's disciplinary case before the only competent authority with the power to adopt such an interfering act - the Supreme Judicial Council. Based on the above, the Constitutional Court concluded that the participation of the Minister of Justice as an initiating authority in the proceedings to subject a judge to disciplinary liability, *per se*, does not contradict the constitutional principle of separation of legislative, executive, and judicial powers.

At the same time, the Constitutional Court unequivocally proclaimed that, considering the constitutional-legal significance and consequences of initiating disciplinary proceedings against judges, relationships between bodies initiating disciplinary proceedings and the body with the authority to adopt a final decision regarding disciplinary liability must be excluded that could raise reasonable doubt among impartial observers regarding their impartiality in the given disciplinary proceedings or be assessed as a means of influence on a judge and, in general, the judiciary. The constitutionality of the entire

վերջնական որոշում կայացնելու իրավասություն ունեցող մարմնի միջև այնպիսի փոխհարաբերությունները, որոնք անկողմնակալ դիտորդի մոտ կարող են ողջամիտ կասկած հարուցել տվյալ կարգապահական վարույթով նրանց անաչառության նկատմամբ կամ որևէ կերպ գնահատվել իրրև դատավորի և, առհասարակ, դատական իշխանության նկատմամբ ներգործության միջոց: Կարգապահական վարույթի ողջ գործընթացի սահմանադրականությունը, ի թիվս այլ երաշխիքների, պայմանավորված է նաև նրանով, որ բացառում է անկողմնակալ դիտորդի ողջամիտ կասկածն առ այն, որ գործընթացն իրականացվում է օրինականության, դատարանի գործունեությանը չմիջամտելու, դատավորի և դատարանի անկախությունը հարգելու, և ըստ այդմ՝ իշխանությունների բաժանման և հավասարակշռման սահմանադրական սկզբունքների նախատեսմամբ:

«Դավիթ Հարությունյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 6-րդ մասի՝ հաշվի առնելով նաև նշված դրույթներին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունները, Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով 2024 թվականի մայիսի 21-ի ՍԴՈ-1729 որոշմամբ Սահմանադրական դատարանը, ի թիվս այլնի, ընդգծեց, որ դատական նիստը դռնփակ անցկացնելու վերաբերյալ որոշում կայացնելիս դատարանը պետք է առաջնորդվի բացառապես Սահմանադրությամբ նախատեսված իրավաչափ նպատակներով՝ վեր մնալով դատական իշխանության անկախությունն ու անաչառությունը կասկածի

disciplinary proceedings process is conditioned, among other guarantees, by the fact that it excludes the reasonable doubt among impartial observers that the process is carried out in accordance with legality, non-interference in the court's activities, respect for the independence of the judge and the court, and, accordingly, the constitutional principle of separation and balance of powers.

In Decision DCC-1729 of 21 May 2024 on the **"Case concerning the constitutionality of point 2 of part 1 of Article 101 of the Administrative Procedure Code of the Republic of Armenia and part 6 of Article 90 of the Constitutional Law 'Judicial Code of the Republic of Armenia', considering also the interpretations of the mentioned provisions in legal practice, raised by the application of Davit Harutyunyan",** the Constitutional Court, *inter alia*, emphasized that when adopting a decision to hold a closed court session, the court should be guided exclusively by the legal goals prescribed by the Constitution, remaining above various impulses and factors that question the independence and impartiality of the judiciary, target the reputation of the judiciary, undermine the trust and confidence of the public in the latter, and hinder the administration of justice. The Constitutional Court sent a clear signal, insisting that the closed court session should not be a cover-up measure for administering "shadow

տակ դնող, դատական իշխանության հեղինակությունը թիրախավորող և վերջինիս նկատմամբ հանրության վստահությունը խարխլող ու արդարադատության իրականացումը խոչընդոտող տարաբնույթ ազդակներից ու գործոններից: Սահմանադրական դատարանը հստակ ազդակ ուղարկեց՝ պնդելով, որ դատական նիստի դռնփակ լինելը չպետք է քողարկող միջոց հանդիսանա «ստվերային արդարադատության» իրականացման համար: Սույն որոշումն ուղենշային նշանակություն ունի նաև դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթների շրջանակներում դատավորի մասնակցության ապահովման շրջանակներում՝ ազդարարելով, որ կարգապահական վարույթում կողմի կարգավիճակում հանդես եկող դատավորը նույնպես պետք է առաջնորդվի իր մասնագիտական կարգավիճակի բարձր հեղինակությամբ՝ դրսևորելով իր սահմանադրաիրավական առաքելության ոգուն համահունչ վարքագիծ և ընդգծված հարգանք արդարադատության և այն իրականացնելու իրավասությամբ օժտված ատյանների նկատմամբ:

«Արթուր Ստեփանյանի դիմումի հիման վրա՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 94-րդ հոդվածի 6-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով 2025 թվականի ապրիլի 22-ի ՍԴՈ-1780 որոշմամբ Սահմանադրական դատարանը «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 94-րդ հոդվածի 6-րդ մասի առաջին նախադասությունը՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելիս նրա լիազորություններն էական կարգապահական խախտման հիմքով դադարեցնելու վերաբերյալ Բարձրագույն դատական



justice". This decision has guideline significance also in the framework of ensuring the participation of a judge in proceedings regarding subjecting a judge to disciplinary liability, proclaiming that a judge acting as a party in a disciplinary proceeding, must also be guided by the high reputation of his professional status, demonstrating a conduct, consistent with the spirit of his constitutional and legal mission, and a marked respect for justice and the instances authorized to administer justice.

In Decision DCC-1780 of 22 April 2025 on the **"Case concerning the constitutionality of part 6 of Article 94 of the Constitutional Law 'Judicial Code of the Republic of Armenia', raised by the application of Artur Stepanyan",** the Constitutional Court declared the first sentence of part 6 of Article 94 of the Constitutional Law "Judicial Code of the Republic of Armenia" contradicting Article 49 in conjunction with Article 75, part 1 of Article 164, parts 1-3 of Article 174, point 7 of part 1 of Article 175, and part 2 of Article 175 of the Constitution, and invalid insofar as it provides for a regulation for adopting decisions by the Supreme Judicial Council on imposed termination of powers of a judge on the ground of an essential disciplinary violation when imposing disciplinary action against the latter, under which conditions the decision can be adopted by half of votes of the total number of votes of the

խորհրդի որոշումների ընդունման համար այնպիսի կարգավորում նախատեսելու մասով, որի պայմաններում որոշումը կարող է ընդունվել Բարձրագույն դատական խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսի, այսինքն՝ հինգ կողմ ձայներով, ճանաչեց Սահմանադրության 49-րդ հոդվածին՝ 75-րդ հոդվածի հետ համակցության մեջ, 164-րդ հոդվածի 1-ին մասին, 174-րդ հոդվածի 1-3-րդ մասերին, 175-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին և 2-րդ մասին հակասող:

Հիշյալ որոշումը հիմք հանդիսացավ Ազգային ժողովի կողմից համապատասխան օրենսդրական կարգավորումներ իրականացնելու համար՝ ի միտն ունենալով այն ողջամիտ տրամաբանությունը, որ Բարձրագույն դատական խորհրդի՝ խնդրո առարկա որոշումների կայացման դեպքում պետք է ապահովվեն այնպիսի օրենսդրական կառուցակարգեր, որոնք կերաշխավորեն հիշատակված կոլեգիալ մարմնի հավաքական կամքի արտահայտումը՝ այդպիսով նպաստելով նաև դատական իշխանության հանդեպ հանրային վստահության ամրապնդմանը:

«Հանրապետության նախագահի դիմումի հիման վրա՝ Բարձրագույն դատական խորհրդի՝ 2026 թվականի մարտի 12-ի թիվ ԲԴԽՄ-27-Ո-24 որոշմամբ Հանրապետության նախագահին ներկայացված առաջարկության՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով 2026 թվականի ապրիլի 1-ի ՍԴՈ-1823 որոշմամբ Սահմանադրական դատարանն առաջին անգամ հակասահմանադրական է ճանաչել Բարձրագույն դատական խորհրդի կողմից ՀՀ նախագահին ներկայացված՝ դատավոր նշանակելու թեկնածության առաջարկությունը: Սույն որոշմամբ Սահմանադրական դատարանը նշել է, որ դատավորի թեկնածուի հավակնորդի բարեվարքության



members of the Supreme Judicial Council, that is, by five votes cast in favour.

The mentioned decision served as a basis for the National Assembly to implement relevant legislative regulations, with the reasonable logic that in the case of adopting the decisions in question by the Supreme Judicial Council, such legislative mechanisms must be ensured that guarantee the expression of the collective will of the mentioned collegial body, thus also contributing to the strengthening of public trust in the judiciary.

In Decision DCC-1823 of 1 April 2026 on the case **"Concerning the constitutionality of the proposal submitted to the President of the Republic pursuant to Decision No. SJC-27-VO-24 of the Supreme Judicial Council dated 12 March 2026, raised by the application of the President of the Republic",** the Constitutional Court, for the first time, declared unconstitutional the proposal submitted by the Supreme Judicial Council to the RA President concerning the appointment of a candidate for a judge. In this Decision, the Constitutional Court stated that, where the relevant conclusion of the Corruption Prevention Commission regarding the integrity of a candidate for a judge is available, the proposal submitted by the Supreme Judicial Council pursuant to its relevant decision must contain not only the

վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի համապատասխան եզրակացության առկայության պայմաններում Բարձրագույն դատական խորհրդի համապատասխան որոշմամբ ներկայացվող առաջարկությունը պետք է պարունակի ոչ միայն իրավական և փաստական հիմքեր, այլև որակավորման գրավոր քննության և հարցազրույցի արդյունքների հետ համակցության մեջ վերոնշյալ եզրակացությանը նվազ նշանակություն տալու, դրանով իսկ՝ այդ եզրակացությամբ վերհանված փաստերը հաղթահարելու վերաբերյալ հիմնավորումներն ու պատճառաբանությունները, իսկ ներկայացված առաջարկությունը Հանրապետության նախագահի կողմից առարկությամբ վերադարձնելու պայմաններում այդ առարկությունը պետք է հաղթահարվի դրա փաստական և իրավական հիմքերի վերաբերյալ Բարձրագույն դատական խորհրդի փաստարկված դիրքորոշումների համադրված վերլուծություն բովանդակող համապատասխան որոշմամբ. «42. Պատճառաբանված որոշումն ինչպես իրավասու մարմիններին, այնպես էլ անաչառ դիտորդին պետք է հնարավորություն ընձեռի՝ վստահելու Բարձրագույն դատական խորհրդի առաջարկության լեգիտիմությանը՝ հիմք ընդունելով սահմանադրահեն այն գաղափարը, որ դատավորի նշանակման գործընթացում իրավասու մարմինների միջև առաջ եկած հարցերը չստվերեն դատավորի անբիծ հեղինակությունը, պատիվն ու արժանապատվությունը՝ դրանով իսկ հանգեցնելով տվյալ դատավորի և, ըստ այդմ՝ դատական իշխանության նկատմամբ հանրային վստահության նվազեցմանը: Հանրության շրջանում պետք է համոզմունք ձևավորվի, որ դատավորի թեկնածուն արժանի է դատավորի բարձր կարգավիճակին և համապատասխան առաքելությունը ստանձնելուն. հակառակ մոտեցման պայմաններում կստվերվի արդարադատության լեգիտիմությունը»:

legal and factual grounds, but also - in conjunction with the results of the written qualification examination and interview - the reasons and justification for attributing lesser significance to the aforementioned conclusion and, thereby, for overcoming the facts identified therein, and where the President of the Republic returns the submitted proposal with objections, those objections must be overcome by an appropriate decision containing a comprehensive analysis of the reasoned position of the Supreme Judicial Council concerning the factual and legal grounds of the objections; namely, “42. A reasoned decision must enable both the competent authorities and an impartial observer to have confidence in the legitimacy of the proposal of the Supreme Judicial Council, based on the constitutionally grounded idea that the issues arising between the competent authorities in the process of appointing a judge should not cast a shadow over the judge’s impeccable reputation, honour and dignity, thereby resulting in diminished public confidence in that judge and, consequently, in the judiciary. The public must be convinced that the candidate for a judge is worthy of the high status of a judge and of assuming the corresponding mission; under the reverse approach, the legitimacy of the administration of justice would be undermined”.

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Սահմանադրական դատարանը որպես «դատարանաստեղծ ճարտարապետ»

Սահմանադրական դատարանը երեսնամյա պատմության ընթացքում իր որոշումներով հանդես է եկել որպես ճարտարապետ, որը, հետևելով ստեղծվող արդարադատական մի կառույցի «շինարարության» վերելքին, ժամանակին հայտնաբերել է այդ ընթացքում թույլ տրված թերացումներն ու համակարգային խախտումները և արագ միջամտությամբ քննել ու լուծել է նորաստեղծ «կառույցի» գործարկման արդյունավետությանը վերաբերող հարցերը՝ արձարծելով դրանք:

Այս առումով ակնառու է Սահմանադրական դատարանի մշակած իրավաբանության դերը Հայաստանի Հանրապետությունում 2008 թվականին վարչական արդարադատության «նորածին» դատավարության ներդրման և զարգացման մեջ:

Այսպես՝ վարչական դատավարության ներդրմանը զուգընթաց արդեն 2008 թվականին ՀՀ սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-780, իսկ հետո նաև 2010 թվականի ՍԴՈ-873 որոշումներով մի շարք առանցքային և վարչական արդարադատության զարգացման համար ուղենշային նշանակություն ունեցող դիրքորոշումներ արտահայտեց, որոնք էլ դարձան այս դատավարության՝ Հայաստանի Հանրապետությունում արդյունավետ զարգացման «ճարտարապետական» այն հիմքը,

THE IMPACT OF THE DECISIONS OF THE CONSTITUTIONAL COURT IN THE ARMENIAN LEGAL SYSTEM

The Constitutional Court as the “architect of the judiciary”

Over its thirty-year history, the Constitutional Court has acted as an architect through its decisions, and, by overseeing the progress of “construction” of a new judicial institution, it has promptly identified deficiencies and systemic violations during the process, intervening swiftly to examine and resolve issues related to the effective implementation of this newly established “institution” by addressing those issues. A particularly notable example is the role played by the jurisprudence developed by the Constitutional Court in the introduction and development of the “newborn” proceedings of administrative justice in the Republic of Armenia in 2008.

Thus, in parallel with the introduction of administrative proceedings, by Decision DCC-780 dated 2008, and Decision DCC-873 dated 2010, the Constitutional Court of the Republic of Armenia expressed a series of key positions that were landmark for the development of administrative justice, and those

որի վրա հետագայում պետք է շարունակեր սրընթաց աճել դատավարության այդ տեսակը՝ որպես արդյունք հանգեցնելով նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքների երաշխավորմանը:

Սահմանադրական դատարանն իր որոշումներով բացահայտեց **վարչական արդարադատության** համակարգի ոչ միայն առանձին դրույթների հակասահմանադրականությունը, այլև իրականացրեց ընդհանուր **համակարգային վերլուծություն,** որի արդյունքում մատնանշվեցին այդ ինստիտուտի գործունեությանն ու կառուցվածքին առնչվող այլ լուրջ խնդիրներ ևս:

Այսպես օրինակ՝ Վարչական դատավարության ներդրման սկզբնական փուլում Սահմանադրական դատարանի 2008 թվականի նոյեմբերի 25-ի ՍԴՈ-780 որոշմամբ Սահմանադրությանը հակասող ճանաչվեցին 2007 թվականին ընդունված **Վարչական դատավարության օրենսգրքի** 115-րդ հոդվածի 1-ին մասը և 118-րդ հոդվածի 1-ին մասը:

Սահմանադրական դատարանը ՍԴՈ-780 որոշման մեջ արձանագրեց, որ ի տարբերություն այն դատավարության տեսակների, որտեղ գործում է արդյունավետ դատական պաշտպանության եռաստիճան կարգ, նորաստեղծ վարչական դատավարության **երկաստիճան համակարգի** պարագայում նշված գործոնները բողոքարկման միակ՝ վճռաբեկ ատյանի մատչելիությունը և արդյունավետությունը սահմանափակում են այնքան, որ խաթարվում է դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը՝ բացասաբար անդրադառնալով նաև վարչական արդարադատության համակարգի գործունեության վրա:

positions became the “architectural” foundation for the effective advancement of this type of proceedings in the Republic of Armenia, ultimately guaranteeing the fundamental rights to effective judicial protection and a fair trial for natural and legal persons.

Through its decisions, the Constitutional Court not only identified the unconstitutionality of certain provisions in the **administrative justice** system but also conducted a comprehensive **systemic analysis**, highlighting additional serious problems related to the operation and structure of this institution.

For instance, in the initial stage of introducing administrative proceedings, by Decision DCC-780 of 25 November 2008, the Constitutional Court declared part 1 of Article 115 and part 1 of Article 118 of the **Administrative Procedure Code,** adopted in 2007, as contradicting the Constitution and invalid.

In DCC-780, the Constitutional Court stated that, unlike other types of proceedings with a three-tier effective judicial protection system, the **two-tier system** of the newly established administrative proceedings limited access to and the effectiveness of the cassation instance to such an extent that it undermined the possibility of effectively exercising the right to judicial protection, negatively affecting the operation of the administrative justice system.

With particular emphasis on the circumstance in the decision mentioned above - that decisions on appeals

Սահմանադրական դատարանը, այս որոշման մեջ հատուկ ուշադրություն դարձնելով այն հանգամանքի վրա, որ վարչական դատարանի ակտերի դեմ բերված բողոքների առնչությամբ ըստ էության որոշումներն ընդունվում են քրեական պալատի և քաղաքացիական ու վարչական պալատների դատավորների մասնակցությամբ, ոչ երկիմաստորեն և հստակ արձանագրեց, որ նման պայմաններում վճռաբեկ դատարանում վարչական գործերով արդարադատությունը **զրկվում է իր առարկայական բնույթից:**

Այս որոշման մեջ Սահմանադրական դատարանը, շեշտելով, որ մասնագիտացված վարչական դատարանի ակտերը չեն կարող վերանայվել մի դատարանի կողմից, որը չունի մասնագիտացված համապատասխան դատական կազմ, ընդգծեց.

> *«Սահմանադրության մեջ վճռաբեկ դատարանի պալատների գոյության երաշխիքի ամրագրումը կիմաստավորվի միայն այն դեպքում, երբ վճռաբեկ դատարանն ունենա լիարժեք, **այն է՝ գործն ըստ էության քննող և լուծող մասնագիտացված համապատասխան պալատ: Մասնագիտացման գործոնը վճռաբեկ վարույթում բացակայելու արդյունքում** վճռաբեկ դատարանում անձի իրավունքների պաշտպանության իրավունքը, հետևաբար նաև՝ վարչական արդարադատության ոլորտում անձի դատական պաշտպանության **իրավունքն իր ամբողջության մեջ խաթարվում է և զրկվում արդյունավետությունից»**:*

Սակայն սրանով Սահմանադրական դատարանի՝ իբրև «դատարանաստեղծ ճարտարապետի» գործունեությունը չեզրափակվեց. վերջինս համակողմանի ուշադրություն դարձրեց նաև կառույցի

against acts of the Administrative Court were essentially adopted by judges of the Criminal Chamber and the Civil and Administrative Chambers - the Constitutional Court clearly and unambiguously stated that under such conditions, the administration of justice by the Cassation Court in administrative cases **is deprived of its substantive nature.**

Emphasizing that the acts of the specialized administrative court cannot be reviewed by a court lacking a respective specialized panel of judges, the Constitutional Court, in the above decision, emphasized as follows:

> *“(…) The prescription of the guarantee of existence in the Constitution of chambers of the Cassation Court will only make sense if the Cassation Court has **the respective specialized chamber that examines and resolves cases on the merits. The lack of the factor of specialization in cassation proceedings results in the violation and loss of effectiveness** of the right to judicial protection of rights by the Cassation Court, and consequently, of the **overall right to judicial protection in the field of administrative justice”.***

However, the Constitutional Court did not thereby complete its activity as the “architect of the judiciary”, and it also paid comprehensive attention to the “operational role and significance” of the institution, clearly delineating its **sectoral boundaries.**

«գործառնական դերին ու նշանակությանը»՝ հստակ ուրվագծելով նրա **ոլորտային սահմանները:**

Սահմանադրական դատարանը, վերլուծելով 2007 թվականին ընդունված Վարչական դատավարության օրենսգրքի մեկ տասնյակից ավելի նորմեր, արձանագրեց, որ վարչական արդարադատության ոլորտ է **ներառվել սահմանադրական արդարադատության առարկան**:

Սահմանադրական դատարանը, նախ՝ հստակ ուրվագծեց այդ սահմանը, երկրորդ՝ ի ցույց դրեց այդ **բաժանարար գծի կարևորությունն ու դրա հատման վտանգավորությունը** իրավական անվտանգության տեսանկյունից՝ արձանագրելով, որ՝

> *«(...) վարչական և սահմանադրական արդարադատության առկա շփոթն իրավակիրառական պրակտիկայում կարող է ստեղծել սահմանադրական նորմերի մեկնաբանման տարակերպ մոտեցումներ, որը լուրջ վտանգ է ներկայացնում երկրում Սահմանադրության գերակայության ու անմիջական գործողության ապահովման և հասարակական հարաբերությունների սահմանադրականացման միասնական քաղաքականության իրականացման համար: Սահմանադրական դատարանը գտնում է, որ առկա իրավակարգավորումը չի բխում նաև ՀՀ Սահմանադրության 1, 3, 5, 6, 92 և 94-րդ հոդվածների պահանջներից և երկրի իրավական անվտանգության սպառնալիք է իր մեջ պարունակում»:*

Այս որոշմանը **հաջորդեցին օրենսդրական ակտիվ փոփոխություններ.** եթե նախկինում՝ մինչ Սահմանադրական դատարանի որոշումը գործող խմբագրությամբ 2007 թվականին ընդունված Վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ քաղաքացիական

Analyzing more than a dozen norms of the Administrative Procedure Code adopted in 2007, the Constitutional Court stated that **constitutional justice matters** had been included in the scope of administrative justice.

Firstly, the Constitutional Court clearly delineated this boundary; secondly, it demonstrated the **importance of this dividing line and the danger of crossing it** from the perspective of legal security, stating as follows:

> *"(...) The existing confusion between administrative and constitutional justice in legal practice may result in divergent approaches to the interpretation of constitutional norms, which poses a serious threat to ensuring the supremacy and direct application of the Constitution in the country, as well as to the implementation of a unified policy of constitutionalization of social relations. The Constitutional Court considers that the existing legal regulation also fails to comply with the requirements of Articles 1, 3, 5, 6, 92, and 94 of the RA Constitution and contains a threat to the country's legal security".*

This decision was followed by **active legislative amendments;** namely, under Article 118 of the Administrative Procedure Code (the previous edition of 2007), i.e., before the respective decision of the

դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը mutatis mutandis վերապահումով տարածվում էին վճռաբեկ դատարան բողոքարկման կարգի և գործերի վարույթի վրա, ապա կատարված օրենսդրական փոփոխություններից հետո վարչական դատարանի ակտերի **բողոքարկման հիմքերի** վրա քաղաքացիական դատավարության նորմերն արդեն **չէին տարածվում**:

Տվյալ պահին գործող վարչական դատավարության օրենսգրքում կատարվել էին արդեն առանցքային փոփոխություններ, և մասնավորապես՝ հստակեցվել էին բողոքարկման ենթակա դատական ակտերի և բողոք բերելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը, վճռաբեկ բողոք բերելու ժամկետները, վճռաբեկ բողոքը ներկայացնելու կարգը, վարչական դատարանի ակտի դեմ բերված վճռաբեկ բողոքը քննության ընդունելու պայմանները, որոնք տարբերվում էին քաղաքացիական գործերով վճռաբեկ բողոքը քննության ընդունելու պայմաններից:

Այնուամենայնիվ, կատարված փոփոխություններով վճռաբեկ դատարանում վարույթի կարգը էական փոփոխությունների չէր ենթարկվել, և վճռաբեկ դատարանում վարչական գործերով վարույթները հիմնականում իրականացվում էին այդ ժամանակ գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերով:

Ուստի՝ «դատարանաստեղծ ճարտարապետը» 2010 թվականի ապրիլի 13-ի ՍԴՈ-873 որոշմամբ գնահատեց կատարված այդ փոփոխությունները՝ իր ծանրակշիռ գնահատականներով արձանագրելով դրանց խնդրահարույց կողմերը.

> *«(...) կատարված փոփոխությունները համակարգային առումով ամբողջական չեն, չեն*

Constitutional Court was adopted, the norms of the RA Civil Procedure Code applied *mutatis mutandis* to the proceedings for appealing to the Cassation Court and conducting proceedings thereby, and after the legislative amendments, the norms of civil procedure **no longer applied to the grounds for appealing** the acts of the Administrative Court.

By that time, key amendments had already been made to the Administrative Procedure Code in force, particularly clarifying the scope of appealable judicial acts and the subjects entitled to file appeals, the deadlines for filing cassation appeals, the procedure for submitting them, and the conditions for accepting cassation appeals against the acts of the Administrative Court - conditions that differed from those for accepting cassation appeals in civil cases.

Nevertheless, under those amendments, the proceedings at the Cassation Court had not undergone substantial changes, and the Cassation Court proceedings in administrative cases were mainly conducted under the norms of the RA Civil Procedure Code in force at that time.

Therefore, in Decision DCC-873 of 13 April 2010, the "architect of the judiciary" assessed the above amendments, and in considerable assessments highlighted their problematic aspects as follows:

> *"(...) The amendments are not comprehensive from a systemic perspective, do not ensure or*

ապահովում ու երաշխավորում վճռաբեկ դատարանում վարչական վարույթի իրականացման հստակ կարգն ու առանձնահատկությունները (ինչը նախատեսված է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածով), չի գտնվել վարչական արդարադատության գործառնական ու կառուցակարգային դատարանակազմական ամբողջականության երաշխավորման արդյունավետ լուծում»:

Այս որոշման մեջ պետական իշխանության իրականացրած «գործառույթ-ինստիտուտ-լիազորություն» սահմանադրական ներդաշնակությունն ապահովող եռամիասնության լույսի ներքո գնահատելով օրենսդրական կարգավորումները՝ Սահմանադրական դատարանն ընդգծեց.

«Եթե օրենսդիրն անհրաժեշտ է համարել Հայաստանում ձևավորել մասնագիտացված վարչական դատարան՝ միայն դատական մեկ ատյանով, իսկ վերջինիս ակտերի բողոքարկման իրավասությունը վերապահել վճռաբեկ դատարանին, ապա բողոքարկման համակարգի ամբողջականությունն ու արդյունավետությունը նույնպես պետք է երաշխավորվի այս կառուցակարգային լուծումների շրջանակներում: Մասնավորապես, դա վերաբերում է նաև բողոքների ընդունման ու դրանց ըստ էության քննության առանձնահատկություններին:

Հետևաբար, վիճարկվող դրույթում վճռաբեկ դատարանի կարգավիճակի վկայակոչմամբ բողոքի ընդունելիության այնպիսի պայմաններ չեն կարող սահմանվել, ինչը կարող է արդյունավետ չդարձնել ու սահմանափակել անձի՝ դատական ակտի բողոքարկման իրավունքի իրացման հնարավորությունը: Հակառակը, այդ հնարավորության ապահովման անհրաժեշտությունից թելադրված պետք է փնտրվեն ու գտնվեն դատարանակազմական լուծումները»:

Ուստի՝ օրենսդրի կողմից փնտրվեցին ու գտնվեցին այդ լուծումները. այսպես գցվեցին Հայաստանի Հանրապետությունում վերաքննիչ վարչական դատարանի և Վճռաբեկ դատարանի վարչական պալատի ստեղծման հիմքերը:

Սահմանադրական դատարանը որպես «դատավարաստեղծ ճարտարապետ»

Սահմանադրական դատարանն իր բազմամյա գործունեության ընթացքում իր որոշումներով ստեղծել կամ, ավելի ճիշտ՝ վերստեղծել, վերաձևել, դատավարության ամբողջական ինստիտուտներին բոլորովին նոր որակ և բովանդակություն է հաղորդել՝ «լուռ հեղափոխություններ» կատարելով և բարձրացնելով անձի հիմնական իրավունքների պաշտպանության երաշխիքային համակարգի մակարդակը կոնկրետ դատավարության տեսակներում:

Այս առումով ակնառու է հատկապես մարդու ամենաինտենսիվ իրավունքների սահմանափակում ենթադրող դատավարության տեսակում՝ քրեական դատավարության առնչությամբ և, մասնավորապես՝ կալանքի և դրա այլընտրանքների վերաբերյալ Սահմանադրական դատարանի զարգացրած իրավաբանությունը, ինչը հենց այդպիսի «լուռ հեղափոխության» ցայտուն

guarantee a clear procedure and specific features for administrative proceedings at the Cassation Court (as also prescribed by Article 1 of the RA Administrative Procedure Code), and no effective solution has been found to guarantee the entire functional, procedural, and structural integrity of administrative justice".

Assessing the legislative regulations in light of the trinity ensuring the constitutional harmony of "function-institution-authority" in the exercise of state power, the Constitutional Court emphasized as follows:

"(…) If the legislator has deemed it necessary to establish a specialized administrative court in Armenia consisting of only one judicial instance, while reserving the jurisdiction to appeal its acts to the Cassation Court, the integrity and effectiveness of the appeal system must also be guaranteed within the framework of these structural solutions. In particular, this also applies to the specifics of accepting and examining appeals on the merits.

Therefore, under the contested provision, no conditions for the admissibility of appeals can be established by invoking the status of the Cassation Court that would fail to make effective and limit the possibility of exercising the right of a person to appeal a judicial act".

On the contrary, organizational solutions must be sought and found, driven by the necessity of ensuring this possibility.

Consequently, the legislature sought and found these solutions that served as grounds for establishing the Administrative Court of Appeal of the Republic of Armenia and the Administrative Chamber of the Cassation Court of the Republic of Armenia.

The Constitutional Court as the "architect of judicial procedure"

Over the years of its activity, the Constitutional Court has, by its decisions, created or, more precisely, recreated and reformed complete procedural institutions, and provided them entirely new quality and content by carrying out "silent revolutions" and raising the level of guarantees for the protection of fundamental human rights in specific types of procedures.

Particularly striking in this regard is the jurisprudence developed by the Constitutional Court concerning criminal procedure, as a type of procedure that presupposes the most intense restrictions on human rights (specifically regarding detention and its alternatives), which is one of the most vivid manifestations

դրսևորումներից մեկն է: Ընդ որում՝ օգտագործվող «հեղափոխություն» բառը ոչ թե երևույթի գերագնահատում է ենթադրում կամ դրա գերարժևորմանն է ուղղված, այլ այն օգտագործվում է իր բառարանային իմաստով՝ ընդգծելու նորանկախ Հանրապետության քրեական դատավարությունում Սահմանադրական դատարանի բերած **արմատական փոփոխությունները**:

Այսպես՝ Հայաստանի Հանրապետության առաջին Քրեական դատավարության օրենսգրքի ընդունման պահից՝ **1998 թվականից** ի վեր՝ քրեական դատավարության ամենաարդյունավետ խափանման միջոցը՝ կալանավորումը, ուներ **միայն մեկ** «այլընտրանք»՝ **գրավի ձևով**, որի կիրառման հնարավորության մասին, իր հերթին, խոսք կարող էր լինել միայն այն պայմաններում, երբ **դատարանն արդեն անձին կալանավորելու որոշում էր կայացրել**:

Այսինքն՝ իրավակարգավորումներն այնպիսին էին, որ կալանքի այլընտրանքային միջոցը՝ գրավը, ոչ միայն այլընտրանքային էր իր բնույթով, այլ նաև՝ **կախյալ**. դրա կիրառման հարցի **քննարկումը ոչ թե նախորդում, այլ հաջորդում էր** կալանավորման հարցի քննարկմանը:

Բացի դրանից, եթե կալանավորման կիրառման հիմքերը (նպատակները) տարբեր էին, ապա տվյալ պահին գործող իրավակարգավորումներով գրավ կարող էր կիրառվել միայն հիմքերից (նպատակներից) մեկի ապահովման համար՝ վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի գտնվելն ապահովելու համար: Այսինքն՝ մնացյալ այլ դեպքերում (հիմքերով, նպատակներով) կալանքի **այլընտրանք գրավի կիրառման հնարավորությունը բացառվում էր**:

Արդյունքում՝ **1998-2020 թթ.** գործող քրեադատավարական կարգավորումների պայմաններում

of such a “silent revolution”. Meanwhile, the term “revolution” is not an exaggeration or overvaluation of the phenomena but is used in its dictionary sense to emphasize the **radical amendments** introduced by the Constitutional Court to the criminal procedure system in the newly independent Republic.

Since the adoption of the first Criminal Procedure Code of the Republic of Armenia **in 1998,** the most effective measure of restraint in criminal procedure, detention, had **only one** “alternative” - **bail,** and the possibility of applying bail could only be considered after **the court had already decided to detain the person.**

In other words, according to those legal regulations, the alternative measure of restraint, bail, was not only an alternative in nature but also **dependent,** and **considering** applying **bail did not precede but followed** the issue of detention.

Moreover, where the grounds (purposes) for applying detention were diverse, under the regulations in force at that time, bail could be applied only to secure one of those grounds (purposes), aimed at ensuring the presence of the accused at the disposal of the body conducting the proceedings. In all other cases (grounds and purposes), **the possibility of applying bail as an alternative to detention was excluded.**

տվյալ ժամանակահատվածի՝ **ավելի քան երկու տասնամյակի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում ազատության զրկում նախատեսող խափանման միջոցը չուներ գործուն այլընտրանքներ:**

Եվ միայն 2019 թվականին՝ Սահմանադրական դատարանի միջամտությունից հետո, երբ վերջինս, գործելով իբրև «դատավարական ճարտարապետ» և վերաիմաստավորելով քրեական դատավարությունում հարկադրանքի միջոցների և, մասնավորապես՝ խափանման միջոցների ինստիտուտը, անթույլատրելի համարեց մարդու անձնական ազատության իրավունքի ապահովման տեսանկյունից խիստ խնդրահարույց իրավակարգավորումները:

2019 թվականի հոկտեմբերի 15-ի ՍԴՈ-1480 որոշմամբ Սահմանադրական դատարանն ամրագրեց անձնական ազատության իրավունքի պաշտպանության տեսանկյունից առանցքային կարևոր դիրքորոշումները՝ արձանագրելով.

> *«(…) քրեական վարույթն իրականացնող մարմինը պետք է իրական հնարավորություն ունենա (…) անկաշկանդ կիրառել հենց այն խափանման միջոցը, որը, իր համոզմամբ, պիտանի և անհրաժեշտ է նախատեսված նպատակին հասնելու համար և կարող է արդյունավետ կերպով չեզոքացնել ենթադրյալ ոչ պատշաճ վարքագծի բացասական հետևանքները:*
>
> *(…) վիճարկվող օրենսդրական կարգավորման պայմաններում կալանավորված անձը զրկվում է որոշակի երաշխիքի տրամադրման դիմաց ազատ արձակվելու հիմնական իրավունքի իրականացումից: Ավելին, անձին չի տրամադրվում նաև հնարավորություն՝*

As a result, during the period **from 1998 to 2020,** i.e., under the criminal procedural regulations in force **for more than two decades, the measure of restraint involving deprivation of liberty in the Republic of Armenia had no effective alternatives.**

Only in 2019, following the Constitutional Court’s interference as a “procedural architect” that reinterpreted the institution of coercive measures in criminal procedure, particularly measures of restraint, the Court considered impermissible the highly problematic legal regulations from the perspective of ensuring the right to personal liberty.

By Decision DCC-1480 of 15 October 2019, the Constitutional Court enshrined the key positions which are of utmost importance from the perspective of protecting the right to personal liberty, stating as follows:

> *“(…) The body conducting the criminal proceedings must have a real opportunity (…) to apply the preventive measure which, in its conviction, is suitable and necessary for achieving the aim pursued and can effectively neutralize the alleged negative consequences of inappropriate conduct.*
>
> *(…) Under the challenged legislative regulation, a detained person is deprived of the opportunity*

խափանման այլ, ավելի մեղմ միջոցի կիրառման շնորհիվ ի սկզբանե խուսափել ազատազրկումից (...)։

(...) կալանավորումը՝ որպես քրեադատավարական հարկադրանքի վերջին՝ բացառիկ միջոց (ultima ratio), միշտ և պարտադիր կերպով պետք է այլընտրանք ունենա։ Քրեադատավարական օրենքում ամրագրվելիք այդ այլընտրանքը պետք է քրեական վարույթն իրականացնող մարմնին փաստացի հնարավորություն ընձեռի և իրավաբանական պարտականություն դնի նրա վրա՝ ի սկզբանե ընտրություն կատարել տարբեր խափանման միջոցների միջև՝ իրավաչափ նպատակին հասնելու համար ընտրելով առավել պիտանի միջոցը։ Միևնույն ժամանակ այն պետք է նաև պարտադիր կարգով լինի անձի հիմնական իրավունքները և ազատություններն առավել նվազ սահմանափակողը, այսինքն՝ անհրաժեշտ միջոցը։ Ուստի, Սահմանադրության տեսանկյունից անթույլատրելի է խափանման միջոցներից մեկի կիրառման հարցը քննարկել արդեն իսկ դրանցից մյուսին, ընդամին՝ ամենախիստ միջոցին նախապատվություն տալուց հետո»։

Սահմանադրական դատարանը, Քրեական դատավարության օրենսգրքի մի շարք դրույթներ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելով, դրանց ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանեց 2020 թվականի ապրիլի 15-ը՝ հնարավորություն տալով Ազգային ժողովին Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի վերաբերելի իրավակարգավորումները համապատասխանեցնելու նշված որոշման պահանջներին։

to exercise the fundamental right to release in return for a certain guarantee. Moreover, the person is not enabled to initially avoid imprisonment due to the application of other, milder measures of restraint (...).

(...) Detention as the last and exceptional measure (ultima ratio) of criminal procedural coercion should always and mandatorily have an alternative. The alternative that should be prescribed in the criminal procedure law must provide the body conducting criminal proceedings with the actual opportunity and assign a legal obligation on the latter to initially choose between various preventive measures and choose the most suitable means to achieve a legitimate aim. At the same time, it must also be the least restrictive of the fundamental rights and freedoms of a person, that is, the necessary means. Therefore, from the perspective of the Constitution, it is unacceptable to consider the issue of applying one of the preventive measures after giving preference to the most stringent one".

By declaring a number of provisions of the Criminal Procedure Code unconstitutional and invalid, the Constitutional Court defined 15 April 2020 as the deadline for their invalidation, providing the National Assembly the opportunity to reconcile the relevant legal regulations of the Criminal Procedure Code of the Republic of Armenia with the requirements of the mentioned decision.

Արդեն նույն թվականի ապրիլի 14-ին կատարվեցին սպասելի փոփոխությունները՝ ՀՀ քրեական դատավարությունում կալանքն ունեցավ գործուն և ոչ կախյալ այլընտրանքներ, տրվեցին որոշ այլ խափանման միջոցների համակցված կիրառության որոշ հնարավորություններ, իսկ արդեն **2021 թվականին** ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, Սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշման մեջ տեղ գտած դիրքորոշումն ուղիղ ամրագրելով, սահմանեց կալանքը որպես խափանման միջոց կիրառելու (ընտրելու) իրավաչափության **առանցքային պայման**։

Սահմանադրական դատարանի հաջորդ միջամտությունը երկար չսպասեցրեց. այս անգամ արդեն Սահմանադրական դատարանի դիտակետում էր գործի դատական քննության փուլում որպես խափանման միջոց ընտրված կալանքը փոփոխելու կամ վերացնելու միջնորդությունները մերժելու (որպես խափանման միջոց ընտրված կալանքը չփոփոխելու կամ չվերացնելու) մասին որոշումների՝ վերաքննության կարգով անմիջական բողոքարկման հնարավորության բացակայության սահմանադրականության հարցը։

Այստեղ ևս հարցն անձնական ազատության իրավունքի պաշտպանության տեսանկյունից խիստ խնդրահարույց էր՝ հաշվի առնելով 1998 թվականի Քրեական դատավարության օրենսգրքի այն կարգավորումները, որոնցով առաջին ատյանի դատարանի կողմից կալանքի իրավաչափության ողջամիտ պարբերականությամբ ստուգման ենթարկվելու պարտականություն նախատեսված էր միայն մինչդատական վարույթի համար, իսկ ահա դատական քննության փուլի ողջ ընթացքում արդեն ընտրված խափանման միջոց կալանքի իրավաչափության ստուգման **միակ նախադրյալ**

Here again, the issue was highly problematic from the perspective of protecting the right to personal liberty, considering the regulations of the 1998 Criminal Procedure Code, under which the obligation to subject the lawfulness of detention to reasonable periodic review by the first instance court was provided

կարող է հանդիսանալ այն փոփոխելու կամ վերացնելու վերաբերյալ կողմի միջնորդությունը: Մյուս կողմից, ինչպես նշվեց, այդպիսի միջնորդությունների մերժման որոշումները վերադաս դատարան բողոքարկելու օրենսդրական կանոնակարգումները ևս բացակայում էին:

Արդյունքում՝ մինչ Սահմանադրական դատարանի միջամտությունը՝ տվյալ պահին գործող 1998 թվականի Քրեական դատավարության օրենսգրքի ընդունումից մինչև 2019 թվականի նոյեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունում անձը կարող էր դատական վարույթում անորոշ ժամկետով գտնվել կալանքի տակ, մյուս կողմից՝ կալանքը վերացնելու կամ այն փոփոխելու միջնորդությունների մերժման որոշումները դատարանների կողմից (որպես կանոն) գնահատվում էին որպես վերաղաս դատարան անմիջական բողոքարկման ոչ ենթակա ակտեր՝ որպես հետևանք հանգեցնելով **անձի անձնական ազատության իրավունքի անորոշ ժամկետով սահմանափակման:**

Սահմանադրական դատարանի 2019 թվականի նոյեմբերի 6-ի ՍԴՈ-1487 որոշումը, որն ուղղված էր հայկական քրեական դատավարության հենց այդ աղաղակող թերության (դեֆեկտի) վերացմանը, հստակ և վճռական կերպով արձանագրեց, որ՝

«(...) անձնական ազատությունից զրկելու՝ կալանքի իրավաչափությունը վիճարկելու իրավունքի իրացման համար անհրաժեշտ են իրավական այնպիսի երաշխիքներ, որոնք, մասնավորապես, կապահովեն կալանքի իրավաչափության սուրհման ողջամիտ պարբերականությունը, կողմերի՝ իրենց դիրքորոշումները պաշտպանելու հավասար հնարավորություններ և կլինեն արդյունավետ՝ չխախտելով անձնական ազատությունից զրկելու՝ կալանքի իրավաչափությունը վիճարկելու իրավունքի էությունը»:

Այս որոշմամբ ևս Սահմանադրական դատարանը, Սահմանադրությանը հակասող ճանաչված իրավադրույթի ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանելով 2020 թվականի ապրիլի 15-ը և հնարավորություն տալով Ազգային ժողովին Քրեական դատավարության օրենսգրքի իրավակարգավորումները համապատասխանեցնելու իր այդ որոշման պահանջներին, արձանագրեց.

«(...) մինչև Ազգային ժողովի կողմից համապատասխան իրավակարգավորումներ սահմանելը դատական պրակտիկան պետք է առաջնորդվի այն մոտեցմամբ, որ գործի դատական քննության փուլում որպես խափանման միջոց ընտրված կալանքը փոփոխելու կամ վերացնելու միջնորդությունները մերժելու մասին որոշումները ենթակա են վերաքննության կարգով անմիջական բողոքարկման՝ առաջին ատյանի դատարանների՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու որոշումների բողոքարկման համար Օրենսգրքով սահմանված կարգով՝ առաջնորդվելով անձնական ազատությունից զրկելու իրավաչափությունը վիճարկելու, դատական պաշտպանության իրավունքների արդյունավետ իրացման ապահովման անհրաժեշտությամբ»:

Այդ պահից սկսած՝ Հայաստանի Հանրապետությունում քննարկվող որոշումները դարձան բողոքարկելի:

only for pre-trial proceedings, while during the entire course of the judicial examination phase, **the only prerequisite** for reviewing the lawfulness of the already chosen measure of restraint – detention, **could be a motion by a party to change or lift it.** On the other hand, as noted, the legislative regulations for appealing decisions rejecting such motions to a higher court also lacked.

As a result, before the Constitutional Court's interference, namely, during the period from the adoption of the 1998 Criminal Procedure Code until November 2019, a person in the Republic of Armenia could remain in detention indefinitely during judicial proceedings, while decisions rejecting motions to lift or change detention were (as a rule) assessed by the courts as acts not subject to direct appeal to a higher court, resulting in the **indefinite restriction of the person's right to personal liberty.**

Decision DCC-1487 of 6 November 2019 of the Constitutional Court was aimed precisely at eliminating this glaring defect in Armenian criminal procedure, where it was clearly and decisively stated as follows:

"(...) To exercise the right to challenge the lawfulness of deprivation of personal liberty - detention, such legal guarantees are necessary that will ensure, in particular, a reasonable interval of verification of the lawfulness of detention, equal opportunities for the parties to uphold their arguments and will be effective without violating the essence of the right to challenge the lawfulness of deprivation of personal liberty - detention".

In this decision as well, defining 15 April 2020 as the deadline for the invalidation of the legal provision declared contradicting the Constitution, and providing the National Assembly the possibility to reconcile the regulations of the Criminal Procedure Code with the requirements of the given decision, the Constitutional Court stated as follows:

"(...) The judicial practice, before the National Assembly establishes the relevant legal regulations, should be guided by such an approach that at the stage of the trial of the case, the decisions on rejecting to satisfy the motions for amending or canceling the detention chosen as a measure of restraint are subject to direct appeal by way of appeal in the manner established by the Code for appealing the decisions of the first instance courts on choosing, amending or canceling detention as a measure of restraint, guided by the need to ensure the effective exercise of the right to challenge the lawfulness of deprivation of personal liberty and the right to judicial protection".

From that moment onward, the decisions in question became appealable in the Republic of Armenia.

Արդեն 2021 թվականին ընդունված Քրեական դատավարության օրենսգրքով իրացվեց նաև Սահմանադրական դատարանի նշյալ որոշմամբ արտահայտված «կալանքի իրավաչափությունը ողջամիտ պարբերականությամբ ստուգման ենթարկելու» դիրքորոշումը. օրենսդրորեն ուղղակիորեն ամրագրվեց դրույթ, որով նախատեսվում է հստակ ժամկետային սահմաններում դատական վարույթի ընթացքում ստուգման ենթարկելու կալանքի (շարունակական կալանքի) իրավաչափությունը:

Սահմանադրական դատարանի առանցքային նման միջամտությունները չեն սպառվում և ընդհատվում վերոնշյալներով: Հակառակը՝ այդ գործընթացը շարունակական է և զարգանում ու շարունակվում է **նաև մեր օրերում** (ՍԴՈ-1792, ՍԴՈ-1798 որոշումներ և այլն), **կշարունակվի նաև ապագայում:**

Սահմանադրական դատարանը որպես «հասարակական համերաշխության և ժողովրդավարական կայունության ճարտարապետ»

Սահմանադրական դատարանը մշտապես գնահատել ու գնահատում է բևեռացված հասարակության համերաշխության ապահովման, հասարակության պառակտվածության վերացման, հասարակական հանդուրժողականության ապահովման անհրաժեշտությունը որպես **«հանրային բարձր շահ»** (տես վերաբերելի մասով՝ 2022 թվականի ապրիլի 29-ի ՍԴՈ-1647 որոշումը):

Ընդ որում՝ այդ գնահատականները ոչ թե հռչակագրային բնույթ են ունեցել, այլ Բարձր

By the Criminal Procedure Code adopted in 2021, the position expressed in the aforementioned decision of the Constitutional Court regarding "subjecting the lawfulness of detention to reasonable periodic review" was also implemented, and a provision was legislatively enshrined that directly establishes clear time limits for reviewing the lawfulness of detention (continuous detention) during judicial proceedings.

Such key interferences by the Constitutional Court are neither exhausted nor interrupted by the above. On the contrary, this is an ongoing process and continues to develop **also in our days** (decisions DCC-1792, DCC-1798, and others) **and will continue in the future.**

The Constitutional Court as the "architect of social cohesion and democratic stability"

The Constitutional Court has consistently assessed and continues to assess the need to ensure cohesion in a polarized society, eliminate social divisions, and guarantee public tolerance as a **"high public interest"** (see the relevant part of Decision DCC-1647 of 29 April 2022).

Moreover, these assessments have not been merely declarative, and the High Court has acted as a unique

դատարանն ինքն է հասարակության համերաշխության, հասարակական հանդուրժողականության ապահովման յուրօրինակ դերակատար եղել՝ որոշ դեպքերում ոչ երկիմաստորեն և հստակ հասարակության միավորման համար **պրոակտիվ քայլեր ձեռնարկելով:**

Սահմանադրական դատարանի մտածողությունն այս առումով երբևէ չի եղել այսրոպեական, կարճաժամկետ ու պահի ազդեցության տակ կայացված մոտեցումներով պայմանավորած, այլ հակառակը՝ հենվելով խորը իրավափիլիսոփայական հիմքերի վրա՝ Դատարանի մտածողության մասշտաբայնությունը ձգվել է տարիների, որոշ դեպքերում անգամ տասնամյակների ապագա հորիզոնների խորքը՝ մշտապես սևեռված լինելով **պետականությանն սպառնացող ներքին վտանգները կանխելուն:**

Այսօրինակ մոտեցումներով Դատարանը հանդես է եկել ու հանդես է գալիս իրավամբ որպես «հասարակական համերաշխության և ժողովրդավարական կայունության ճարտարապետ»:

Նման որոշման ակնառու օրինակ է «Հայաստանի Հանրապետության Նախագահի 2003 թվականի մարտի 5-ի ընտրության արդյունքները վիճարկելու վերաբերյալ» գործով Սահմանադրական դատարանի 2003 թվականի ապրիլի 16-ին կայացրած ՍԴՈ-412 որոշումը:

Դրանով, մի կողմից՝ անփոփոխ էր թողնվում ՀՀ Նախագահի ընտրվելու մասին ՀՀ ԿԸՀ 2003 թվականի մարտի 11-ի թիվ 36-Ա որոշումը, մյուս կողմից՝ ՀՀ նորընտիր Ազգային ժողովին և ՀՀ Նախագահին ուղերձներ էր հղվում բևեռացված հասարակության միավորման, հասարակական պառակտվածությունը կանխելու համար քայլեր ձեռնարկելու ուղղությամբ:

actor in ensuring social cohesion and public tolerance, in some cases unambiguously **taking** certain **proactive steps** toward uniting the society.

In this regard, the Constitutional Court's thinking has never been momentary, short-term, and conditioned by immediate influences; on the contrary, based on deep legal-philosophical foundations, the scale of the Court's thinking has extended into the depths of horizons spanning years, and in some cases even decades, always focused on **preventing internal threats to statehood.**

Through such approaches, the Court has acted and continues to act truly as the "architect of social cohesion and democratic stability".

A striking example of such a decision is Decision DCC-412 of 16 April 2003, in the case on "Challenging the Results of the Presidential Election in the Republic of Armenia held on 5 March 2003".

On the one hand, it left unchanged Decision No. 36-A of 11 March 2003 of the RA Central Electoral Commission on electing the RA President; on the other hand, it addressed messages to the newly elected RA National Assembly and the RA President, urging them to take steps to unite a polarized society and prevent social division.

In this decision, the Constitutional Court stated that the violations during the elections - including ballot-

Այս որոշմամբ Սահմանադրական դատարանն արձանագրեց, որ ընտրությունների ընթացքում տեղ գտած խախտումները, ներառյալ քվեատուփերի լցոնումները, ձայների սխալ հաշվարկը և լրատվամիջոցների կողմնակալությունը, անհամատեղելի են Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների հետ և անհարիր են երկրի ժողովրդավարական հետագա զարգացումներին: Դատարանը շեշտադրեց, որ ներկայացուցչական ժողովրդավարության ինստիտուտների համար էական նշանակություն ունի ոչ միայն դրանց կազմավորման օրինականությունը, այլև այդ գործընթացի ու պետական իշխանության մարմնի նկատմամբ **հասարակության շարունակական լայն վստահությունը,** որն անհրաժեշտ է սահմանադրական կարգի ամրապնդման և քաղաքացիական համերաշխության համար:

Սահմանադրական դատարանը, յուրօրինակ կերպով փորձ անելով զսպել հանրային անհանդուրժողականության այն կուտակված սահմանային էներգիան, որ տվյալ պահին առկա էր հայկական հասարակական-քաղաքական դաշտում, քաղաքացիական համերաշխություն հաստատելու, հասարակական դիմակայությունը հաղթահարելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ նշյալ որոշմամբ իշխանության լեգիտիմությունը վերստուգելու առաջարկ էր անում՝ ուղիղ նշելով.

«Ելնելով այն իրողությունից, որ 2003թ. մայիսի 25-ին նշանակված են ՀՀ Ազգային ժողովի ընտրություններ և Սահմանադրության նոր խմբագրության ընդունման հանրաքվե, որոնցից յուրաքանչյուրն առանձին վերցրած վճռական դեր ունի ժողովրդավարական ճանապարհով

box stuffing, incorrect vote counting, and media bias - were incompatible with the international commitments undertaken by the Republic of Armenia and inappropriate for the country's further democratic development. The Court emphasized that, for institutions of representative democracy, not only the legality of their formation but also the **ongoing broad public trust** in that process and in state power is essential for strengthening the constitutional order and civic cohesion.

In the above decision, attempting to restrain uniquely the accumulated limiting energy of public intolerance present at that moment in the Armenian socio-political field, driven by the necessity of establishing civic cohesion and overcoming social confrontation, the Constitutional Court proposed a verification of the legitimacy of state power, directly noting as follows:

"In view of the reality that on 25 May 2003, elections to the RA National Assembly and a referendum on adopting the new wording of the Constitution are scheduled, each of which individually plays a decisive role in ensuring the ongoing development of state power through democratic means,

bearing in mind that at the level of constitutional solutions, for the institutions of representative democracy, not only the legality of their formation but also the ongoing broad public trust in

պետական իշխանության շարունակական զարգացումն ապահովելու գործում,

նկատի ունենալով, որ սահմանադրական լուծումների մակարդակով ներկայացուցչական ժողովրդավարության ինստիտուտների համար էական նշանակություն ունի ոչ միայն դրանց կազմավորման օրինականությունը, այլև այդ գործընթացի ու պետական իշխանության մարմնի նկատմամբ հասարակության շարունակական լայն վստահությունը,

կարևորելով Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական կարգի ամրապնդման և Սահմանադրության նախաբանում ամրագրված՝ քաղաքացիական համերաշխության հաստատման անհրաժեշտությունը,

փաստելով, որ սահմանադրական ժողովրդավարության դեռևս անկատար համակարգի ներկա պայմաններում պետության ճակատագրի համար վճռորոշ նշանակություն ունեցող ընտրական վեճն ունի նաև անվստահության և անհանդուրժողականության վրա խարսխված խոր հասարակական-քաղաքական ենթատեքստ,

մեծ կարևորություն տալով հանրաքվեների և ժողովրդական հարցումների դերին՝ որպես անմիջական ժողովրդավարության ու ժողովրդաիշխանության իրականացման, պետության համար հատուկ կարևորություն ունեցող հարցերի լուծման, հասարակական վստահության և ժողովրդական համաձայնության հաստատման առանձնահատուկ նշանակություն ունեցող ձև,

***առաջարկել** ՀՀ նորընտիր Ազգային ժողովին և ՀՀ Նախագահին՝ մեկ տարվա ընթացքում «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքը ժողովրդավարության և իրավական պետության*

that process and in state power is of essential importance,

emphasizing the necessity of strengthening the constitutional order in the Republic of Armenia and establishing civic cohesion as prescribed by the Preamble of the Constitution,

stating that in the current conditions of an as yet imperfect system of constitutional democracy, the electoral dispute - decisive for the fate of the state - also has a deep socio-political subtext rooted in distrust and intolerance,

attaching particular importance to the role of referendums and popular polls as forms of direct democracy and the exercise of popular sovereignty, the resolution of issues of particular importance to the state, and the establishment of public trust and popular consensus with special significance,

***to propose** to the newly elected RA National Assembly and the RA President to reconcile, within one year, the RA Law 'On Referendum' with the principles of democracy and the rule of law state in accordance with the requirements of the first part of non-amendable Article 2 of the RA Constitution and, as an effective means of overcoming the deepened social confrontation during the presidential elections, to organize a referendum of confidence".*

սկզբունքներին համահունչ համապատասխանեցնել ՀՀ Սահմանադրության 2-րդ՝ փոփոխման ոչ ենթակա, հողվածի առաջին մասի պահանջներին և որպես նախազգահական ընտրությունների ընթացքում խորացած հասարակական դիմակայության հաղթահարման արդյունավետ միջոց ընտրել վարչահության հանրաքվեի կազմակերպումը»:

Սահմանադրական դատարանն այսօր էլ շարունակում է հասարակության համերաշխությունն ապահովող և պառակտվածությունը բացառող իր դերակատարումը:

Բարձր դատարանը հանրային համերաշխության անդորրը խարխլող **ատելության, բռնության խոսքի, վիրավորանքի անթույլատրելիությանն է անդրադարձել նաև** մերօրյա որոշումներում՝ քաղաքական մեծամասնությանն այս առումով ուղիղ ուղերձներ հղելով գործուն միջոցներ ձեռնարկել քաղաքական խոսքում նման դիրքորոշումները բացառելու համար:

Արդեն 2021 թվականի հուլիսի 17-ին ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2021 թվականի հունիսի 27-ի՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրությունների արդյունքներն ամփոփելու մասին» թիվ 184-Ա որոշման հետ կապված վեճի վերաբերյալ գործով կայացրած ՍԴՈ-1606 որոշմամբ Դատարանը միանշանակորեն մերժեց համաբնույթ խոսքով հասարակական համերաշխությունը խաթարելու ցանկացած փորձերը, առավել ևս՝ նախընտրական քարոզչության շրջանակներում այդպիսի դրսևորումները.

> *«Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերը և դրանց ներկայացուցիչները նախընտրական քարոզչության ընթացքում օգտվում են իրենց կարծիքն արտահայտելու լայն հնարավորություններից, ինչը ժողովրդավարական հասարակությունում հնարավորություն է տալիս ազատորեն ձևավորելու ժողովրդի կամքը, ուստի՝ այն ընտրությունների ազատության սկզբունքի ապահովման անհրաժեշտ պայման է:*
>
> *Այդուհանդերձ, նախընտրական քարոզչությունը չի կարող ուղեկցվել ատելության, բռնության կոչերով և սպառնալիքներով (եթե անգամ այդ սպառնալիքն իրական չէ), **որոնք խաթարում են խաղաղ և առողջ սոցիալական միջավայրը:** Քաղաքական ուժերը և դրանց ներկայացուցիչները պետք է նախընտրական քարոզչության ընթացքում դրսևորեն առավելագույն զսպվածություն, քաղաքական կոռեկտություն՝ բացառելով ատելության, բռնության ցանկացած կոչ ու սպառնալիք և արժանապատվությունը նվաստացնող ցանկացած վարքագիծ»:*

Միևնույն ժամանակ Սահմանադրական դատարանը քաղաքական մեծամասնության համար որոշակի այս ուղղությամբ գործնական միջոցառումներ ձեռնարկելու հստակ ու աներկբա կոչեր է արել, որոնք պետք է կանխեին նմանատիպ իրավիճակների հետևանքով հասարակության շարունակական պառակտումը ապագայում՝ նշելով.

> *«Սահմանադրական դատարանը, հաշվի առնելով սույն որոշմամբ վերլուծված՝ վարչապետի սահմանադրական կարգավիճակը և լիազորությունների ծավալը Հայաստանի սահմանադրական ժողովրդավարության պայմաններում, ինչպես նաև **քաղաքական մեծամասնության ունեցած ազդեցությունը հանրային իշխանության մարմինների համակարգում,***

The Constitutional Court continues even today to fulfill its role in ensuring social cohesion and excluding division.

The High Court has also addressed in its contemporary decisions the **impermissibility of hate speech, incitement to violence, and insults** that undermine public cohesion, sending direct messages to the political majority to take effective measures to exclude such positions from political discourse.

By Decision DCC-1606 of 17 July 2021 on the "Case concerning the dispute related to Decision No. 184-A of 27 June 2021 of the RA Central Electoral Commission 'On Summarizing the Results of the Early Elections to the National Assembly of the Republic of Armenia, held on 20 June 2021", the Court unequivocally rejected any attempt to undermine public cohesion through hate speech, especially in the context of pre-election campaigning, namely:

> *"The Constitutional Court states that the political forces participating in the elections and their representatives use a wide range of opportunities to express their views during the election campaign, which allows the people to freely express their will in a democratic society; therefore, this is a necessary condition for ensuring the principle of free elections.*
>
> *However, the election campaign cannot be accompanied by calls for hatred, violence, and threats (even if that threat is not real), **which disrupt the peaceful and healthy social environment.** Political forces and their representatives must exercise maximum restraint and political correctness during the election campaign, excluding any calls for hatred, violence, threats, or any humiliating conduct".*

At the same time, the Constitutional Court sent certain unequivocal messages to the political majority for practical measures in this field that should prevent the ongoing social division in the future due to similar situations, noting as follows:

> *"Taking into account the constitutional status of the Prime Minister and the scope of powers in the conditions of Armenia's constitutional democracy, as well as **the influence of the political majority in the system of public authorities, as analyzed by this Decision, the Constitutional Court emphasizes the need for taking effective measures by the latter in Armenian political speech for the purpose of excluding any manifestation of hate speech, violence, insults and degrading speech and behavior, also including the period of election campaign".***

The stabilizing role of the High Court, which prevents internal threats to statehood, was most vividly

ընդգծում է նրանց կողմից գործուն միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտությունը հայաստանյան քաղաքական խոսքում՝ ապրելության, բռնության, վիրավորանքի և արժանապատվությունը նվաստացնելու կասկած հարուցող խոսքի և վարքագծի որևէ դրսևորում, ներառյալ նաև նախընտրական քարոզչության ժամանակ հնչեցվող խոսքում բացառելու նպատակով»:

Բարձր դատարանի կայունարար և պետականության ներքին վտանգները կանխարգելող դերակատարությունը խիստ ցայտուն արտահայտվեց 2021 թվականի նոյեմբերի 2-ի ՍԴՈ-1616 որոշմամբ:

Նորագույն պատմության այդ բարդագույն շրջանում կայացված որոշմամբ կանխվեց ամենաբարձր զինվորական պաշտոնատար անձի՝ զինված ուժերի գլխավոր շտաբի պետի պաշտոնի նշանակելու և պաշտոնից ազատելու դրույթի վերաբերությամբ թվացյալ անորոշությունը՝ այդպիսով իսկ պատերազմից ընդամենը ամիսներ անց **կենսական հստակություն** մտցնելով զինված ուժերի օպերատիվ կառավարման բարձրագույն մարմնի **ղեկավարի** պաշտոնին նշանակելու և դրանից ազատելու հարցերում՝ օպերատիվ կառավարման օղակներին հաղորդելով կայունություն և որոշակիություն:

Սահմանադրական դատարանը այստեղ ևս հստակ էր, պարզ ու աներկբա.

«(...) գլխավոր շտաբի պետին՝ որպես ամենաբարձր զինվորական պաշտոնատար անձի, նշանակում է Հանրապետության նախագահը՝ վարչապետի առաջարկությամբ: Այս լիազորությունը համահունչ է Սահմանադրության 133-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորմանը՝ բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական պաշտոնյաների նշանակման մասով, հետևաբար՝ այն չի կարելի համարել հատուկ կամ բացառիկ իրավա-

expressed in Decision DCC-1616 of 2 November 2021.

This decision was adopted in an extremely difficult period of modern history, and prevented apparent uncertainty regarding the provisions on appointing and dismissing the highest military official - the Chief of the General Staff of the Armed Forces, thereby introducing **vital clarity,** just months after the war, into the issues of appointing and dismissing the **head** of the highest body of operational management of the armed forces, conveying stability and certainty to the operational management chain.

Here too, the Constitutional Court was clear, straightforward, and unequivocal, stating as follows:

“(...) The Chief of the General Staff, as the highest military official, shall be appointed by the President of the Republic upon the nomination of the Prime Minister. This authority is consistent with the legal regulation of part 1 of Article 133 of the Constitution regarding the appointment of the highest command staff of military officials; therefore, it cannot be considered a special or exceptional legal provision. As for the issue of dismissing the Chief of the General Staff from office, its legal basis is defined by part 1 of Article 133 of the Constitution. Thus, the fact that the authority to dismiss the Chief of the General Staff of the Armed Forces by the President of the Republic is not literally defined by part 3 of Article 155 of the Constitution

դրույթ: Ինչ վերաբերում է գլխավոր շտաբի պետին պաշտոնից ազատելու հարցին, ապա դրա կարգավորման իրավական հիմքը Սահմանադրության 133-րդ հոդվածի 1-ին մասն է: Այսպիսով՝ Սահմանադրության 155-րդ հոդվածի 3-րդ մասում Հանրապետության նախագահի կողմից զինված ուժերի գլխավոր շտաբի պետին ազատելու լիազորությունը բառացիորեն սահմանված չլինելը չի կարելի դիտարկել որպես Հանրապետության նախագահի՝ զինված ուժերի գլխավոր շտաբի պետին ազատելու լիազորության բացառում:

(...)

*(...) «օրենքով սահմանված ժամկետ» իրավական հասկացությունն ամրագրելիս սահմանադիրը երբեք չէր կարող դրա բովանդակության մեջ դնել զինված ուժերի բարձրագույն հրամանատարական կազմի ամենաբարձր պաշտոնատար անձ հանդիսացող գլխավոր շտաբի պետի պաշտոնի անփոխհնելիության և անձեռնմխելիության, պաշտոնավարման նվազագույն ժամկետային երաշխավորման իմաստը: Ընդհակառակը՝ ռազմական կառավարման բոլոր մակարդակների և զինվորական ծառայությանը բնորոշ առանձնահատուկ սկզբունքների գաղափարակողմնորոշիչ ազդեցության ու ելակետային կարգավորիչ իրավական նշանակության շրջանակներում այդ ժամկետը պետք է հասկանալ որպես պաշտոնավարման՝ օրենքով սահմանված առավելագույն ժամկետ, **ինչը չի կարող բացառել գլխավոր շտաբի պետին այդ ժամկետի լրանալուց ավելի վաղ պաշտոնից ազատելու իրավական հնարավորությունը»:***

cannot be considered as an exclusion of the President’s authority to dismiss the Chief of the General Staff of the Armed Forces.

(...)

*(...) When enshrining the legal concept of the ‘term prescribed by law’, the Constituent could never have intended to include in its content the meaning of the immutability and inviolability of the office of the Chief of the General Staff, as the highest official in the highest command staff of the armed forces, or the guarantee of a minimum term of office. On the contrary, within the framework of the ideological orientation and fundamental regulatory legal significance of the special principles characteristic of all levels of military management and military service, that term must be understood as the maximum term of office prescribed by law, **which cannot exclude the legal possibility of dismissing the Chief of the General Staff before the expiration of that term”.***

During a highly unstable period for the country, the **vital shoots** of stability and certainty were sown by the above decision, preventing deep subsequent divisions within society after the war and their possible extreme manifestations in the armed forces. The factual stability **assessments** arising from the

Այս որոշմամբ, երկրի համար խիստ անկայուն ժամանակաշրջանում սերմանվեցին կայունության, որոշակիության **այն կենսարար ծիլերը,** որոնք կանխեցին պատերազմից հետո թե՛ հետագայում հասարակության ներսում ձգված խորը երկպառակությունների, թե՛ նաև զինված ուժերում դրանց հնարավոր ծայրահեղ զարգացումների դրսևորումները: Սահմանադրական դատարանի նշված որոշման իրավական հետևանքներից առաջացած փաստական կայունության **գնահատականներն արդեն բոլորովին այլ գիտնականների՝ պատմաբանների գնահատման տիրույթին են թողնված:**

«Հասարակության համերաշխությունն ու ժողովրդավարական կայունությունն ապահովող ճարտարապետի» իր կայունարար դերին բնորոշ՝ Սահմանադրական դատարանը զարգացրել և շարունակում է զարգացնել «կյութական ժողովրդավարության» հայեցակարգը՝ ժողովրդավարության համատեքստում կարևորելով ոչ միայն մեծամասնության կառավարումը, այլ նաև փոքրամասնության դերն ու իրավունքները:

Ժողովրդավարության ներունակ **(իմանենտ) հատկանիշը**՝ «մեծամասնության կառավարումը» ժողովրդավարության **հակատիպարի** վերածումը կանխելուն ուղղված Սահմանադրական դատարանի դիրքորոշումները բազմազան են և մեծաթիվ. խոսուն են հատկապես 2022 թվականի ապրիլի 29-ի ՍԴՈ-1647 որոշման խիստ հակիրճ ու կտրուկ արտահայտված հետևյալ ձևակերպումները, որոնք որպես փարոս պետք է ուղեկցեն «մեծամասնության կառավարմանը».

*«Մեծամասնությունը պետական իշխանություն իրականացնելիս որոշումների կայացման գործընթացում պետք է ելնի նաև **որոշակիացված մնայուն (անփոփոխ) հանրային շահից (բարիքից),** հարգի փոքրամասնության իրավունքները՝ հաշվի առնելով նաև նրա շահերը՝ մասնավորապես՝ չնվազեցնելով և չզրկելով ապագայում փոքրամասնությանը մեծամասնություն դառնալու իրավունքից, **որպիսի պայմաններում մեծամասնության որոշումը կարող է դիտարկվել իբրև ժողովրդի կամքն արտացոլող»:***

Դատարանը հետևողականորեն իր հաջորդ որոշումներում շարունակում է ամրապնդել **փոքրամասնության իրավունքների պաշտպանությունը**՝ որպես պետության ներքին կայունության և ժողովրդի միասնական կամքի արտահայտման երաշխիք:

Ավելի ուշ՝ 2023 թվականի դեկտեմբերի 19-ի ՍԴՈ-1708 որոշմամբ արդեն ընդգծվում է, որ՝

*«(...) Սահմանադիրն ամրագրել է **հրամայական պահանջ**՝ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներում պետք է ապահովվի խորհրդարանական ուժերի **համամասն ներկայացվածությունը**՝ Ազգային ժողովի խմբակցությունների միջև մշտական հանձնաժողովների անդամների տեղերի, մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների պաշտոնների համամասն բաշխման միջոցով: Սահմանադրի կողմից նախանշված՝ մշտական հանձնաժողովների ձևավորմանն ու գործունեությանն առնչվող կարգավորումների համատեքստում սահմանադրական հրամայականն է՝ մշտական հանձնաժողովներում տեղերը պետք է բաշխվեն ըստ խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնության, հետևաբար՝ **մշտական հանձնաժողովների ձևավորմանն առնչվող օրենսդրական***

legal consequences of the Constitutional Court's aforementioned decision **are now left entirely to the domain of other scholars - historians.**

Characteristic of its role as the "architect ensuring social cohesion and democratic stability", the Constitutional Court has developed and continues to develop the concept of "substantive democracy", emphasizing in the context of democracy not only the rule of the majority but also the role and rights of the minority.

The Constitutional Court has expressed diverse and numerous positions aimed at preventing the transformation of the inherent **(immanent) feature** of democracy – "the rule of the majority" – into its **antithesis;** particularly, expressive are the extremely concise and sharp formulations in Decision DCC-1647 of 29 April 2022, which should serve as a guiding beacon for "the rule of the majority", namely:

*"When exercising state power, the majority, in the decision-making process, must also proceed from **a certain permanent (immutable) public interest (benefit),** respect the rights of the minority, taking into account its interests as well, in particular, without diminishing or depriving the minority in the future of the right to become a majority, **under which conditions the decision of the majority can be regarded as reflecting the will of the people".***

In its subsequent decisions, the Court consistently continues to strengthen the **protection of the rights of the minority** as a guarantee of the state's internal stability and the expression of the unified will of the people.

Later, in Decision DCC-1708 of 19 December 2023, it was already emphasized as follows:

*"(...) The Constituent has enshrined an **imperative requirement** that **proportional representation** of parliamentary forces must be ensured in the standing committees of the National Assembly through the proportional distribution of seats for members of standing committees among the factions of the National Assembly, as well as the positions of chairs and deputy chairs of standing committees. In the context of the regulations concerning the formation and operation of standing committees prescribed by the Constituent, the constitutional imperative is that **seats in standing committees must be distributed in proportion to the number of deputies included in the factions; therefore, the legislative regulations related to the formation of standing committees must be aimed at the practical implementation of this***

կարգավորումները պետք է ուղղված լինեն նշված սահմանադրաիրավական պահանջի գործնական ապահովմանը և պետք է մեկնաբանվեն ու կիրառվեն բացառապես վերջինիս էությանը և նպատակին համահունչ»:

Սահմանադրական դատարանի՝ այս առումով դիրքորոշումների և գործունեության վերլուծությունը ցույց է տալիս, որ Բարձր դատարանը հայաստանյան սահմանադրական համակարգում աստիճանաբար ստանձնել է համակարգային կայունարարի դեր՝ գործելով այնտեղ, որտեղ իրավական անորոշությունը կարող է վերածվել հասարակական պառակտման կամ պետականության ներքին ճգնաժամի:

Դատարանի որոշումները կարծես միավորված լինեն անտեսանելի, սակայն միևնույն ժամանակ ցայտուն մի կապով և ընդհանուր տրամաբանությամբ. կանխել իշխանության օրինականության (լեգալության) և դրա հանդեպ հասարակական վստահության (լեգիտիմության) միջև առաջացող ճեղքը՝ ներդաշնակեցնելով դրանք:

Այս իմաստով Սահմանադրական դատարանի «ճարտարապետական միջամտությունները» նպատակաուղղված են եղել ոչ թե քաղաքական գործընթացների փոխարինմանը, այլ դրանց սահմանադրական «կաղապարմանը»՝ սահմանադրական հունի մեջ պահելուն՝ ապահովելով, որ քաղաքական մրցակցությունը, մեծամասնության իշխանությունը չքայքայեն հանրային համերաշխության հիմքերը:

Դատարանը ձևավորել է այնպիսի սահմանադրաիրավական մոտեցում, որի առանցքում

constitutional-legal requirement and must be interpreted and applied exclusively in accordance with its essence and purpose”.

The analysis of the Constitutional Court’s positions and activities in this regard shows that the High Court has gradually assumed the role of a systemic stabilizer in the Armenian constitutional system, acting where legal uncertainty could entail social division or an internal crisis of statehood.

The Court’s decisions appear united by an invisible yet vivid link and common logic, i.e., preventing the gap between the lawfulness (legality) of state power and public trust (legitimacy) in it by harmonizing them.

In this sense, the Constitutional Court’s “architectural interferences” have been aimed not at replacing political processes but at their constitutional “molding”, keeping them within the constitutional route and ensuring that political competition and the rule of the majority do not erode the foundations of public cohesion.

The Court has formed a constitutional-legal approach whose core considers democracy not merely as a numerical quantitative indicator and the governance based on it (only the formal aspect of democracy)

ժողովրդավարությունը դիտարկվում է ոչ որպես թվաբանական քանակային ցուցիչ և դրա վրա հենված կառավարում (ժողովրդավարության ձևական կողմը միայն), այլ որպես վստահության, զսպվածության և փոխադարձ հանդուրժողականության և մարդու հիմնական իրավունքների վրա հիմնված գործընթաց, որում մեծամասնության կառավարումը պետք է իրականացվի փոքրամասնության իրավունքների հաշվառմամբ, այդ թվում՝ Սահմանադրական դատարանի բնորոշմամբ՝ «չվազեցնելով և չզրկելով ապագայում փոքրամասնությանը մեծամասնություն դառնալու իրավունքից»:

Սահմանադրական դատարանի երեսուն տարվա հենց այսպիսի գործունեությամբ է իրավունքը ծառայեցվել հասարակության ինքնապահպանմանն ու պետականության շարունակականությանը, ինչպես նաև որոշակիացված, անփոփոխ և մնայուն հանրային շահի ապահովմանը:

but as a process based on trust, restraint, mutual tolerance, and fundamental human rights, in which the rule of the majority must be exercised while taking into account the rights of the minority, including, as defined by the Constitutional Court, “without diminishing or depriving the minority of the right to become a majority in the future”.

It is precisely through thirty years of such activity of the Constitutional Court that the right has been placed in the service of society’s self-preservation and the continuity of statehood, as well as the assurance of a specified, immutable, and permanent public interest.








Ե. ԽՈՒՆԳԿԵՐՅԱՆ
Ա. ԴԻԼԱՆՅԱՆ



Գ. ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ
Վ. ՎԱՂԱՐՇՅԱՆ
Ա. ՋԵՅՆԱԼՅԱՆ


Ա. ԳԻԼԱՆՅԱՆ
Է. ՇԱԹԻՐՅԱՆ


Է. ՇԱԹԻՐՅԱՆ
Ս. ՍԱՖԱՐՅԱՆ




ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԻՐԱՎԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ
ԺԵՏՄԱՐԱՆ


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԻՐԱՎԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ
ԺԵՏՄԱՐԱՆ



ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

INTERNATIONAL COOPERATION OF THE CONSTITUTIONAL COURT

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Սահմանադրական դատարանն իր կազմավորման առաջին իսկ տարվանից ակտիվ ու մասնակցային մոտեցում է ցուցաբերում միջազգային համագործակցությանը և գործընկեր դատարանների, վերպետական դատարանների ու միջազգային կազմակերպությունների հետ երկխոսության ու փոխշահավետ ծրագրերի զարգացմանը:

Սահմանադրական դատարանի միջազգային գործունեության նպատակներից են սահմանադրական արդարադատության ոլորտի միջազգային մասնագիտացված կազմակերպություններում և գործընթացներում Հայաստանի Հանրապետության ներկայացվածության ապահովումը, բարեկամ և գործընկեր երկրների Սահմանադրական դատարանների հետ համագործակցության առավել ամրապնդումը, միջազգային մասնագիտացված կազմակերպությունների կողմից Սահմանադրական դատարանի դիրքորոշումների ընկալման ապահովումն ու դրանց աջակցության ցուցաբերումը:

Իր միջազգային գործունեության շրջանակներում Սահմանադրական դատարանը հյուրընկալում է խորհրդաժողովներ ու աշխատաժողովներ, որոնք միտված են կարծիքների ու լավագույն փորձի փոխանակմանը և սահմանադրական արդարադատության ոլորտին վերաբերելի արդի հիմնահարցերին: Սահմանադրական դատարանի դատավորները և աշխատակազմի ներկայացուցիչները

INTERNATIONAL COOPERATION AIMS

From the very first year of its establishment, the Constitutional Court has undertaken an active and participatory approach to international cooperation and the promotion of dialogue and implementation of mutually beneficial projects with partner courts, supranational courts, and international organizations.

The international cooperation policy of the Constitutional Court is aimed at ensuring the engagement of the Republic of Armenia in international organizations and processes in the field of constitutional justice, strengthening cooperation with the constitutional courts of friendly and partner states, presenting the positions of the Constitutional Court on the international scene, and raising the efficiency of cooperation with specialised international institutions.

Within the framework of its international cooperation policy, the Constitutional Court hosts conferences and workshops, which are aimed at exchanging views and best practices on contemporary issues in the field of constitutional justice. Moreover, the judges and the staff of the Constitutional Court frequently

հաճախակի մասնակցում են տեղական և միջազգային թեմատիկ աշխատաժողովների ու խորհրդաժողովների աշխատանքներին՝ նվիրված սահմանադրական իրավունքին:

Սահմանադրական դատարանն ակտիվորեն ներգրավված է մի շարք միջազգային ու տարածաշրջանային մասնագիտական կազմակերպությունների աշխատանքներում: Նպատակ հետապնդելով միջազգային գործընկերներին ապահովել իր որոշումների և աշխատանքների լուսաբանմամբ՝ Սահմանադրական դատարանի աշխատակազմն իրականացնում է իր դոկտրինալ և հանրային կարևորություն ներկայացնող որոշումների, ինչպես նաև մամուլի հաղորդագրությունների թարգմանություն՝ անգլերեն և ռուսերեն, որոնք հասանելի են Սահմանադրական դատարանի պաշտոնական կայքի համապատասխան բաժիններում:

participate in local and international thematic events and conferences dedicated to constitutional law.

The Constitutional Court is actively engaged in the activities of several international and regional professional organizations. The staff of the Constitutional Court also seeks an opportunity to facilitate discussion on an international level by providing English and Russian translations of its doctrinal and high public interest decisions, as well as the press releases, which are available in the relevant sections of the official website of the Constitutional Court.

ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Ֆրանկոֆոն սահմանադրական դատարանների ընկերակցություն

Հատուկ կարևորություն տալով Հայաստանի Հանրապետության ակտիվ ներգրավվածությանը Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության աշխատանքներին՝ 2021 թվականի հոկտեմբերից Սահմանադրական դատարանն անդամակցում է Ֆրանկոֆոն Սահմանադրական դարտարանների ընկերակցությանը՝ դառնալով ընկերակցության 46-րդ լիիրավ անդամը և Հարավային Կովկասի՝ սահմանադրական արդարադատություն իրականացնող առաջին մարմինը, որն անդամակցում է այս հեղինակավոր ընկերակցությանը:

Ֆրանկոֆոն Սահմանադրական դարտարանների ընկերակցությունն ստեղծվել է 1997 թվականին ֆրանկոֆոն երկրների միջև կապերի ամրապնդման նպատակով և այժմ միավորում է շուրջ 50 սահմանադրական դատարաններ և համարժեք իրավասությամբ հաստատություններ Աֆրիկայում, Եվրոպայում, Ամերիկայում և Ասիայում: Ընկերակցության նպատակն է նպաստել իրավական պետության հայեցակարգի ամրապնդմանը, խթանել ընկերակցության անդամների միջև լավագույն փորձի փոխանակումը և աջակցել մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանությանը:

MEMBERSHIP IN INTERNATIONAL ORGANIZATIONS

Association of Francophone Constitutional Courts

Attaching particular importance to the active involvement of the Republic of Armenia in the activities of the International Organization of La Francophonie, the Constitutional Court has obtained membership in the Association of Francophone Constitutional Courts since October 2021, becoming the 46th full member of the Association and the first institution administering constitutional justice in the South Caucasus to possess membership in the given prestigious association.

The Association of Francophone Constitutional Courts was established in 1997 to strengthen the ties between the Francophone countries, and as of now the Association brings together about 50 constitutional courts and equivalent institutions in Africa, Europe, America and Asia. The Association has an aim to promote the concept of the rule of law state, to contribute to the exchange of best practices among the members of the Association and to facilitate the protection of human rights and fundamental freedoms.

Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Առանձնահատուկ կարևորելով վերպետական դատարանների հետ արդյունավետ համագործակցությունը՝ Սահմանադրական դատարանը 2016 թվականից անդամակցում է ՄԻԵԴ-ի բարձր դատարանների ցանցին: Այս հարթակի աշխատանքները մեկնարկել են 2015 թվականին Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների կողմից ԵՄ Նախարարների կոմիտեում բելգիական նախագահության շրջանակներում Բրյուսելյան խորհրդաժողովի շրջանակներում ընդունված Հռչակագրի արդյունքում: Հարթակի նպատակներն են խթանել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի շուրջ երկխոսությունը և նպաստել դրա արդյունավետ կիրարկմանը, ինչպես նաև աջակցել ազգային բարձր դատարանների և ՄԻԵԴ-ի միջև կապերի զարգացմանը: Հարթակի շրջանակներում հաճախակի իրականացվում են գիտապրակտիկ միջոցառումներ ու քննարկումներ, ինչպես նաև տեղի է ունենում լավագույն եվրոպական փորձի փոխանակում:

Սահմանադրական արդարադատության համաշխարհային խորհրդաժողով

Կարևորելով համաշխարհային մակարդակում դատարանների միջև շարունակական երկխոսությունը՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դարտարանը 2011 թվականի

European Court of Human Rights

While attaching special importance to effective cooperation with the supranational courts, since 2016 the Constitutional Court has become a member of the Superior Courts Network initiated by the ECHR. The activities on this platform were launched in 2015 as a result of the Brussels Conference Declaration adopted by the member states of the Council of Europe within the framework of the Belgian Chairmanship at the Committee of Ministers of the Council of Europe. The overall aim of the platform is to enrich dialogue and the effective implementation of the European Convention on Human Rights, as well as to promote the enhancement of relations between the national high courts and the ECHR. The platform frequently hosts scientific and practical events and discussions, where the exchange of best European experience takes place.

World Conference on Constitutional Justice

While attaching specific importance to the consistent dialogue between courts at the global level, since 24 September 2011 the Constitutional Court of the Republic of Armenia has become a member of the World

սեպտեմբերի 24-ից Սահմանադրական արդարադատության համաշխարհային խորհրդաժողովի անդամ է: Այս միջազգային կազմակերպությունը միավորում է 124 սահմանադրական դատարաններ, խորհուրդներ և գերագույն դատարաններ՝ Աֆրիկայում, Ամերիկայում, Ասիայում, Ավստրալիայում /Օվկիանիայում և Եվրոպայում: Կազմակերպությունը խթանում է սահմանադրական արդարադատության իրացումը, ներառյալ սահմանադրական վերահսկողության իրականացումը, ինչպես նաև նպաստում է մարդու իրավունքների պաշտպանությանը և իրավունքի գերակայության ամրապնդմանը:

Սահմանադրական վերահսկողության մարմինների եվրասիական ընկերակցություն

1997 թվականի հոկտեմբերին Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի առաջարկությամբ հետխորհրդային տարածքում հիմնադրվեց «Նոր ժողովրդավարության երկրների սահմանադրական դատարանների կոնֆերանս» միջազգային կազմակերպությունը, որը ներկայումս կրում է «Սահմանադրական վերահսկողության մարմինների եվրասիական ընկերակցություն» անվանումը: Ընկերակցության գործունեության նպատակներն են սահմանադրական արժեքների ամրապնդման խթանումը, միջդատարանական մշտական երկխոսության ապահովումը և

Conference on Constitutional Justice. This international organization brings together 124 constitutional courts, constitutional councils and supreme courts from Africa, America, Asia, Australia/Oceania and Europe. The Organization promotes the administration of constitutional justice, including the exercise of constitutional review, as well as it contributes to the protection of human rights and strengthening of the rule of law.

Eurasian Association of Constitutional Review Bodies

In October 1997, upon the proposal of the Constitutional Court of Armenia, the international organization “Conference of Constitutional Control Organs of Countries of New Democracy” was established in the post-Soviet space, which has since been transformed into the Eurasian Association of Constitutional Review Bodies. The activities of the Association are aimed at promoting generally accepted constitutional values, maintaining a permanent dialogue, and sharing experience on the issues of ensuring the supremacy of the constitution. The bodies exercising constitutional review on the national level in

սահմանադրության գերակայության երաշխավորման հարցերի վերաբերյալ փորձի փոխանակումը: Ընկերակցության անդամ են Հայաստանի, Ռուսաստանի, Ղազախստանի, Բելառուսի, Ադրբեջանի, Ղրղզստանի, Մոնղոլիայի, Տաջիկստանի և Ուզբեկստանի սահմանադրական վերահսկողություն իրականացնող մարմինները: Ընկերակցության քարտուղարությունը հրատարակում է «Սահմանադրական արդարադատություն» միջազգային տեղեկագիրը, որի խմբագրական խորհուրդը ներառում է Ընկերակցության բոլոր անդամ մարմինների ներկայացուցիչներին:

Եվրոպական սահմանադրական դատարանների խորհրդաժողով

2000 թվականից ի վեր Սահմանադրական դատարանն անդամակցում է «Եվրոպական սահմանադրական դատարանների խորհրդաժողով» կազմակերպությանն ու եվրոպական սահմանադրական դատարանների ընտանիքի լիիրավ անդամ է: «Եվրոպական սահմանադրական դատարանների խորհրդաժողովը» հիմնադրվել է 1972 թվականին Դուբրովնիկ քաղաքում, և այսօր դրա աշխատանքներին մասնակցում են 40 սահմանադրական կամ համարժեք իրավազորությամբ ու սահմանադրական վերահսկողություն իրականացնող եվրոպական ազգային դատարաններ: Կազմակերպությունը խթանում է իր անդամների շրջանում սահմանադրական վերահսկողության

Armenia, Russia, Kazakhstan, Belarus, Azerbaijan, Kyrgyzstan, Mongolia, Tajikistan and Uzbekistan are the members of the Association. The Secretariat of the Association publishes the international bulletin "Constitutional Justice", whose editorial board is composed of representatives of all member courts of the Association.

Conference of European Constitutional Courts

Since 2000, the Constitutional Court has obtained membership of the Conference of European Constitutional Courts and is a full member of the family of European constitutional courts. The Conference of European Constitutional Courts, which was established in Dubrovnik in 1972, brings together representatives of 40 European states' national constitutional or equivalent courts conducting a constitutional review. The organization promotes the exchange of information among its members on issues relating to the methods and practice of constitutional review and provides a forum for the participants to share opinions on institutional, structural and practical problems in the areas of public law and constitutional jurisdiction.

միասնական մեթոդաբանության ամրապնդումն ու սահմանադրական արդարադատության իրականացման պրակտիկայի վերաբերյալ տեղեկատվության փոխանակումը, ինչպես նաև նպաստում է սահմանադրական արդարադատության ոլորտում ինստիտուցիոնալ, կառուցվածքային և գործնական խնդիրների վերաբերյալ կարծիքների փոխանակմանը:

Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողով

Իր միջազգային գործունեության շրջանակներում 1996 թվականին Սահմանադրական դատարանն աշխատանքային կապեր է հաստատել Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի հետ (Վենետիկի հանձնաժողով) և առ այսօր արդյունավետորեն մասնակցում է դրա Սահմանադրական արդարադատության միասնական խորհրդի աշխատանքներին: Եխ Վենետիկի հանձնաժողովի հետ համագործակցության շրջանակներում Սահմանադրական դատարանը ներկայացնում է իր որոշումների անգլերեն և ֆրանսերեն ամփոփագրերը CODICES միասնական շտեմարանում, ինչպես նաև լիազոր ներկայացուցիչների միջոցով մասնակցում է Կազմակերպության շրջանակներում իրականացվող աշխատանքներին:

Venice Commission of the Council of Europe

Within the framework of its international activities, in 1996 the Constitutional Court established working relations with the European Commission for Democracy through Law of the Council of Europe (the Venice Commission) and to this day effectively participates in the activities of its Joint Council on Constitutional Justice. In the course of cooperation with the CoE Venice Commission, the Constitutional Court submits the English and French precis of its decisions to be presented in the CODICES database, while the Liaison Officers of the Constitutional Court participate in the activities implemented under the auspices of the Commission.










and Council of Europe
Partnership
for Good Governance
#StrongerTogether
Maxime LONGANGUÉ
Deputy Head of Office, Council of Europe Yerevan Office
Մաքսիմ ԼՈՆԳԱՆԳԵ
Arman DILANYAN
Արման ԴԻԼԱՆՅԱՆ
Lilit DANEGHIAN
Լիլիթ ԴԱՆԵՂՅԱՆ




COUNCIL OF EUROPE
HUMAN RIGHTS,
DEMOCRACY AND THE RULE OF LAW


COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE
HUMAN RIGHTS,
DEMOCRACY
ND THE RULE OF LAW
DROITS DE L'HOMME,
DÉMOCRATIE


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
CONSTITUTIONA
REPUBLIC OF AR
COUNCIL OF EUROPE


14 November
2024
11:00 – 11:20
Opening Session
CONSTITUTIONAL COURT OF THE REPUBLIC OF ARMENIA
COUNCIL OF EUROPE
HUMAN RIGHTS, DEMOCRACY AND THE RULE OF LAW
DROITS DE L'HOMME DÉMOCRATIE ET ÉTAT DE DROIT


15
November
2024
Panellists:
CONSTITUTIONAL COURT OF THE REPUBLIC OF ARMENIA
COUNCIL OF EUROPE


Why it is important?
Equal and uniform application of the law ensures the generality of the law, equality before the law and legal certainty.
Risk!
The need to ensure uniform application of the law should not lead to
rigidity and unduly restrict the proper development of
nor


14 November
2024
11:20 – 11:35
Keynote Address
14 November
2024
11:20 – 11:35
Keynote Address




COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE




CONSTITUTIONAL COURT OF THE
REPUBLIC OF ARMENIA



15
November
2024
10:00 – 10:40 Panel Discussion IV:
"Constitutional Court Decisions in
the Media"
Panellists:
Ms Anna Maria Lecis Cocco Ortu
Mr Darian Pavli
Mr Vladimir Vardanyan
Ms Molly Quell


14 November
2024
11:00 – 11:20
Opening Session
CONSTITUTIONAL COURT OF THE
REPUBLIC OF ARMENIA
COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE
HUMAN RIGHTS,
DEMOCRACY
AND THE RULE OF LAW
DROITS DE L'HOMME,
DÉMOCRATIE
ET ÉTAT DE DROIT






EUROPEA
UMAN
COUR EURO


AN COURT OF H
ITS
ENNE DES
IME




INTERNATIONAL CONFERENCE
CONFERENCE INTERNATIONALE
МЕЖДУНАРОДНАЯ КОНФЕРЕНЦИЯ
Երևան, Yerevan, Erevan, Ереван


5TH CONFERENCE OF SECRETARIES GENERAL
OF CONSTITUTIONAL COURTS
OR COURTS WITH EQUIVALENT JURISDICTION
Yerevan, 13-14 April 201












BAR


27-28 тамыз
АСТАНА-2010
Кęстутис ПАЛИНСКАС


SATVERSMES
TIESA






КОНСТИТУЦИЯ КҮНІ


MERAB TURAVA
ARMAN DILANYAN














Arman DILANYAN
Serhiy HOLOVATYI
Gintaras GODA
Manana KOBAKHIDZE








INTEGRATION
MUST
PROCEED
FORTHWITH
INTEGRATION
MUST
PROCEED
FORTHWITH




EXIT



ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԵՐՈՒՆԴԸ

THE CONSTITUTIONAL COURT AND THE YOUNGER GENERATION

Սահմանադրական մշակույթի զարգացման կարևոր նախապայմաններից է երիտասարդ սերնդի մոտ Սահմանադրության, մարդու իրավունքների, իրավունքի գերակայության և այլ արժեքների նկատմամբ հետաքրքրության ու գիտելիքների ձևավորումը: Այս գիտակցմամբ՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանը մշտապես կարևորել է երիտասարդների հետ անմիջական շփումն ու մասնագիտական երկխոսությունը՝ ստեղծելով Դատարանի գործունեությանը ծանոթանալու, հարցեր բարձրացնելու և սահմանադրական արդարադատության վերաբերյալ պատկերացումները խորացնելու լայն հնարավորություններ:

Դատարանի հետ հանդիպումների մասնակիցների շրջանակը բավականին ընդգրկուն է՝ հիմնական և ավագ դպրոցների աշակերտներից մինչև տարբեր բուհերի իրավագիտության և այլ ֆակուլտետների ուսանողներ: Այդ միջոցառումների ընթացքում ներկայացվում են Սահմանադրական դատարանի առաքելությունը, լիազորությունների շրջանակը, գործունեության առանձնահատկությունները և նրա դերը Հայաստանի Հանրապետության դատական ու պետական կառավարման համակարգում:

Վերջին տարիներին այդ համագործակցությունն առավել բազմազան դրսևորումներ է ստացել: Սահմանադրական դատարան այցելել են Երևանի պետական համալսարանի, Հայաստանի ամերիկյան համալսարանի, Հայաստանում ֆրանսիական համալսարանի, Հայաստանի եվրոպական համալսարանի, Եվրասիա միջազգային համալսարանի, Հայ-ռուսական համալսարանի, «Գլաձոր» համալսարանի, ՀՀ պետական կառավարման ակադեմիայի և այլ ուսումնական հաստատությունների սովորողներ: Բարձր դատարանի հարկի տակ հյուրընկալվել են նաև ամառային դպրոցների մասնակիցներ և կրթական այլ ծրագրերի ունկնդիրներ:

2023 թվականին Սահմանադրական դատարան այցելել են նաև եվրոպական մի շարք համալսարանների ուսանողներ, որոնք Հայաստան էին ժամանել միջազգային ու ԵՄ իրավունքի և քաղաքականության արդի մարտահրավերներին նվիրված ամառային դպրոցի շրջանակներում: Հանդիպման ընթացքում քննարկվել են Հայաստանում սահմանադրական արդարադատության ինստիտուցիոնալ և մեթոդական զարգացման հիմնախնդիրները, Սահմանադրական դատարանի դերը Հայաստանի իրավական համակարգի կայացման գործում, ինչպես նաև ներպետական իրավական համակարգում միջազգային իրավական չափանիշների նշանակությունը:

Երիտասարդների հետ փորձագիտական երկխոսության կարևոր հարթակ են դարձել նաև Սահմանադրական դատարանի նախաձեռնությամբ կամ գործընկեր կազմակերպությունների հետ համագործակցությամբ իրականացվող ամառային դպրոցները: 2023 թվականի հուլիսին առաջին անգամ կազմակերպված ամառային դպրոցը նախատեսված էր Հայաստանի բուհերի իրավագիտության ֆակուլտետների բարձր կուրսերի ուսանողների համար: Դրա շրջանակում երիտասարդ

Fostering among the younger generation an interest in and knowledge of the Constitution, human rights, the rule of law, and other fundamental values is an important prerequisite for the development of constitutional culture. With this awareness, the Constitutional Court of the Republic of Armenia has consistently attached importance to direct engagement and professional dialogue with young people, creating ample opportunities for them to become acquainted with the Court's activities, raise questions, and deepen their understanding of constitutional justice.

The participants in meetings with the Court represent a broad range of age groups, from school students of primary and secondary schools to students of law and other faculties at various higher education institutions. During these events, the mission of the Constitutional Court, the scope of its powers, the specific features of its activities, and its role within the judicial and public administration systems of the Republic of Armenia are presented.

In recent years, this cooperation has taken on increasingly diverse forms. Students from Yerevan State University, the American University of Armenia, the French University in Armenia, the European University of Armenia, Eurasia International University, the Russian-Armenian University, Gladzor University, the Academy of Public Administration of the Republic of Armenia, and other educational institutions have visited the Constitutional Court. The High Court has also welcomed participants of summer schools and attendees of other educational programs.

In 2023, the Constitutional Court also welcomed students from a number of European universities who had come to Armenia to participate in a summer school devoted to contemporary challenges in international and EU law and policy. During the meeting, discussions focused on the institutional and methodological development of constitutional justice in Armenia, the role of the Constitutional Court in shaping Armenia's legal system, as well as the significance of international legal standards within the domestic legal system.

Summer schools organised at the initiative of the Constitutional Court or in cooperation with partner organisations have also become an important platform for expert dialogue with young people. The first summer school, organised in July 2023, was intended for senior students of law faculties at higher

իրավաբանների համար ստեղծվեց հնարավորություն՝ խորացնելու սահմանադրական իրավունքի վերաբերյալ գիտելիքները և անմիջականորեն հաղորդակցվելու սահմանադրական արդարադատության ոլորտի առաջատար մասնագետների հետ:

Այս նախաձեռնության շարունակությունն էր 2024 թվականին Ծաղկաձորում անցկացված ամառային դպրոցը, որի ընթացքում Սահմանադրական դատարանի դատավորներն ու այլ փորձագետներ ուսանողների համար հանդես եկան միջազգային և սահմանադրական իրավունքների հարաբերակցության, մարդու հիմնական իրավունքների պաշտպանության, իրավունքների սահմանափակման լեգիտիմության, դատական ակտիվիզմի սահմանների և սահմանադրաիրավական վեճերի վերաբերյալ դասախոսություններով: Դասախոսություններին հաջորդած քննարկումները հնարավորություն տվեցին ուսանողներին ոչ միայն ստանալ տեսական գիտելիքներ, այլև դրանք անմիջականորեն քննարկել ոլորտի մասնագետների հետ:

Դպրոցականների հետ հանդիպումները ևս առանձնահատուկ նշանակություն ունեն: Դրանք միտված են ինչպես սահմանադրական գիտելիքների տարածմանը, այնպես էլ պատանիների քաղաքացիական կայացմանն ու մասնագիտական կողմնորոշմանը:

Երիտասարդների հետ հանդիպումների այս շարունակական շղթան Սահմանադրական դատարանի՝ հասարակության հետ բաց և անմիջական հաղորդակցության մշակույթի վառ

education institutions in Armenia. It provided young legal scholars with an opportunity to deepen their knowledge of constitutional law and engage directly with leading specialists in the field of constitutional justice.

This initiative was continued in 2024 with a summer school held in Tsaghkadzor, during which Constitutional Court judges and other experts delivered lectures to students on the relationship between international and constitutional law, the protection of fundamental human rights, the legitimacy of restrictions on rights, the limits of judicial activism, and constitutional and legal disputes. The discussions that followed the lectures enabled students not only to acquire theoretical knowledge but also to engage directly with practitioners in the field in discussing these issues.

Meetings with school students are also of particular importance. They are aimed both at disseminating constitutional knowledge and at contributing to the civic development and career orientation of young people.

This continuous engagement with young people is a vivid expression of the Constitutional Court's culture

դրսևորումն է: Դատարանի 30-ամյա ճանապարհի ընթացքում երիտասարդության հետ ձևավորված այս կապը ձեռք է բերում առանձնահատուկ նշանակություն: Երիտասարդ սերունդը սահմանադրական արժեքների ապագա կրողն ու իրավական մշակույթի զարգացման կարևոր մասնակիցն է: Այդ իսկ պատճառով նրանց հետ մշտական երկխոսությունը մեծ ներդրում է այդ արժեքների փոխանցման և ամրապնդման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության սահմանադրական մշակույթի զարգացման ապահովման գործում:

of open and direct communication with society. At the same time, it represents a significant contribution to legal education, the dissemination of constitutional values, and the development of future professionals.

Over the course of the Constitutional Court's 30 years of development, the ties established with young people have acquired particular significance. The younger generation is the future bearer of constitutional values and an important participant in the development of legal culture. For this reason, maintaining a continuous dialogue with young people makes a significant contribution to transmitting and strengthening these values, as well as to fostering the development of the constitutional culture of the Republic of Armenia.


ՎԿԱՅԱԳԻՐ
























ՊԱՏԱՍԽԱՆՈՂ








AILA
FINALIST AWARD
ՀԱՎԱՍՏԱԳԻՐ


COUNCIL OF EUROPE
























ՊԱՏԱՍԽԱՆՈՂ






AIA
1-ST PLACE AWARD
AIA
BEST WRITTEN MEMORANDUM
FOR RESPONDENT AWARD



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

30

CONSTITUTIONAL COURT
OF THE REPUBLIC OF ARMENIA

Խմբագրական խորհուրդ

Խմբագրական խորհրդի նախագահ
Արման Դիլանյան
Խմբագրական խորհրդի նախագահի տեղակալ
Վլադիմիր Վարդանյան

Խմբագրական խորհրդի անդամներ

Պատասխանատու քարտուղար
Իրինա Դանիելյան
Հեղինակներ
Արման Դիլանյան
Վլադիմիր Վարդանյան
Ալինա Փխրիկյան
Արտակ Ղազարյան
Աիդա Թադևոսյան
Թարգմանիչ
Գևորգ Հովհաննիսյան
Սրբագրիչ
Անահիտ Գիլոյան
Լուսանկարների խմբագիր
Մարգարիտա Ղազարյան
Ձևավորող
Նարինե Հարությունյան
Խորհրդատուներ
Արմեն Հարությունյան
Անրի Մարության
Քրիստինե Մելքոնյան

Editorial Board

Chair of the Editorial Board
Arman Dilanyan
Deputy Chair of the Editorial Board
Vladimir Vardanyan

Members of the Editorial Board

Managing Secretary
Irina Danielyan
Authors
Arman Dilanyan
Vladimir Vardanyan
Alina Pkhrikyan
Artak Ghazaryan
Aida Tadevosyan
Translator
Gevorg Hovhannisyan
Proofreader
Anahit Giloyan
Photo Editor
Margarita Ghazaryan
Designer
Narine Harutyunyan
Cosultants
Armen Harutyunyan
Anri Marutyan
Kristine Melkonyan

ԵՐԵՎԱՆ • 2026 • YEREVAN

Գիրքը ստորագրված է տպագրության 01.10.2026թ.:
Տպագրությունը՝ օֆսեթ, թուղթը՝ կավճապատ:
Չափսը՝ 70/100:
Ծավալը՝ 16.5 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 200 օրինակ:

Տպագրվել է «Մոնոպրինտ» ՍՊԸ-ում